

այս ցուցանիշները, բնորոշ վերաբերման հասցած ժամանակը և ժամանակակից հոգեբանական կարգադրությունները հարկավոր է համարել որպես հարկադրող գործոններ, որոնք կարող են ազդել վարչական կարգի վրա և ստեղծել ինքնուրույն կարգադրություններ: Այս դեպքերում էլ կարող է ծագել հարկադրող գործոնների համակարգը:

# Բնագիր

ՀՈՎՏԵՍՐԵՐ 86

Բնագիրը չէա այս ցուցանիշները որպես և լրացնողը ժամանակակից հոգեբանական կարգադրությունները հարկավոր է համարել որպես հարկադրող գործոններ, որոնք կարող են ազդել վարչական կարգի վրա և ստեղծել ինքնուրույն կարգադրություններ: Այս դեպքերում էլ կարող է ծագել հարկադրող գործոնների համակարգը:



Հեռու կապի միջոցով կարող է իրականացվել հարկադրող գործոնների համակարգի կազմակերպումը: Այս դեպքերում էլ կարող է ծագել հարկադրող գործոնների համակարգը:

Երբ կարգադրությունները չեն կատարվում, ապա կարող է ծագել հարկադրող գործոնների համակարգը:

Երբ կարգադրությունները չեն կատարվում, ապա կարող է ծագել հարկադրող գործոնների համակարգը:


## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- 1.- \* \* \* . . . . . Գրան տարի էլաւ.
- 4.- Յ. ՄԱՆՈՒԿԵԱՆ . . . . . Գիծեր՝ Եղուարդ Պօյանեանի  
գրականութենէն
- 11.- ԵՒ. ՊՕՅԱՃԵԱՆ . . . . . Մարգը . . .
- 13.- » » . . . . . Մարգը նորէն . . .
- 15.- » » . . . . . Լինելութիւն
- 16.- » » . . . . . Տուն մը
- 31.- Է. ՍԱՐԱՃԵԱՆ . . . . . Գոլորշի
- 31.- » » . . . . . Առաստաղ միացում
- 33.- Յ. ԿԱՐԱՊԵՆՑ . . . . . Արեւադարձ
- 41.- Պ. ՀԵՐԵԱՆ . . . . . Արգանդ
- 42.- » » . . . . . Լոգանք
- 43.- Ս. ՍԱՐԳԻՍԵԱՆ . . . . . Հոգիները մերկացած  
(Թատերգութիւն 4 արար)
- 59.- ԳԱՐԵԳԻՆ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍ . . . . . Հայ գիրքը՝  
«Օճանափիւտ» հայութեան
- 66.- Լ. ՄԿՏՅՁԵԱՆ . . . . . Յովհաննէս Կոստանեան
- 71.- Ա. ՊԱԼԵՈՋԵԱՆ . . . . . Զարեհեան արձակներ՝ անգլերէնով
- 72.- » » . . . . . «Ոսպնեակ»  
(Հեղինակ՝ Յարութիւն Պերպերեան)
- 73.- Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ . . . . . Բեղուն աշխատանք
- 75.- Ս. ՏԷՐ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ . . . . . «Մռնալ չեղած ստորաբառ»
- 78.- \* \* \* . . . . . Մշակութային լույսեր

# Բարձր

## ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՎ ԱՐՈՒԵՍՏԻ

№. 80. ԲԻ 10 204800 1986 ԳԵՐԱՆԻ



### ՔՍԱՆ ՏԱՐԻ ԵՂԱԻ

Ուղիղ ֆան տարի առաջ, այս ամսոյն 13ին, հոգին յանձնուեցաւ, Համաշխարհային Եւրոպոյ պատերազմէն քիչ մը առաջ եւ քիչ մը ետք Սփիւռքի մէջ յայտնուած գրողներուն ամէնէն հետաքրքրական դէմքերէն մէկը, Երուարդ Պոյանեան: Յիսուներ հազիւ անցած էր Պոյանեան, «ուսինքն» մարդկօրէն հաշուրուած հրաժեշտի կանգրուաններէն դեռ բաւականապէս չէր հեռացած, երբ անոյ մահը գարկաւ զինք, հոգեզէնք մարմինին հետ անէացնելով ով զիտէ ֆանի՝ հատար ու գեղեցկութեան որքան մթերք:

Մուսա յերան գիւղերէն հարրբեկի շէջ ծնած էր Երուարդ Պոյանեան, նահատակ հերոսներու զգեկոյնաւ եւ հերոսական մարտերէն յոռչակուած ողջերու ամէնօրեայ մտերմութեան մէջ կազմուած հոգի մը, որ ֆանական բուսականներու գիւղական նախակրթարան մը հազիւ աւարտած՝ զրկուեցաւ Պէյրութի «Համազգային»ի ձեւարանը, որմէ

10284 877

digitised by 171-2000 A.R.A.R.©

ՅԳԳՆՈՒՄ

բաժնուեցաւ թերաւարտ: Չհաշուած քանի մը ամիսներու վրայ ֆրանսական բանակին մէջ կատարած գինուորական ծառայութիւնը եւ խմբագրական աշխատանքներու բերած մասնակցութիւնը, Պոյանեան առաջին օրէն նետուեցաւ ուսուցչական ասպարէզին մէջ եւ ուսուցիչ մնաց մինչեւ վերջին շունչ:

Ուսուցչական ասպարէզը ընդգրկելէ առաջ, սակայն, ան արդէն մուտք գործած էր գրական մարզէն ներս, եւ ուսուցիչ ըլլալէ աւելի՝ բանաստեղծ եղաւ ու գրագէտ, ընծայելով հայ գրականութեան վեց-եօթը հատոր գործ,— բանաստեղծութիւն, պատմուածք, փորձ, քննադատութիւն, իւրաքանչիւր մարզի մէջ յայտնաբերելով անտիպ երակ մը, նոր գիծ մը, նոր գոյն մը, խռովք մը, չերմութեան հոսք մը, մաքուր լեզուով մը լուսավառուած, բոլորն ալ, անշփոթելի ոճով մը:

Ազգային բախտը, ինչպէս սպասելի էր, ինչպէս վարւած են բոլոր ժողովուրդներուն բոլոր գտարիւն գրողները, գլխաւոր սեւեռակետներէն մէկն էր Պոյանեանի, գաղթականութեան ու տարագրութեան առթած կսկիծները խոր էին սրտին, հարագատ ժողովուրդը իր իրաւունքին ու արդարութեան մէջ տեսնելու բաղձանքները՝ բուռն, բայց այդ իրականութիւններուն չէին սահմանափակել իր հետաքրքրութիւնները, գիտէր անցնիլ աւելի անդին, մտածել մարդ էակին մասին, մխրճուիլ տիեզերքին մէջ, հարցաքննել արարչութիւնը եւ ազօթել կեանքի եւ մահուան առեղծուածին առջեւ:

Առանձնացած վերջի մատորումները, իր կեանքի վերջին տարիներուն մամաւանդ, աւելի զբաղուցին իր միտքը, այսինքն՝ ընդհանուրը շատ աւելի տեղ գրաւեց իր յղացումներուն մէջ, բան մասնաւորը, հայ մարդը եղաւ իր հերոսը, բայց մարդը առաւել շփոթով մը, հայ կիներ եղաւ, բայց կանայքու անտարակ, անոնց անձերը կազմող շաղախը, անոնց հարձիչ ուժերը, յարաբերութիւնները, արկածախնդրութեանց որակը, գոհողութեանց չափը, յուերժութեան ծարաւը, վախճանական ճակատագիրը:

Այս մատնաբերումները թերեւս շատերուն քիչ բան կ'ըսեն, եւ իրականութիւնը շատ անորոք չէ արդէն, որովհետեւ պոյանեանական շատին մէկ մասը դեռ ցրուած կը մնայ տարտղմուած մեր մամուլին տարտղմուած էջերուն, իսկ միւս մասը՝ բոլորովին լոյսի կարօտ: Բայց այս հանգամանքները վիատնուցիչ չեն ներկայիս, ամէնքս ալ գիտենք, կը տեսնենք, շօշափելու շափ կը գգանք, որ տպագիր թէ ձեռագիր հայ գիր-

Բը անտեսուած հարստութիւն մը չէ այսօր եւ տարակոյս չկայ, որ Պոյանեանի առիթով եւս պիտի յայտնուին առատաձեռն գրասէրներ ու գորգորոտ ձեռքեր, որոնք միասնաբար ընթերցողին պիտի յանձնեն ա՛յն, որ իրեն համար յղացուած ու գլուխ բերուած է:

Կարն ժամանակ մը առաջ, Պոյանեանի հարագատները «Համագգային»ի «Նշան Փայանեան» նեմարանի արխիւին յանձնեցին տարաբախտ գրագէտին ժառանգութեան մեծ մասը ու մաս մըն ալ դրուեցաւ խմբագրութեան տրամադրութեան տակ: Անցնող երկու-երեք տարիներուն արձակ թէ չափածոյ քանի մը կտոր ներկայացուցին ընթերցողին, ունին ներկայացնելիք ուրիշներ ալ, իսկ յաջորդող էջերուն տրուած գրութիւններէն արձակը, որ ունի գեղեցիկ սկիզբ եւ աշխոյժ ընթացք մը, յայտնապէս անաւարտ է ու կը թուի ըլլալ ընդարձակ գործի մը առաջին մասը: Անաւարտ ուրիշ գրութիւններ ալ ունի Պոյանեան, գորս լոյս պիտի ընծայենք պարբերաբար:

Պոյանեանի յիշատակը թարմացնող հետագայ էջերը կը բանակ մեծ հետաքննող գրագէտին օր մը պաշտօնակից ու բարեկամ եղած բանաստեղծ Յ. Մանուկեանի ռզեշունչ գրութեամբ:

ՅԱԿՈՐ ՄԱՆՈՒԿԵԱՆ

**ԳԻԾԵՐ՝ ԵԴՈՒԱՐԴ ՊՕՅԱՃԵԱՆԻ  
ԳՐԱԿԱՆՈՒԹԵՆԷՆ**

Սէրը եւ թախիծը, տառապանքը եւ պայքարը, իրենց փոխադարձ հա-  
կադրեցութեամբ, կը կազմեն յատկանշական դիմը Եղուարդ Պոյաճեանի  
գրական խառնուածքին:

Չգայապաշտ, այլ ըմբոստ նկարագրով գրադէտն էր Պոյաճեան, որ հա-  
կամէա էր ներկայացնելու կեանքը իր տխրաստուեր գիմագիծով: Այս  
երեւոյթը դուցէ արդէնքէն էր թէ՛ ընդոծին իր յատկութիւններուն եւ թէ՛ վաղ  
տարիքին ապրած տարագրութեան այն տխրայուշ իրադարձութեան, որ ունե-  
ցաւ բնորոշ ազդեցութիւն թէ՛ իր աշխարհահայեացքին եւ թէ՛ տաղանդին  
կազմաւորման մէջ:

Ճէպէլ Մուսայի ծննդավայրէն իր գաղթը եւ այդ գաղթով առաջացած  
հետագայ տարիներու անընական պայմանները զրկեցին զինք իր հողէն, հողի  
կենսայորդ աւելին եւ մարդկօրէն ապրելու տարրական իրաւունքէն:

Նւ կեանքի քառուղիներուն վրայ ըմբոստացաւ անիրաւութեանց եւ  
կեղծիքներու դէմ, ճշմարտութեան պատմուճանով հանդերձուած ստապա-  
տիք օրէնքներու եւ միջնէ իսկ իր սեփական անմին դէմ:

Ինք եւս, առանց կրքեք հետեւորդը ըլլալուն Ջրադաշտական  
սկզբունքներու՝ Հաւատաց լոյսի եւ խաւարի Հակադիր գոյութեանց, բարու-  
թեան եւ շարի ներհակ դոյակերպութեանց եւ տազնապեցաւ այս գոյգ ծայրա-  
բեւեռներու ձգողականութեանց ներքեւ դրսեւորելով տեսալէս տխուր եւ  
տարացիւնս Աւետարանի պէս, Պոյաճեան եւս տազնապեցաւ լոյսի անեղբայրական  
խորհուրդով եւ ցանկաց, որ խաւարակոծ ամէն թախիծ ենթարկուի լոյսի հա-  
մայնասփիւռ տիրակալութեան:

Մտադաշտ ասրիքին, դարձաւ նուիրեալը սիրոյ իմացութեան, բայց սիրոյ  
մէջ ուս նկատեց Հակադիր ներդործութիւնը տառապանքին: Նւ արդարեւ,  
«Սէր» եւ «Վիշտ» որակութիւնով լծորդելով այս գոյգ զգայութիւնները՝ թո-  
րացուց այն համոզումը, թէ վիշտը աւել սուսանակն է սիրոյ նեւթին գորու-  
թեան:

Ահա թէ ինչու գերագոյն միտի մը աւազնալուր ձայնին մէկ արձա-  
գանդը համարեց իր երգը եւ այդ վշտահունչ ձայնով որոնեց «աստղային» եւ  
«աստղածաւալ» իր սէրը, զոր կենսադործելու համար նոյնացաւ «փոթորիկ-  
ներուն մեծամտայլ ոգիին» եւ Հաւատաց, թէ անոնց ոգեխոյս կիրքով միայն  
կրնայ վերստեղծել սէրը, աստուածարեալ իր բովանդակ վիշտիւթեամբ, եւ՝

Շարժել անշարժութիւնը, տեղափոխել, մղել, համնլ, շրջել, փանդել  
Ու վերստեղծել ամէն բան, հոգի, երեսոյթ, ըմբանում:1

Այս յանդգնութեամբ ան կասկեցաւ կեանքի տարերքին եւ զայն սիրեց  
ի՛ր իսկ հոգեղէն բնութեան իրձեւ սնուցիչ մէկ յատկութիւնը, իբրեւ «հաշիշն  
ու վէրքը», ա՛յն համոզումով, թէ սիրոյ ծննդապա՛հը պիտի արարուէր նե-  
րայայտ աշկոճումներու միջնորոտին մէջ, յայտնապէս՝

Ապաստած բազում բանաստեղծներու ներքին տենդոտ  
Կլիմաներու, հրաքաւալումի եւ դժոխքի՝ մէջ:2

Եւ մոլեռանդ ա՛յս խառնուածքով հաւատաց, թէ պիտի ծնէր սէրը,  
միանձնանար եւ ճակատագրուէ՛ր իր գոյութեան եւ թէ ինք պիտի հասնէր՝

Աստուածային ծայրագագաթ վերածումներու

Եւ կեանքի կատարելութեան [ոյսի՝՛ն...3

Եւ բացուէր այն խորհուրդներուն, որոնք իրենց տիեզերական հանգի-  
տութեամբ՝՝ դուրս կը մնան ժամանակի եւ կեանքի պայմանագրական սահ-  
մանումներէն:

Վիշտը երբեւիցէ լզարձաւ դամբանախօսը Պոյանեանի ստեղծագործ  
ոգեւորութեան եւ լուսարարձ սեւեռումներուն, այլ հանդիսացաւ զգայա-  
պաշտ իր սիրանքները շնչուորող գործոն յարակցութիւն մը:

Աւելի՛ն. ա՛ն համարեց վիշտը իբրեւ համարնոյթ զոյակերպը սիրոյ  
իմաստութեան: Եւ այս յղացքով արժեւորեց մա՛հը՝ կեանքի ընթացքը ներդաշ-  
նակող իբրեւ երեսոյթ եւ գրուատեց վիշտը, այդ ընթացքը հունակորող իբրեւ  
բարերար յայտանդործում:

Ըստ իրեն, մահէն առաջ թէ՛ հոք, լոյսն ու բանաստեղծութիւնը շարու-  
նակութիւնն են կեանքի յաւերժական երազին, եւ սէրը անհանդրուան ուղե-  
գիծն է՝ համամարդկային գոյութեան:

Ահա թէ ինչու Պոյանեան անցնուց իր մէջ աստուածացնող, ահեղ եւ  
հզօր սէր մը. «Մեզ անհունն ի վեր աստուածակերպելու ուրիշ եղանակ  
չունի» կը գրէ ա՛ն եւ կը յարէ. «Պիտի կերտէ մեզ՝ փանդելով՝: Պիտի ծառա-  
գայթառել՝ կուրցնելով մեր աչքը: Պիտի կշտացնէ՝ անվախեան ծոմա-  
պահուրեամբ մը: Անօրութեմէ անօրութիւն նետելով մեր սիրտը, ծարաւէ  
ծարաւ ընկղմելով մեր հոգին: Կարն. ոչնչացնելով մեզ շարուճակ՝ պիտի  
կատարելագործէ մեր անձին կրակը, պիտի յաւերժագործէ մեր էութեան  
գերագոյն լոյսը»:4

Այս հաւատքով, վերացապաշտ ա՛յս ձգտումով եւ ներքին ճենճերում-  
ներու անձնատուր այս անձնամոռ գիտակցութեամբ, Պոյանեան փառաւորեց  
սէրը եւ ներրողեց վիշտը, ա՛յն համոզումով, թէ մարդու էութեան եւ անոր  
կենցաղական յատկանիշներուն քանդումով միայն կը սրբադործուի ծննդա-  
պա՛հը տառապանքով եւ պայքարով նախադրուած ճշմարիտ ստեղծագործու-  
թեան:

Ո՛չ միայն սիրոյ, այլեւ հասարակական մարզերու մէջ եւս Պոյանեան  
տաղնապեցաւ յանուն ճշմարտութեան, յանուն լոյսի եւ լուսեղէն գեղեցկու-  
թիւններու յայտանդործման: Անդրգրուելի տրտնջացող մը եղաւ ինք, երբ  
առօրեայ իր վազքին մէջ, տեսաւ վատթարացումը բարքերու, բարեմիտ զգա-  
ցողութեանց եւ մարդկային վսեմ առաքինութիւններու:

Կեանքի այս ժխտական երևոյթներուն հանդէպ իր դժգոհանքը յառա-  
ջացաւ այն գերադոյն ցանկութենէն, որով տենչաց տեսնել աշխարհը արարչա-  
կան իր դիմապատկերով, բարութեամբ եւ բանաստեղծութեամբ զեղուն նկա-  
րագրային իր բարեյատկութեամբ: Սակայն չկրցաւ զտնել նմանութեան եղ-  
բեր իր նախասիրութեանց եւ աշխարհի շոր տրամաբանութեան եւ անոր կեն-  
սարաշխական այլանդակ պայմաններուն միջեւ:

Դժգոհեցաւ մարդոց գէմ թէ՛ իրրեւ զաւակ ու եղբայր, թէ՛ իրրեւ ուսուցիչ ու գրող, եւ թէ, մանաւանդ, իրրեւ մարդ եւ իր դառնութիւնը գրեւորեց չեսուհայ հարցադրումով:

«Չարութեան գոյութիւնը գայրացուցած է զիս պզտիկուց: Հարուստ իմացականութիւն մը եւ ձոխ, անպատ քնութիւն մը ինչո՞ւ ա՛յս կեանքը ստեղծէին եւ ոչ աւելի լաւ կեանք մը»:<sup>5</sup>

Պոյանեան գիտէ՛ր սակայն, թէ իր ցանկացած «լաւ կեանքը» չէր կրնար վերածուիլ շօշափելի իրականութեան՝ հեզաստ եւ դիւրամտելի եղանակով մը պարզապէս:

Գիտէ՛ր, թէ այդ կեանքը պիտի գար յեղաշրջման տազնապայի վիճակներով, բարեշրջման անսպթաք օրէնդրութեամբ, յոյսով եւ տքնութեամբ, արիւնով եւ պայքարով:

Ըստ Պոյանեանի, կեանքի հիմնական կշռաբարը Յաւն է՝ իր մեծագիւր վերտառութեամբ, զոր հակակշիռն է համար հարկ է մաքառիլ՝ կամքի անբեկանելի զօրութեամբ:

Թէ՛ ցաւը բնական դրսեւորումն է բնութեան եւ տիեզերական երևոյթներու, ինչպէս նաեւ մարդ անհատի ներաշխարհին մէջ կատարուող գոյամարտութեանց՝ ընդմէջ ընդդիմադարձ զօրութիւններու:

Պոյանեան կը խոստովանի, թէ իրրեւ մարդ, ի՛նչ եւս ենթակայ է ներհակ գոյակցութիւններով ստեղծուած բարդ կացութիւններու, որոնք, տարօրէն ներշնչուելով իրենց բնոյթով՝ կը բնորոշեն իր սեփական խառնուածքը:

Ըստ իրեն, կեանքի բոլոր մարդկրուն մէջ, ազգային թէ՛ ընդհանրական, զբաղանք թէ՛ գաղափարաբանական հարցերով մտահոգ թէ՛ իրրեւ զբաղէտ եւ թէ՛ իրրեւ մարդ, եղած է ան տիպար մարմնացումը խոտոր ըմբռնումներու եւ խոտոր չափանիշներու:

Թէ՛ կեանքին հետ իր զգացական կապերը երբեւիցէ չեն կրցած յանդիւար գիւնակաւ իրազօրծումներու:

Թէ՛ եղած է իտէլայապաշտ ու գործնապէս ամուլ, ներքնապէս կրակոտ, բայց արտաքնապէս վատ հաղորդականութիւն մը: Թէ՛ իր «մարմինը չէր եկած հոգիին օժանդակելու կեանքին մէջ. եկած էր կարծես հակասելու զայն, հերքելու, զինարափ ընելու: Լրացուցիչ մը չէր մարմինը, թշնամի մըն էր, ահաւոր թակարդ մը»:<sup>6</sup>

Եւ այս ծայրայեղ ներհակումներուն պատճառաւ, Պոյանեան դարձած է ցաւի եւ տառապանքի հողովայր մը, պառակտուած թէ՛ հողիով եւ թէ՛ մարմնով եւ չէ կրցած տպահովել գործնական ո՛չ մէկ յաջողութիւն, իր բարոյական պարտաւորութեանց մէջ թերանալով ընտանիքին, շրջապատին եւ միեւնոյն ինկ բազում նուիրականութեանց հանդէպ:

Պոստովանելով հանդերձ իր բոլոր մեղքերը, իրենց մարդկային տեսակատար ստորդելիներով, Պոյանեան կը հաւատայ, թէ ոեւէ անհատ, հակառակ իր միտանքան յատկութիւններուն՝ կրնայ սրբազործուիլ եւ արդարանալ՝ շնորհիւ ցաւի հողէնորոգ ներդրութեան:

Արդարեւ, անձնականացնելով ցաւը եւ զայն կրելով միեւնոյն իր ողն ու ծուծը՝ ան կը զգայ, թէ մաքրագործած է իր անձը հողեկան եւ մարմնական պառակտիչ յատկանիշներէ, իր տառապանքէն շօշափելի կանխադու մար մը վճարելով կեանքին եւ մարդկային ընկերութեան, վճարելով «հալածանք, նուաստութիւն, ազօթք, արի՛ւն», իրրեւ բարոյական փրկազին:

Թէ՛ ո՛չ միայն իրրեւ մարդ մեղանշական իր կեանքին համար տառապանք վճարած է ան, այլեւ՝ իրրեւ հայր, իր «անասնական հանգրձի արա՛րքը» նաեւ տեսչապաշտ յանձնառութեամբ մը քաւած ըլլալու դո՛ւրանակութեամբ՝ զինուորազօրեց իր երկու զուակները մշակութային արժէքներու, իրրեւ հօրե-



նական ժառանգութիւն՝ պարզապէս փոխանցելով անոնց զրկանքն ու զոհո-  
ղութիւնը, ցաւն ու պայքարը:

Հաւատարմով, թէ նիւթական ամէն ժառանգութիւն կը ծառայէ մակա-  
բոյժներ բոլոր ծանկու խախտիչ աշխատանքին՝ ցանկաց կտակել իր գաւազնե-  
րուն զոհողութեան ոգին եւ ձգել զանոնք անսուազ ու կիսամերկ, որպէսզի  
յառաջացնէր անոնց մէջ զայրոյթի զրգիւ մը իրեն դէմ:

Ակնարկելով պատանութեան տխուր տարիներուն, ծնողքին եւ ազգին  
վերազրկելով նաեւ այդ տարիներէն անդրադարձուած նիւթապէս իր անժա-  
ռանգ գոյամիճակը՝ Պոյաճեան կ'ըսէ իր գաւազներուն.

«Հայրս, որ կ'այլրի երբ այս տողերը կը գրեմ, եւ ազգս, որ, հաւա-  
տացէք, միշտ պիտի օպրի, միւսական հարստութեան փոխարէն, իմաս-  
տութիւնը ունեցան բարկութիւն մը գրգռելու մէջս իրենց դէմ»:

*Եւ կը յորէ:*

«Զրկեցիմ զիս դիրութեանէ, ապահովութեանէ, կարգ մը այլասերող  
յարդոյթիւններէ: Մնացի անօթի, անէր, վայրագ եւ կատաղի: Ու ձեզմէ  
առաջ ես հայր եղայ բարկութեան անհամար կայծակներու: Ամուսնացայ  
խռովի ամպին հետ, եւ իմաստն ու բանաստեղծութիւնը հեղեղի մը  
առատութեամբ ոռոգեցիմ էութիւնս: Նիւթական անժառանգութեամբս՝  
հայկական ողնայարին իմաստութիւնը սորվեցայ ապրելու համար:  
Կեանքիմ մէջ ու կեանքիմ սրիկայութեանց դէմ ամուր ողնայար մը՝  
բարձրագոյն կրօնգնեքէն մէկն է արդէն: Պայքարի, տոկայ, անիլ, տեսա-  
բար դէպի արեւը ելլեալ, դէպի ճշմարտութիւնը— ա՛յս է յաղթանակը»:<sup>7</sup>

Ա՛յս վճռակամութեամբ ցանկաց իմաստաւորել կեանքը՝ զրկանքի եւ  
պայքարի ստորոգելիներով եւ դիմազրուել ցաւը՝ լուսարագձ մարդու մտա-  
տեսութեամբ:

Ա՛յս դիտաւորութեամբ ցանկաց նաեւ, որ գաւազներ զայրանան իրենց  
ծնողներուն դէմ, որպէսզի կարենան սեփական ցաւով եւ տքնութեամբ զե-  
րոյէն սկսիլ իրենց կեանքը:

Ըստ Պոյաճեանի, ծնողներու եւ անցեալի դէմ արձակուած զայրոյթն է,  
որ աճելով եւ խորանայով ժամանակի հետ՝ կը ստանայ լուրջ եւ ներհուն հան-  
գամանք եւ կ'ընձեռնէ կենսատարբերը օտեղծագործ առաքելութեան...

Գոյութեանական ի՛ր համոզումով, անզրիագործ մըն է ցաւը, որ կը  
կրանէ եւ կը կերտէ մարդոց մէջ անհատական եւ գորեզ նկարագիր մը: Այս-  
պէս, կ'ի՛նք ժպիտին թողած հետքը բոսկական գիծ մըն է կաւիճով ուրուազը՝  
«ած՝ ցաւի պարագան նման է, սակայն, չքեղ քանդակագործութեան, որ մար-  
դոց կեանքին ու սրտին վրայ կը թողու մուրճի խոր եւ խորագոյաց հարուած-  
ներ:

Պոյաճեան համամիտ չէր, սակայն, որ գաւազնեք ցաւամոլ եւ քմահաճ  
տրամազրութեամբ մը յանձնուիլը ցաւին յարուցած դժուարութիւններուն:  
Որովհետեւ, ալբոյամոլութեան նման, այստաղին երեւոյթ մըն է ցաւը, որ փո-  
խանակ նորոգելու՝ երբեմն կը նուաստացնէ մեզ հոգեպէս:

Ան կը թելադրէր, որ բնդունինք ցաւը իրրեւ մեր գանհրաժեշտ ոտիւրջ,  
որպէսզի ճակատամարտ մզներ անոր դէմ եւ յաղթահարե՛նք զայն: «Վասնզի  
մարդ մը ճակատամարտ ըսել է. գորութիւն ստեղծող եւ կիրարկող էակ:  
Կ'ըսենք հոգի, պէտք էր ըսէինք թերեւս նախնայան ուժ, կոխ մզելու եւ  
յաղթելու ետանդ»՝ կ'ըսէ Պոյաճեան ու կը հաստատէ, թէ կրուելով ցաւի դէմ՝  
պիտի նուաճե՛նք եւ վերածենք զայն «յաղթանակի պայծառաթերթ ծաղիկի  
մը», հոգեփոփոխե՛նք եւ արարչագործուի՛նք էապէս, ներգործէն ցնծուն  
չքերթի մը փոխակերպելով մեր կեանքը:

Պոյանեան կը հաստատէր նաեւ, թէ Աստուած ո՛չ թէ տկար ըլլալուն ճակատամարտ մղեց քառսի դէմ, որպէսզի լոյսը արարէր, եւ մղեց կուի ցեխի դէմ, որպէսզի մարդը ստեղծէր, այլ իր իսկ անձին եւ արարչագործ տառապանքին վկայութեամբ կ'ուզէր ըլլալ նախատիպար այն ուղեցոյցը, որուն հետեւողութեամբ Հարկ է կոուի՛լ ցաւի դէմ եւ զայն օգտագործել իրրեւ նախանիւթը մեր ստեղծագործ յղացումներուն:

Յաւի նկատմամբ իր կատարած բնորոշումները Պոյանեան չի սահմանափակեր լոկ տեսական ճշմարտութեամբ, այլ կը տարածէ զանոնք գործնական այլ մարզերու մէջ եւս, յայտնելով, թէ շնորհիւ աշխատանքի կարելի է վերածել նուագազոյն տարողութեան մինչեւ իսկ մահուան անդունջները:

Այս յղացումով, Պոյանեանի կենսախոհական ասորումներուն մէջ, կեանքի եւ մահուան յաշտեանական հակադրութիւնը երբեւեցէ չէ ներկայացուած այնքան իրապաշտ հարազատութեամբ, որքան «Ճնրեկը, որ ուրախ չէր» պատմուածքով, ուր կը նկարագրուի գիւղի ծերունագարգ քահանային՝ Տէր Յարութիւնի թաղումը:

Ուշագրաւը այն իրողութիւնն է, թէ Պոյանեան, նոյն ատիթով ու Հպանցիկ պատկերացումով մը անդրադառնալէ ետք շիրմային խոհերով աւելած գիւղի ընդհանուր մթնոլորտին՝ կը հակադրէ զայն հողերու «Լուսաւորիչ» Տրդատ էմմիի տիպարին հետ կապուած յատկանշական գրուադի մը:

Եւ փոխանակ ծանրանալու հանգուցեալ քահանային թաղմանական արարողութեան վրայ, իրրեւ պատմուածքին գլխաւոր թեման, Պոյանեան կը յայտնէ, թէ Տրդատ էմմիին գիւղական տիւրը մթնոլորտէն բացառուած այն անձն է, որ շուզելով մասնակցել օրուան սուգին՝ կը շարունակէ իր հանապազօրեայ աշխատանքը խոպան հողակտորի մը մէջ, գերմանական ծանր փետատով հսկայ գունտեր հանելով կոշտացած անոր կուրծքէն:

Ուշագրաւ է նաեւ, որ Տրդատ էմմիին կը ստանձնէ իր արարքին ամբողջական պատասխանատուութիւնը ներքին համոզումէ մը թելագրուած գիտակցութեամբ եւ թէ գիւղացի կարգ մը երիտասարդներու գիտողութեան արժանացած իր ոչ-աւանդապահ վերաբերումը կ'արգարացնէ հետեւեալ բանաձեւով:

«— Ոչ ոք կրնայ Տէր Յարութիւնը սիրել ինծի չափ. ես ոգրալու համար չեմ լար, չեմ աղօթել. կ'աշխատեմ: Եթէ չաշխատեմ, կրնայ ըլլալ որ ես ալ մեռնիմ»:<sup>9</sup>

Արդարեւ, Հակադրութիւններ ստեղծող գրազէտն է Պոյանեան, որ կը սիրէ ներհակել շրջապատի մեռելային հանդիսութիւնը՝ գոյատեւման հաւատքով:

Վկայ՝ Տրդատ էմմին, որ անտեսելով համատարած սուգն ու արցունքը, անտեսելով Տէր Յարութիւնի թաղումը եւ անոր վերջնական հանգիստը՝ «վեց թաղերու իշխող ցուրտ բարձունքի մը վրայ, ցուրտ քարերուն մէջմուկ», կը փնտռէ իր կեանքի գոյութեանական իմաստը՝ աշխատանքի եւ հողի կենսաբար տառապանքին մէջ:

Պոյանեան իր տիպարին՝ Տրդատ էմմիի միջոցաւ կը պարզէ այն ճշմարտութիւնը, թէ կեանքը հոմանիշն է օրհնարներ աշխատանքի, փետատի, կացիների եւ «վայրենի հողերուն դէմ կոխ»ի. թէ՛ միայն աշխատանքով կարելի է զօրանալ եւ գիմակայել տարապայման ամէն տիւրութիւն՝ այր մարդու շարքա բնայատկութեամբ եւ զայն վերափոխել անդրլիբիմեան յաւերժական երջանկութեան:

Արդարեւ, եթէ Պոյանեան Տրդատ էմմիի կերպարին ընդմէջէն գործնական հանգիստութեամբ մը կը դրսեւորէր աշխատանքի կենսախոհ իմաստութիւնը, «Ատրախառքիմ դաշտամուկը» պատմուածքով ան կը զարգացնէր

զոյստեւեման պայքարի հետ յարակցութեան նայն ժամանակուսը, Անպակտութի  
իրկուսն ճը, Պէքտայի սարահարկին վրայ, կեանքի անապահովութեան եւ  
անօթութեան դէմ պայքարի՝ եղան անօթի եւ վայրազ պաշտամուկի ճը կեն-  
դանական բնազդին ընդմէջէն:

Սոյն պատմութեան Պոյսեան կը հաստատէր, թէ սարահարկի գալ-  
ամուսկը ստեղծութեան էր իր կամքէն անկախ եւ եկան աշխարհ՝ իրքեւ «Անպա-  
տութեանն նետուս կեանքի կտոր»։ Թէ՛ ա՛յս նահատակարով, անկախ պիտի  
ապրէր եւ ապրելու համար՝ պիտի ծարսանչէր չըջապատի թէ՛ բնութեան, հազի-  
զէն եւ թէ երկնային հակադէր գորութիւններուն դէմ՝ «Իր անասկին պահպա-  
նութեանը համար»:

Այս էր կեանքի պերպոյն հրամայականը, զոր ան պիտի գործադրէր  
ժարդոց եւ անասուններու վերապահութեան ստիպարաց կիրքով եւ զամանու-  
թեամբ: Պիտի նետուսէր գտանկուսը պիտեմանեղութիւններու մէջ եւ պայ-  
քարէ՛ր օտակուս եւ ապրելու՛ն համար:

Այս հրամայականով կը գործէր տղէն Պէքտայի այդ գործ եւ յարաւարժ  
զաշտամուսկը, որ զարմանայի փոքրով ճը կը կրծէր եւ կ'ուսէր իր գոյութիւնը  
երաշխատարոջ սրելէ աննշանութիւն, սրելէ միջուս կամ ստակամ գորտ, կենսապիտ  
գորութեամբ ճը իր գեանաբար ընտկարանը ստեղծով մինչեւ իսկ իտպանի  
հաստ սրմաստ ճը:

Այս հրամայականով էր, որ անկախ գործած էր կեանքին ուզուած  
ստպրելու հրքոտ սոչարտութիւն ճըս եւ նպատակաւոյ այս ստաշտարան-  
քով, երբեւոյն ուչը չէր գործներ պինջ սահանական կորստեան ստաշտարոջ  
այնան ըստովով իրկուսներու եւ հետապոյս պիտեղութիւններու հետա-  
գըրգիս, այլ իստարիչ պատարաններուն...:

Այս հրամայականով էր, որ անկախ կը կրէր իր ժողովին սակ ճահարկու  
զամանութեանց թաղակիրքը հանդիսացոյ պինջ հաշտոյց թլեամբին՝ հա-  
տուի՛ միտը: Եւ թէպէտ բնութիւնը զայն ստեղծած էր ճանը, քայց իր ճանրու-  
կազմ էութեանին իսկ՝ զարմած էր զաշտոյց ստարմակի ճը սեւ կորիզը, զբա-  
նարկով ստակուս եւ ապրելու ջղազրգիս, աննշանին եւ անապահովանը  
ճը: Անօթութեան իտհարգանքին էր անկախ, որ ի ինքզի գոյստեւեման՝ պատ-  
րաստ էր ճարմաստպիտ հերոսացոյ սրելն արտաք եւ կրծելու մինչեւ իսկ  
երկրագունտի ոչ ճակերեւոյթը:

Սոյն պատմութեան Պոյսեան կ'անդրադարձանայ նաեւ կեանքի եւ  
ճանուան, յաղթանակի եւ պարտութեան, բարութեան եւ չարի հակարեւոյթի  
երեւոյթներուն, ընդգծելով, թէ զաշտամուկի անմիջական չըջապատն  
գորտ, կեանքը եմբակոյ է Զարին սիրակալութեան եւ թլեամական համա-  
տարած արտաքներու: Թէ՛ սարահարկի գալամուսկը, յանկոյն պարտապինն,  
սրակ կամ անխուսիտ ընկնացէի ճը հետեւանքով, կրծար ո՛րտը գտանայ իրմէ  
ստակուս գորիչ եւ ստակուս վայրազ անասունի ճը, անի ճը եւ կատուի՛ ճը կատ-  
զան անօթութեան եւ կատուան բնազդին:

Ահա թէ ինչու Պէքտայի այդ նկուն, հարպիկ եւ չըխ հարեաց գաշտա-  
մուսկը չէր հետանար իր թաղանցին սահանակակ չըջապատն, «Իր սաղահա-  
զութեան սահանաները» նկատելով «Պայի Թայր ճը, զիկի Թայր ճը, սարերու եւ  
ակունքի Թայրեր», որոնց հետազոյց կանխազտութեամբ պիտի կը պահէր  
քննարկը հասանական ամէն գործութեանն եւ ամէն գտանուէ:

Աւելի՛ն. գոյստեւեման իր ստարեաց պայքարով, զաշտամուկը կերտած  
էր տղէն ինքնակար եւ անկախ գոյստեւեմակ ճը, ստար աշխարհին անդրադար-  
ճը. ան իր ստակուս գտնին վրայ եւ այս կրտալութեամբ ան կը ճնար զգու-  
շաւար կզար գոյստեւեմաններու դիմաց, իսկ ստարներու հանդէպ կը ջուշտարեր  
անտարժ գերարերում:

Դաշտամուկի մը օրինակով, Պոյանեան կը ձգտէր իրխանցել նեցչէական մտածումով հանգանակուած այն ըմբռնումը, թէ ապրելու համար հարկ է ունենալ տեսիլք եւ նուաճել ցաւի ջլատիչ ներդործութիւնը՝ կենսապաշտ ապրումով՝ ձերբազատուիլ վերացական ձգտումներէ եւ խորաթափանց գիտութեամբ մը բացուիլ կեանքի երկնաշող տարածութիւններուն, լուսաւոր թէ ստուերոտ իրականութեան:

Սիրելի ազատութիւնը՝ իրրեւ գերազանց ճշմարտութիւն, եւ օրելի Տառապանքը՝ իրրեւ սնուցիչ զօրութիւն, որ հրաշխր շրջապայութեան մը վերածելով մեր կամքը՝ պիտի գօտեպնդէ, ջրդեղէ մեզ եւ վերակերտէ մեր անձին մէջ Մարդը՝ գերմարդկային հրաշագոր ստորոգէլիներով:

Սոյն պատմութեան մասին, պայքարի եւ դոյստեւման մասին գերիրապաշտական իր ըմբռնումները կ'հզարափակէ Պոյանեան, սարահարթի գաշտամուկին վերադարձած հետեւեալ մտածումով. «— Թող ասիլէ ետք անհատներն ու ազգերը իրենց մտքով տակ աւելի՛ գորաւոր բան մը կրեն, բան որ կրած են դարերու դժբախտութեան մէջ. թող հաւատարի իրենց մկանին գորաւորիւնը, թող իւրացնեն թշնամիի՛ն մկանը, թշնամիի՛ն շիղը, թշնամիի՛ն բարկութիւնը: Եւ թող անոնց քիթին ծայրը՝ հեռաւոր հոտառութիւններն ու ճարտարութիւնը գամ ու միասին բնակին»:<sup>10</sup>

Արդարեւ, գոյստեւման ա՛յս ուղիով եւ ա՛յս հաւատքով Պոյանեան նուիրազորձե՛ց տառապանքը եւ զայն դարձուց արձակ թէ չափանոյ իր սեւեւումներուն կեդրոնաձիգ եւ տիրական յատկանիչը:

Եւ հաւատաց, թէ հակառակ վանողական բնոյթին եւ քայքայիչ հակազդեցութեան՝ բացասական երեւոյթ մը չէ տառապանքը, այլ՝ ծննդապաւն է ցայղալուսային երկունքով դոյսակցուած հզօր սէրերու, վեհ իմացումներու եւ ճշմարտութեան գեղահարալ լոյսին...

Պոյանեան երկնեց ա՛յս գիտակցութեամբ եւ իր գրականութիւնը արդասիքն է գոյսպաշտական ա՛յս ըմբռնումին...

ՅԱԿՈԲ ՄԱՆՈՒԿԵԱՆ

ԹԳՏԱԳՈՐԾՈՒԱԾ ԱՂԲԻՒՐՆԵՐ

- 1— Եղուարդ Պոյանեան, «Սէր եւ վիշտ», տպարան «Յոյս», 1945, Պէյրուս, էջ 65
- 2— Նոյն, էջ 67
- 3— Նոյն, էջ 66
- 4— Եղուարդ Պոյանեան, «Թուղք գաւակներուս», տպարան «Աւալաս», 1960, Պէյրուս, էջ 19-20
- 5— Նոյն, էջ 99
- 6— Նոյն, էջ 43
- 7— Նոյն, էջ 14-15
- 8— Նոյն, էջ 49
- 9— Եղուարդ Պոյանեան, «Երկեր», Ա. Հատոր, «Տոմար տարագրի», Մատենադար «Համազգային», 1972, Պէյրուս, էջ 265:
- 10— Նոյն, էջ 162

ԵՂ. ՊՕՅԱՃԵԱՆ

ՄԱՐԴԸ...

Ձեմ ուզեր ապրիլ  
 Ուզեղով հիւսուած աստուածներու մէջ,  
 Ու մարդերու մէջ, որոնց զանկերն են մտքի պահածոյ,  
 Թունդ ազով ազուած,  
 Եւ սակայն կրկին, հինցած, աւրուած...

Ձեմ ուզեր ապրիլ, վստահիլ ես գիս՝  
 Հոգի չբուրող, այլ ուզեղի հոտ միայն արձակող սառած գիր-  
 ֆերու.

Ձեմ ուզեր ապրիլ՝  
 Ուզեղին զրկած չոր նպաստներով,  
 Ձիւնի պազուօթեամբ իր բարեւներով:

Հոգւոյ բերնին մէջ՝  
 Ուզեղը շատոնց հաց է կորեկի,  
 Վիթամին անհամ  
 Եւ հեղուկ լեղի...

Վնիտ աստուծոյն, պայծառ դիպուածին,  
 Լոյսի պէս ներմակ, լոյսի պէս շոգուն բնատեսութեան՝

Չկայ այլ ոտիս,  
Գան միտքը հաշուող, միտքը բուարան:

Փշրել ես կ'ուզեմ մտքին պատկանող  
Ամէն ձեւ պնակ-  
Դէմ եմ ուղեղին,  
Կեանքին մէջ բացած բիր բշտառութեան իր խոռոչներուն-  
Փշրել ես կ'ուզեմ զիս բան մը տանջող, բան մը անյատակ---

~\*~

Ոչ ոք դեռ գիտէ որչափ կրեցի  
Ես մտքբխ վրայ, ոսկորներու մէջ,  
Ու խորը սրտիս՝  
Իմաստուն խոհի երկար ծանրութիւն,  
Աւագ ու ազիւս:  
Ոչ ոք դեռ գիտէ  
Հետու օրերէ, մանկութեան օրէ,  
Աչքերու դիմաց ու փոխան աչքի՝  
Որչափ ես դրի  
Աստուած մը փնտռող շքեղ ապակի:  
Ես ինչպէ՞ս եղայ, արդէն ո՞վ գիտէ որչափ լայն աման  
Ջիւնջ խղճմանս:

Ես-ի եւ Դուն-ի եւ Անծանօթ-ի  
Ազնուի կայ անվերջ, ականջ խուլցնող  
Եւ ձախողցնող՝  
Նուագ ու արձան,  
Գիրքեր ու պատկեր,  
Շքեղ ամէն բան...

Ա՛յ ես-կ'անեմ  
Մօտիկ բռնող, այլեւ անդէմ՝  
Բռակր բազում,  
Որոնք հետու կը նետեն զիս երկրագունտէն եւ իր շուէէն  
Անգառունի կու տան յուզում,  
Գաղտնի վիշակը,  
Գաղտնի ցատում---

## ՄԱՐԴԸ ՆՈՐԷՆ...

Մերք համբայ եմ երկար, յոգնեցնող, փնացնող ու հեռու՝  
 Ես այլևս մինչև ինձ, աղանջես ու ճայնէս մինչև ինձ,  
 Ուղեղես ու սրտես մինչև ինձ-  
 Համբայ եմ ասի մը տեղ,  
 Եւ սակայն երբեմն անվայթեան եւ տեղ...

Ես՝ այսպէս օրեք կան, համբայ եմ անհնար,  
 Ինձմէ ինձ երկարող,  
 Ոլորտող, գայարտող,  
 Չհատնող:

Կը բարեմ, կը վազեմ,  
 Լոյսի չափ քէ արագ իսկ երբեմն՝  
 Չեմ հասնիր-  
 Հեռու եմ ինձ համար,  
 Մայրն եմ միտ կը բուրի՝  
 Միջոցի, անհունի:  
 Ամէնուն անհամար այլք տառ՝  
 Անօգուտ-  
 Երկինքին մէջ ծագած, գետ առ գետ, ծով առ ծով կան հառող-  
 Անապատ բուր յոյսն ինձի տառ՝  
 Փոխան գիտ տեսնելու,  
 Կը տեսնեմ լսի մշուշ,  
 Ինքնիք մէջ ծփացող գաղտնի ծուխ,  
 Դարշուրիւն:

Չեմ լսեր, չեմ հանչնար,  
 Օրեք կան՝  
 Երբ չկամ:

\*:

Եւ սակայն երբեմն այ ես մտա եմ ես ինձի,  
 Բանալի մը պատիւն չափ,

Արմատի մը շափ մօտ.  
 Ես մօտ եմ ես ինծի, ամէնուն՝  
 Ինքնիքով խոյս տունդ ջուրին շափ,  
 Սիրոյ մը, վշտի մը եւ զանոնք իր վրայ կնիքի պէս կրող սրտին  
 շափ...

Երկինքը...  
 Աստուծոյ եւ մարդոց ան միջեւ ինկած բան,  
 Կապոյտ բան, հեռու բան, խորունկ բան,  
 Ջրհոր բան:

Երկինքը...—  
 Կրօնքի երկինքը առաջուայ.—  
 Բաժանման անջրպետ, դեւերու կապոյտ ծակ՝  
 Անհունին մէկ կողմէն միւս կողմը անցնելու,  
 Մեր միջեւ եւ Աստուծոյ՝  
 Պառակտում ու կասկած ու մեղքեր ցանելու...

Երկինքը.—  
 Աչքերու կապոյտ թոյն՝  
 Որպէսզի Անհունին այս կողմէն զինք տեսնենք,  
 Մենք կուրմանք,  
 Կողմերէն անդիի գիտեն զինք աստուածներ  
 Եւ անոնք ալ այդպէս՝ կուրման հոն:

Անսպառ կապոյտին կողմ երկու,  
 Մաշիկ մէջ թաթխուած ծայրն երկու...

Երկինքը...  
 Բայց նաեւ անվախճան քաղցր գիծ՝  
 Կեանքս ամբողջ անանուն, անսպառ խննոյքի մը փաթեթով,  
 Երկարող գայն միմչեւ անյայտի այն հեռուն՝  
 Ուր սիրոյ եւ յոյսի իմ վերջին, գերբնտիր ես ցանկերը ըրի:

Ո՞ւր գրի հարագատ, վերջնական պատճէնը իմ կեանքիս,  
 իմ սրտիս.

Չտուի՞ր գայն գազտնի հովերուն,  
 Որ տանին, զետեղեն գորոցին մէջ խորունկ Անհունին:



## Լ Ի Ն Ե Լ Ո Ւ Թ Ի Ի Ն

Ձայնիս մէջ եին օրուայ կայ ֆարայր, կարմիր ցիչ, վախերու  
 ցուրտ կծկում,  
 Ահային կան դողեր, ցուրտ ու մէգ անցեալի, ցուրտ ու մէգ  
 մարդկութեան  
 Ձմարած կայ յուզում-  
 Ցանկութեան բոցի մէջ կան այրած ու այրուող մացառներ,  
 Նախանձի նոր բուսնող, կարծրացող, ժանտացող կան  
 փուշեր...

Ձայնիս մէջ, փետուրի ու բուրդի պէս տափուկ բառերու՝  
 կայ իմաստ, խորութիւն, ֆազցութիւն,  
 Ու շե՛րտ-շե՛րտ լուսիւն,  
 Մահուան բուն...

Ձայնիս մէջ կան աչքեր, կը նային բազմակիւն մտածմամբ,  
 Հագար գիծ անձկութեամբ, հագար գիծ տագնապով,  
 Տրամով,  
 Ու կարծես տեսակիս իսկ մահով-  
 Ձայնիս մէջ աչքերն այդ կը նային՝  
 Իրերու, եւ կեանքի, եւ մահուան արմատին,  
 Կը նային՝  
 Ջուրերու, լոյսերու, օդերու արմատին-  
 Կը նային՝  
 Անհունին վեր ու վար, տափարակ, ամենդի-անդունդին,  
 Փոխնիփոխ միշտ ինքզինք հաստատող ու երբեք  
 Միշտ պայթող, ֆանդուռ, կառուցուող,  
 Հեռացող, կորուող, ետ եկող, չհատնող անդունդին...

Ձայնիս մէջ օր մըն ալ որքան բան խուլցուցի, խեղդեցի,  
 Որքան բան սաստկօրէն կուրցուցի-  
 Որքան բան ձայնէս դուրս, մարմնիս մէջ եւ այլուր,

Հոգւոյս մէջ եւ այլուր  
Քանդեցի, մեղուցի...



Աստուած իմ, քեզի պէս, արմատի՛ պէս աշխոյժ՝  
Կը բռնիմ ես մահէս, կը ծագիմ իր մութէն, մութերէն,  
Ձմեռէն իր խորունկ, սառոյցէն ու գիւնէ մը սաստիկ՝  
Կը բերեմ հազար ծիւ, հազար գոյն, հազար բոյր, խօ՛ւզ գարուն.  
Թեւի՛ պէս քոյունի, կամֆի՛ պէս Աստուծոյ՝  
Կը բռնիմ գէպի վեր, մոթիրես ու մահէս...

ԵԴՈՒԱՐԴ ՊՅԱՀԵԱՆ

(Անտիպ)

# ՏՈՒՆ ՄԸ

Այս սուրբն անգամները, խորունկ տարիներու Հասած ծերակի մը  
զգիտութեամբ՝ կը ժպտին իրարու սոխրականէն գուր սուսառութեամբ  
մը: Մերուկը մնաած է շունի մը տարիէ ի վեր, եւ սակայն, ժպտին սուսառու-  
թիւնը մնացած է նոյնը: Այ ոչ հրածարած է ուրախ երեւնալէ: Այ ոչ յոժարած  
է զիպէ մը կատարելու իր ժպտելու արամազութեանէն: Ըստ իրենց բոլորին՝  
յու են ըրած:

Բայց իննիք չեն այս յոժարտէն ուրախ եւ յոժարտէն ժպտա փնտռող  
ժողովրդը՝ ոչ այ թեթեամբա եւ կամ ստոգան: Տիրութեան խորունկ պատ-  
ճառներ ունին: Կը Հանգիպինք: Կականը այն է՝ որ կը ջանան ծածկել ինչ որ  
սխալ է իրենց մէջ, ինչ որ անտարբէ է, ինչ որ ներհակ է վերջնական զլու արա-  
մազութիւնը ըսուած բանին: Կը ջանան Հետեւարար բնու սխալը չերեւելի եւ  
կամ, Հակասակ պարզային, ներկայանալ իրարու եւ ուրիշ ժողովոց՝ նուա-  
զազային իջած արտութեամբ մը:

Ձեն ուզեր, որ ժողովային գէժըը շարունակէ իր արտութեան Հին նա-  
խադրութիւնները պահել, այսքան գործերէ, նուաճումներէ եւ յառաջգիտու-  
թիւններէ մտք: Յաջողած են կարծես իրենց սուրբն ներքին սարքաւորման  
զգիտութեամբ յատկաբար ընել, ջանի որ բոլոր արժէքաւոր արտայայտու-  
թիւններուն խորագրերը երկար տարիներէ ի վեր ժպտան է:— Կուրք, Թեթեւ,  
ազնուական երանգներով ներկայանալ ուզող ժպտա մը:

Տարբերակ է, արուեստական կը թուի անշուշտ, բայց եւ այնպէս իրո-

զուժիւն է: Ժպիտին այս աստիճան գերարժէք նշանակութիւն մը առուողը նստանիւթին խորունկ տարիներու հասած մանր ծերո՞ւկն էր արդեօք, ամէնուն ստացած բարձր ուսումն ու դաստիարակութիւնը, թէ եօթը նման բնաւորութիւններու տեսակ մը խորհրդաւոր ժամադրութիւնը նոյն տունին եւ գրեթէ նոյն արեան մէջ: — Ձեռք գիտեր: Քերեւս բոլորն այ իրենց դերը խաղացած էին ատոր մէջ եւ ժպիտը բրած ի վերջոյ ամէնէն Քանկազին գոյքը, Քանկարժէք կանչելով այնքան հարուստ այս տան մէջ: Արդարեւ, ութսունը անց ծերուկը չէր ճոռնար յիշեցնել՝ խօսքը ուղղելով տան անդամներուն.

— Մեր ունեցած ամէնէն թանկագին բանը մեր դրամարկղին պարունակութիւնը չէ, կարածին երկու ինքնաշարժները չեն. ո՛չ սուղնոց ստանաբանն է, ո՛չ դրադարանը, ոչ այ ամէն օր կոխկառուող գորգերն են անուշտ: Մեր բուն հարստութիւնը՝ բոլորիս ժպիտն է, մա՛նաւանդ նեղ պարագաներու: Ես գո՛հ եմ, որ քաղաքավոր էք, կը յարգէք մեր վիշտը, ուրիշն արածադրութիւնը: Յաւ մը իրաւ. ո՛ւնք ունի թերեւս հոգիին մէջ արելու, բայց զէճքին վրայ՝ երբէ՛ք:

Հինէն ի վեր ըսած է, խրատած, հրահանգած գրեթէ.

— Հարկ է ժպիտի: Ժպիտը որեւէ պարագայի տակ անտոյժ չէ, ո՛ւժ է:

Եւ զեւ քանի՛ք-քանի՛ք անդամ լուսած է աւտոյժ ատամներով լեցուն իր բերնէն.

— Մահէն խուսափել չկայ, բայց տխրութենէն՝ կրնանք:

Կ'աւելցնէր ապա.

— Տունը ամուր պահելու համար հարկ է ուրախ ըլլալ, գոնէ երեւիլ: Ո՛չ պատերը, ո՛չ առաստաղը եւ ոչ այ նոյնիսկ հիմերն են, որ հաստատուն կը պահեն տուն մը: — Բնա՛ւ: Տուն մը չի կործանիր՝ երբ անոր բարոյական հիմերուն մէջ նետուած է ժպիտ, հասկացողութիւն, խելք: Պէտք է հոգեկան տոկունութիւն ունենանք եւ տուն մը, որ զեղեցի՛կ բան մըն է, ազեղ աւերակի մը չվերածենք: Կրթուած նկարագիրը գլխաւոր սիւներէն մէկն է ընտանիքին, հայրենիքին, համայն մարդկութեան:

Եւ այսքանէն ետք եպրակացնելու ներքին պահանջ մը մզում, ճերմակ-ճերմակ յօնքերու տակէն պնդացնելով մանր աչքերը, կը վերջացնէր.

— Լաւ է տուն չհասած մեռելի, կամ փախչիլ տունէն եւ տեղ մը անմասկան ըլլալ, քան խոժոռ զէճք մը չլինած՝ մտնել տուն: Տուն մը գերեզման մը չէ, եւ ոչ այ՛ դերեզմանի մը սկիզբը: Հակադերեզման տեղ մըն է ան, արեւին տակ, երկինքին տակ: Յոյս մըն է: Հայրենիք մըն այ յոյս մըն է, եւ հետեւաբար՝ հակադերեզման, հակամահ տեղ մը, պատմութեան մէջ, աշխարհագրութեան մէջ, ազգերու արեւին մէջ:

Փոքրիկ մարմնով Թոլմիոյ մըն էր կարծես.

— Բովանդակ կեանքը յոյս մը պէտք է ըլլայ, ցաւերէն դուրս գալու ազնիւ փորձ մը շարունակ, եւ ոչ թէ անճարակ աւ քաջութենէ գուրկ մարդոց յուսահատութիւն մը:

••

Մանր մարդ մըն էր այս հարուստ տան ծերուկը, մանր գլուխով: Բայց աչքերը կը փայլէին իմաստութեամբ մը, որ աչեւս մանր չէր բնաւ: Իր մէջ տեղ մը խոշոր քան մը կար, շա՛տ խոշոր: Ու շատ քաջ: Հիւանդագին կոչուելու տառիճան անօրինակ տենց մը երիտասարդութենէն սաղին նետած էր զինք կեանքին բոլոր սեւ իրողութիւններուն գէճ: Ուրիշ նախատիւթիւն, ուրիշ մեծ հանոյք չունէր կարծես, քան կուսիլ շարունակ տխրութեան զէճ, հայածել

227-1-22

զայն իր տան սեմէն Հոռու: Եթէ կարենար՝ պիտի ուզէր վանել բոլոր յուսահատական կացութիւնները աշխարհի սահմաններէն անդին:

Յարութիւն Պետրոս Միքայելեան անուամբ մանր հայ ծերունի մը շէր կրնար անուշտ աշխարհը ուրախութեան հունի մը մէջ դնել, զաղթական կեանքի անկիւնէ մը, որչափ ալ ստատ դրամ, ունենար, ստատ առաքինութիւն, ստատ խելք: Բայց ուխտած էր կարծես զորաւոր ըլլալ միշտ մահ եւ ըսել իր շրջապատին միայն առողջ բաներ, կենսատո՛ւ յօսքեր: Ձենկնուիլ:

Եւ շէր ընկնուած: Թուրքին դժոխքին տուած էր մայրը, հայրը, առաջին կինը, տասը տարեկան առաջին զաւակը, երկու եղբայրներ, ուրիշ մօտիկ ու հեռու որդիներ, համազգային նշանակութիւն ունեցող ընդարձակ յոյս մը: Տոկացած էր ու կարճ հասակին ողնասիւնը ուղիղ պահած, փոխտոփայած:

— Այդ տխուր հոգեմով ժողովուրդը շարժելու մոյի եղող արիւնէ մը կու գար: պէտք էր գիտնայինք: Եղածը եղաւ: Երանի՛ ասկէ ետք լալկանութեան ետեւէն լըլլանք, երանի՛՜ հրաժարինք վերջնապէս մենք ալ մեր մոլութենէն, որ մեքերը ծալած ջարդուիլն է: Զարդելու եւ ջարդուելու մոլութիւններ՝ դա՛րբրով կողք կողքի: Երանի՛ Ապրիլ 24էն ետք ջիթ մը ունենայինք, որ կարենար Հոռու առնել, ականջ՝ որ կարենար բուռածէն աւելի շքուածք իմանալ, եւ աչքերը՝ որոնք կարենային իրականութիւնը տեսնել:

Ըսած էր որ մըն ալ թուրք փորձեալօրի մը:

— Ապրիլն ու շապրիլը ժպտելու եւ շկարենալ ժպտելու հարց մըն է խորքին մէջ: Ձեր ազգը սկիզբէն ի վեր անժպի՛տ ազգ մըն է, չի կրնար աճիլ, տեւել: մեր՝ ինչպէս եւ շատերուն տիրութիւնը ժամանակաւոր է եւ ձեզմէ՛ եկած: կ'անցնի, հալը կըցած է վերադանել իր կորստաւած ժպտը, կը տեսնէք:

Իր երկրորդ դժոխքը Հիւանդութիւնն էր, որուն զոհը եղան երկրորդ կինը, ասանութ տարեկան աղջիկ մը եւ երեք տարեկան մանչ թոռնիկ մը, տարբեր թուականներու մէջ:

— Օղին մէջ, հողին մէջ, շուրին եւ մեր ստացած սնունդներուն մէջ մանրէներ կան, որոնք չեն ժպտիր մարդոց համար— մանրէներուն թուրք տեսակն են եւ չեն կրնար կեանք բերող բաներուն շափ զօրաւոր ըլլալ: Բժշկութիւնը իրենց հետեւն ինկած է եւ ազատում չունին: Մարդ էակին սպառնացող բոլոր բաները կա՛մ շքացած են պաշարին մէջ եւ կամ անոր դե՛րին ու զուարճութեան առարկան եղած: Եթէ մարդուն շափ ուրախ կարենային ըլլալ եւ նուազ չար՝ մարդուն շափ կ'ապրէին, կը տեսէին, կը ստեղծէին: Առաւել չար՝ կը նշանակէ նուազ կեանք: Այսպէ՛ս է:

Երրորդ դժոխքը, երկրորդ աղջկան մահն էր արկածով մը: Բստն տարեկան էր Մայրի ու վեց ամիս ի վեր նշանուած: Հոռու ստեղծ: Այսինքն՝ լացը շահուաւ: Տեսաւ թեթեւ տիրութիւն մը, որ պաղաւթանութեան հետ շփոթուեցաւ:

— Ձեզի բահ՛մ՝ չմտածե՛նք: Այս բանը խելքի հետ կապ չուանի: Դժբախտութիւն բառը ամէնէն աւելի վայել է գիտուածի բաներուն: Մայրին չկայ: Թող երկինքը հայր ըլլայ իրեն, ընդհանուր հայրը ան է. մենք Հոռու հայրութեան նշոյլներ ենք լուի, սկսած նշոյլներ, հիւշէներ: Արդէն ամէն բանի նշոյլ ենք միայն: Հիւշէ՛ ամէն բանի ամբողջական պատճէնը երկինքին մէջն է: Զարբինք: այդպէս ըլլալը ուրախալի բան է:



Մեռաւ որ մըն ալ աշխարհով լեցուն մանր ծերունի, տիրութեան դէժ մղած մանր ու մեծ կռիւներէ ետք: Մեռաւ՝ ծանոթ վէրքերէն դուրսէ շատաւելի մեծ վերք մը, շատ աւելի խոր ու հողեմալ տիրութիւն մը ծանկնդով օրն ի բուն:

ուրախ պատմաբաններն ճշ ասել: Չենք պետք: Բայց մայրամին ու յո ամառ-  
նա քանակը հասարակ ճշ, ու յո աստիճան անոք մայրն եւ դարն ամէն ինչով պար-  
տաւորեց աստուգ զհասարակեց մէկը՝ կը հար ճան: Բայց ասով զժամ ճշ ինքնուր  
անձն ընդոք անոք չանար: Մեզ կըր ասոյ չէ նա ինչպէս ասել է միշտ, որ ասոյ նա-  
բաւ աս ասով փոքրիկ եւ աստիճան միտեց: Նային աստեղեցի՝ հասարակ տարր  
իւր հարապարտներն, որ զարգացան իրենց նարաւաններն աստիճան աստ-  
նայն աստիճանին — մայրամին ճշոյ: Եւ հարմու իւր բաւկը անկողն անե-  
ստ ճով ճշ նայինին այնու նման անեղիներու կենցաղին ու փոխադարձ փոք-  
մանքին ճշոյ:



Այս եւ կին կը մարմն իրարու եւ իրենց բանաստեղծաց աստիճան աստիճան  
կրեւայն ճշ ասով շարունակ մէկը՝ իւր կրեւայն կարգաբանութեան եւ ճշով աստեղ,  
միտեց՝ աստիճան եւ աստիճան ներկայութեան: Եւ փոխադարձաբար: Յետեւ  
չին իրարու զէմ: Ծագան եւն հարմու իրենց ներքին կենսական բարդ բաւա-  
մանանքը: Բարդաբարտներն եւ ծագաբան յարգանքի պարտականութիւնը ընդ  
իւր թուին իրարու նայեցէպէս: Նայինին պէտք կը զգան զարգացան իրարու  
աստիճաններու: Գտնի որ իւրաքանչիւր անեղ մէկն զիմացինը իրարու  
յառի մը աստեղ չի անեղը իրեն կ'ընդունի:

Այդտեւ, անեղ նայինները իրարու տեսք եւն եւ կը զեղեքին ներքին  
անեղութեան զեղնաւ թիւներն ճշ: Իրարմէ զմարմն չին զգնի, ոչ ոչ աստիճանին:  
Իրար չին աստեղ եւ ոչ ոչ աստիճանի: Ըստ իւրաքանչիւր անեղի կենսական  
մէկ բան մը տեսն է, բան մը տեսն էր է եւ այդ բանը կ'աստի իւր շարժ ամէն ինչ:

Իւր մարմնն նա՛ւրբ, թե՛ թե՛, աստեղական աստեղանոց աստիճաններ աս-  
տիճանեց աստիճանով մը՝ նայինին այն պարտաւորին, երբ իրարու ճշ-  
զարման են կենսական զէմ, այս կամ այն նմանութեան պարտականութիւնով շարունակ:

Մտածեմ ներս կի մը իրարը կայ աստեղն մէկ — զեւ բաւական աստեղ,  
բաւական աստեղ — կայ աստեղանոց բարձր աստեղ՝ նկարագրիներու անեղ  
եւ աստիճաններ անբարձր կիրարկութեան պարտականութեան մը իրեն  
բարձր չի մտ: Երբեք մարդկայնութեան ճին մտնին կողմէ ընդունուած անեղ  
զգացումի մը չէ այս աստեղն նայեց: Իրենց միտին իրար փոխադարձութեան իրարու-  
թիւն մըն է: Չէ բաւական աստեղ, չէ պարտական, աստեղանոց է նա աստեղ-  
նայնութեան յարաբերութեան աստեղ ինքնութեան մը:

Իրենց ընկերային միջավայրը բարձր բաւական միջավայրն է: Ըստ  
իրենց, աստեղանոց եւ կայանաւ թիւն աստեղ մը ներկայութեան, կիմ գտնա թու-  
անեղութեան թեմէ փոքի նպատակներ չին նմանողեղէ՝ պարտիկ մարդկայն կենսա-  
զուտութեան, անեղ աստեղանոց աստեղանոց պարտականութեան աստիճան աստեղ-  
անոց մը նայեցանքով պարտիկ բաներ են միտն: Կայք, արտադրութեան կիմ  
ու զգացական բարձր մեծերու աստեղ կայն աստեղանոց — նայեցանք, աս-  
տեղանոց, արձնութիւն — փոքրիկ եւ կամ պարտե անեղի միջավայրի յարաբե-  
րութեան աստեղանոց աստեղանոց են թեմ: Իրենց բաւական անեղան աստեղանոց  
չէ:

— Կայն բան չիայ — կ'ընէ աստեղ նայն անեղ նայք, կայնութե իւր  
մանը նայք մեն պարտականութեան ընդողորմութեան, — բարձր բան չիայ  
այնպէս մէկ:

Այդպիսի մտքով կրկնապարտական մարդ մըն է եւ ըստ ամէն բարձր  
նայք, զար կը զգաս, թէ նա անեղան ըստով՝ կը պիտի աստեղանութեան ընդունուող

տրամադրութիւններ տալ կարծես միայն ու միայն խտուրթեան համար աշխարհ բերուած զէմքին:

Կնդիրը կը վերածէ երբեմն ալ գեղազիտական լուրջ հարցի մը եւ առայդ պէտք կը զգայ իր ինքնատէպ տեսակէտը պարզելու տնեցիներուն կամ բարեկամ ու բարեացակամ մարդոց:

— Հարցին բարձրագոյն նշանակութիւնը հետեւեալն է ըստ իս, զոր հարկ է քանի մը անգամ ընդզծել, ի լուսարանութիւն այս հարցով քիչ զրազելու առիթ օւնեցող մարդոց:

Ու քանի մը խոշոր մատները քառակուսի կղակին շուրջ պտրտցնելով:

— Ոչ մէկ բան իսկապէս այնքան ծանր է կեանքին մէջ, որպէսզի կրթուած եւ շիզ ունեցող մարդ մը, այր թէ կին, իրուու նք ունենայ լայու առնճոնի ձեւը տալու իր գէմքի բնական ներգաշնակութեան: Մարդ արարածին զէմքը աւելի արժէքաւոր է իմ կարծիքով, քան որեւէ տխուր պատահար, որ կուզայ խանդարելու անոր աստուածային կերպը: Մորթը՝ որ տրուած է մեր մարմնին, պատաստն է ուրիշ բանի: Ուրախութեան: Լուսաւոր խոհերու: Ներքին ջինջ հաւասարակշռութեան մը: Տրեղերքին եւ անոր լինելիութեան հետ կարենալ բարախելու մտիտ հաւատքի մը, կամքի մը:

Ու դպիւով ապա կարծրամազ պնդեբուն:

— Պէտք է ժպտիլ յաճախ, նոյնիսկ եթէ մեր նմանները յիմար կարծեն մեզ, դասն անտեղի գոյութիւններու կարգին: Յոժոտութիւն, լաց, բարկութիւն եւ ծամածուրթիւններ՝ ազտոտութիւն են մարդուն վրայ գեղազիտականօրէն դիտուած, եւ թոյն՝ առողջապահական տեսակէտով:

Համոզուած է ու կը հետեւի խոր սկզբունքին: Կը ժպտի: Եւ կու յայտակայն հոգիին ամբողջ տիրութեամբ՝ նոր ամսուացած գեղանի կնոջ մը համար, որուն խենթ սիրահարը եղած է դեռ տարի մը առաջ, ամառնային մեծ պարահանդէսի մը ատեն: Այդ սէրը բուռն է, յարանուն, յուսահատական: Կը քանդէ դինք ու յայտնօրէն հետք պիտի չձգէ իրմէ: Մէջն է միշտ ու կը քաշէ աւելի ներս, աւելի հետու, աւելի անայց վայրեր: Բսանհինգամայայտ յոյզ կնոջ կրակը կը բաշխէ ինքզինք օրէ օր իր հոգիին բոլոր անկիւններուն, բոլոր ծածուկ խորշերուն՝ մուխի ու մոխիրի վերածելով տակաւ ամէն վարագոյր, ամէն խորան, ամէն սրբութիւն: Նոր հոգի մը կը լինէ իրեն այս սէրը՝ ջնջելով իսպառ հինը, նախկինը, մայրական արգանդէ մը աշխարհ կկածը:

— Աստծոյ տուած հոգիին տեղ Նորայի՞ն տուած հոգին պիտի կրեմ յիտունէս ետք:

Առանձին է ու տրտմ:

— Աստուած մեր մօրը արդանդի՞ն մէջ կը յանձնէ մեզ մեր բուն հոգին, թէ որեւէ օր մը, միայն ու միայն սիրոյ մէջ:

Եստ տրտում է վահէ:

Կը պայքարի սիրոյ դէմ: Պէտք չէ սիրել: Ամէն ինչով անիմաստ է այդ սէրը: ոչ մէկ յոյս կայ անոր մէջ, ոչ մէկ հետանկար: Կրնայ անկէ բխել դժուարութիւն միայն, դայթնակղութիւն միայն:

Ձի՛ չար, չի՛ չար:

Ինչպէ՞ս եւ ե՞րբ կրցած է մտնել այդքան սէր իր նկարագրի ամբակուտ պարխապներէն ներս, ինչպէս եւ ե՞րբ:

Աւելցուցած է զգուսնեքները իր կնոջ հանդէպ: Ամուսնական բոլոր պարտաւորութիւնները կ'ուզէ կատարել ճշգրտօրէն, բնախնդրօրէն, թերի բան չձգելու անկեղծ ճիշտով մը: Եւ կ'ընէ ասիկա իր սէրը անմիջական շրջապատէն ծածկելէ աւելի խիղճը մասամբ հանդարտ պահելու մտահոգութենէ մը մղուած: Կ'ուզէ ներսի ձայներուն առջեւ արդարանայ գտնէ որոշ շարժում մը, բոլորովին մոլորած մէկը իրբեւ շորակուել անանցմէ: Այդպէ՛ս է ճիշդ: Բանի՛

կ'անի սերը ու բերին կնոջ հանդէպ, նոյնքան կ'անին դուրգութեանն ու հոգա-  
ծութիւնը սեփական կնոջ նկատմամբ:

Տխուր է հոգին եւ յուսահատ. այլ յիսուքը անց այս մարդը, Վահէ Յա-  
րութիւն Միջաշէնեան, կը ժպտի տան մէջ, կը կատակէ կնոջ, եղբայրներուն,  
աղջկան եւ քրոջ հետ, բարեկամներուն ու հիւրերուն հետ, յաճախորդներուն  
հետ: Կու տայ խտուրթեան համար կաղապարուած իր երկայն դէմքին սուա  
դուարճութեան շողշողուն ջնարակ մը:

— Լացը ոչինչ բան մըն է, մշուկ սպաննելու գոռոճ արարք մը, գոռոճ-  
կութիւն:

Այս եւ ասոր նման խօսքեր կը գտնէ—կ'ըսէ, երբ ասն մէջ տխրութեան  
նմանող բան մը նշմարէ: Եւ սակայն կու լայ անոր հոգին, ներքին բեմի մը  
անկիւնը կծկտած, սուտ հոշակելով իր իսկ բերնով ըսուածը, կեղծիք եւ պայ-  
մաններու քտութիւն համարելով պարտադիր ուրախութեան ամէն արտայայ-  
տութիւն:

Կը փնտռէ յայնժամ հեռաւոր բացակայութիւն մը, անանձնութիւն մը  
ազատօրէն տիրելու, գժգոհելու, բողոք բառնալու համար: Կը սպասէ շարու-  
նակ գիշերուան մեծ ու խորունկ պահերուն:

Կը տեսնէ այն ատեն իր բովանդակ անձը նկարագրի փշաթելերու անո-  
ղորմ. ցանցի մը մէջ: Ի՞նչ ընելու եկած է ինք այդ փշաթելերու ետին, որոնք  
դէռ ինք հազիւ շարժած՝ կը խայթեն զինք ամէն կողմէ: Ինչո՞ւ ինկած է այդ-  
տեղ, ո՞վ նետած է զինք այդքան նեղ, գժոխային բանտի մը մէջ: Զառանցող  
դաստիարակութի՞ւն մը, աւելի եւս զառանցող մանրամասն հա՞յր մը: Ո՞վ է  
սակայն տեւէ հայր՝ եթէ ոչ մի՛շտ աղէտ, մի՛շտ օտար, մի՛շտ մա՛նր մէկը: Հո-  
գերանտութիւն չգիտցող եւ այս կամ այն ուղղութեամբ զուտանցել սիրող  
Քլշուտ մը, եղկելի մը, եպրելի մը: Դաստիարակութեան եւ հօր հրամանով  
ինք հո՞գ պիտի մնայ. նկարագիր ըսուած այդ կրակին մէջ:

Կը բարդէ շուտով ամէն մեղք ամուսնութեան վրայ, որ եթէ ոչ հարիւր  
սոտ հարիւր, շատ մեծ համեմատութեամբ մը գէթ՝ սուտ բանի պարտադրած  
է իր ծուղակին մէջ ինկած մահկանացուներուն: Պարտադրած է գզուանք,  
ժպիտ, ցմահ քաղաքավարութիւն: Հողե՛ր, հողե՛ր:

— Ամուսնութիւնը կեանքին միակ խելացի բանն է. տողջութիւն է-  
րարոյսկան գեղազիտութիւն: Բնութեան ամենախրթին մէկ հարցին միակ  
կարելի լուծումն է: Կոյր անասուն չինք բարեբախտաբար, որ չհնազանդինք  
անոր արամարանութեան:

Իր կարեւոր կարծիքն է այս՝ լուրջ պարագաներու եւ նոյնքան լուրջ  
անձերու ներկայութեան:

— Ամուսնութենէն դուրս սէր յաւերժացնելը բանդագուշանք է եւ ու-  
րիշ ոչինչ: Հիւանդ ուղեղներու ցնորք: Մարդկային գոհչիկ միջավայր մը  
կրնայ այդպէս մտածել. մէր բարձր գիտակցութիւնը պիտի մերժէր ասիկա:  
Ազատ սէրը կը արամարանութի սուր ու կարճատեւ պահերու մէջ միայն,  
առանձնութեան ու մենախօսութիւններու մէջ վեճի մը մէկ մասն է, որմէ  
յաղթական դուրս գալու համար, այդ մասը պաշտպանող առանձինը պիտի  
վեճի, առանց հակասկերպի:

Բայց այս բարձրամայն արտայայտութիւններուն յուս, այլ հարազատ  
բնագիրը հետուեալն է եթէ կ'ուզէք՝ իր հոգիին մէջ, արիւնին մէջ:

— Ամուսնութիւնը կեանքին միակ ապուշ բանն է թերեւս հրէշային եւ  
անհեթեթ բան մը: Ինչպէ՞ս առանց դողալու՝ յաւակնել օր մըն այ հաւատա-  
բիւժ մնալ մի՞նչեւ մահ, միակ անձի մը, այն ալ կնոջ մը, որուն հոգին եւ արժա-  
նիքները յաճախ աւելի շուտ կը ծերանան, քան մարմինը: Ամօ՛թ է հաւատալ

ու հարատևելի ամուսնութեան: Մինչև և՛րբ ազէս պիտի մնայ ժարգը, մինչև և՛րբ ահար, կոյր:

Ս. սակայն քանի՜ ճր կեանք զոհելու անկեղծ արամաղորութիւն ճր կայ իր մէջ նորային ամուսինը կոչուելու համար: Կին է ան այ: Իսոյց կը զգայ, թէ անոր հաւատարիմ մնայը հարկադրանք պիտի չըլլար իրեն, այլ քաղցրութիւն ճր՝ մինչև գերեզման երկարոյ: Թնչո՞ւ ինք կանուխ եկած է աշխարհ եւ նորան բաւական ուշ: Թնչու հիմա ինք անոր ամուսինը չըլլար, ըլլար Աշխէնին ամուսինը: Կեանքին կողմէ ինչո՞ւ այս ծանր հարուածը:

Մտածման այս երանդը հոս կ'անհանգստացնէ զինք մեծապէս կը փոխարինուի անով իր մէջ վիճակ ճր ուրիշ վիճակով ճր: Քանի՜ ճր կեանք զոհելու արամաղորութեամբ չէ՞ր միթէ, որ սիրած, սիրուած եւ ամուսնացած էր յետոյ գեղեցիկ Աշխէնին հետ: Իրար պաշտելու շփոք կողմուած էին իրարու: Հարազատ արիւնքի շփոք հարազատ էին իրարու: Տարիներ վերջ ու հասած գուսակ ճր հաջ ահա յիսուն տարեկան ժարգ ճր ինք, ահա նոր ու խորունկ սէր ճր սրտին մէջ: Պաշտամունքի տեղափոխութիւն ճր: Մէկն էր, ուրիշ մէկն է:

Կը սիրէ՛ նորան, բայց կ'ատէ՞ Աշխէնը: Այ: Իրեն այնպէս կը թուի, թէ չէ պահած սէրը Աշխէնին հանդէպ: Մտած է զգացական ուրիշ երանդներու մէջ: Ս. այն օրէն, որ սկսաւ սիրել նորան, այդ երանդներուն վրայ աւելցաւ նաեւ խղճահարութեան եւ գուժի գրացումը: Այս բոլորը աւելի թանկագին էակի ճր կը վերածնէ Աշխէնը իրեն համար: Իմացիներն հաւանական սուսապանքներն վախ ճր, սրտի անօրինակ ճնշում ճր կը զգայ: Այո՞, կը խղճայ Աշխէնին, խղճը բոլորովին կը քամուի: Երկու կրակի մէջ է, երկու զորաւորացոյն ճնշում: Հին սէր, առաւել խղճ, առաւել ընտանիք, առաւել քսան տարեկան աղջիկ ճր եւ, գիտացը, նոր սէր, բազմապատկուած յուսահատութեամբ, սուսապանքով, սեւ անպատեհութիւններու լծան շարքով ճր: Այս նոր սէրը պիտի չաւելցնէ վրան ոչ մէկ բան, պիտի պակսեցնէ ինչ որ ունի, ունեցած է: Պիտի խորասկէտ զինք:

Այսուհանդերձ այս գծնգակ, կործանաբար, ոչ մէկ անտակցութիւն բերող նոր սէրը աւելի բնական կու գայ հոգիին, աւելի մաս, աւելի անհրաժեշտ: Միայն սասով կարծես պիտի կրնար ինքզինք ըլլայ եւ ուրիշ ոչ մէկ բանով:

Այսպէս բոլոր վիճակներուն վրայ ամուսնութիւն բառը կը յաճի, մերթ սեւ ամպի, մերթ մոխրագոյն ամպի, մերթ չուսածայլ ամպի պէտ: Իր գայտանները կը քնցեն զինք: Եկարագիրը, գաւաթարարութիւնը, մանր հոր տարիներով կրկնած իտաքերը կը յաշուին սակայն ժպիտ ճր գնել գեմբին վրայ, հակառակ որ ներքը մասը է շարունակ ու թխպտա:

Կը ժպտի Աշխէն եւս, ինչպէս ամուսինը, ջստմանայ Մարտը, սույլ: Երաւունք չունի: Հողեկան վիճակը թոյլ չի տար իրեն ատիկա: Թիզը անհանդիստ է, ցուր մէջ: Քայքայուած է այդ խիզը ամուսինին խիզնէն սուտը, աւելի հին օր ճր, հին սարուան ճր մէջ: Մտնուկ վեղ ճր ապրեցաւ, ծածուկ սղորդութիւն ճր, ամուսնական վերջին հինգ տարիներուն զուգահեռ: Երկու ստորիէ ի վեր լուծած կը համարէ հարցը, բայց, Աստուած իմ, ինչ քայքայել լուծում է սպիկա իր կեանքին համար:

Այդ հինգ տարուան մէջ, առաջին երեք տարիներուն եւս Մարտին մայր ու Վահէին կին եղաւ Աշխէն: Անթիքի մայր ճր, անթիքի կին ճր: Ենթանալէս եւս մայրութիւնը կրցաւ չուղարտուիլ, բայց կինը՝ ազատուեցաւ: Ազատուած է մինչև այսօր: Հողին իր հարգատենները ճրած է ամուսինն եւ նոր գրացումները հողուն՝ մեկնած է արգէն օտրիչին բով: Մակընէն ճրն է, երբ Վահէն



կայ, վերագրանում երեսասորդութիւն եւ Համակ սիրտ ու Հողի՝ Բազրատի՝ ներկայութեան: Բուն ժպիտով, բուն սիրտութեամբ, բուն արամադրութիւններով կը պատկանի երեսասորդ իրաւարանին, որ դասեր պաշտպանելէ աւելի քերթում ու սիրային կրակոտ նամակներ կը դրէ, շահանում անկեղծութեամբ մը: Թիղնի ձայնով մը, որ ճակատադրական ձայնի պէտէ, կապում է լուկ Վահէին: Երկար տարիներու ամուսինն է՝ — լուրջ, բարի, ստուական: Տոկուն: Խորստում է այդ ամուսնութիւնը սիրոյ վրայ, նախասիրութիւններու Համանմանութեան մը վրայ, կեանքի նոյնաստիակ ըմբռնումի մը վրայ: Եւ Հիմա այսպէ՛ս:

Ներքը, Հողին Հեռաւոր ու խոր ատանմանանակին մէջ, երկու իրարու յաջորդող ձայնապնակներու տարբեր եղանակներ կը լսուին փոխն ի փոխ, մէկզմէկ Հակասող: Երբ իր նոր սիրոյ ձայնը դադարի, DISQUE աւարտած ըլլալով խիղճին DISQUE է, որ կը սկսի անմիջապէս դառնայ, տխուր եղանակի մը Թախծաղին բառերը նծանելով Ալիսէնի Հողին մէջ: Իսկ այդ արտում բառերը Հին սէր են, աղուոր օրեր են, խորունկ եւ անանջատակի պայտուսներ են:

— Կեանքը ինչերո՞ւ ընդունակ է, ընդունակ՝ կ'ընէ մեզ:

Ու կը կարճի-

— Անհաւատարմութիւնն է:

Կը Թախտուի Հողին, ներքը, զպանի ծորոց արտասուքներու մէջ:

— Յանցաւոր եմ: Ինչով Վահէն վեր չէ Բազրատէն:

Մտապատկերին մէջ երկու այդ մարդիկ զով ըսի կ'աղուսնան իսկոյն անօրինակ յատակութեամբ մը: Աղուսնայու, անմանալու միտում մը կայ անոնց մէջ կարծեմ: Մէկը երեսունհինգ տարեկան բուրբոնի երեսասորդ, միւսը յիսունը անց, բայց դեռ առայդ: Կարեւոր չէ շատ կարծես երեսունհինգ, Բէ յիսունը անց՝ ջանի որ Ալիսէն ամուսինին գծադրուող պատկերին մէջ անուելարար տասնամեակներու նախկին երեսասորդն է, որ կը տեսնէ Բազրատի կողքին:

Կը տարի: Կարծես մրցումը ամուսինը պիտի չահի: Ու եթէ կորսնցնէ եւ Բազրատ չահի՝ նորէն պիտի տարի:

— Պէտք է վերջնականօրէն Հրատարի Բազրատէն, ամօք է, դէ է, Հիշդ չէ:

Երկու ասորի կ'ընէ, պաշտանապէս Հրատարած է արդէն, Հինդ տարուան մէջ Հինդ Հարիւր անգամ կրկնելով:

— Պէտք է Հրատարի՛լ, ա՛խ, Հրատարիլ:

Անմիջապէս տեղի չէր տուած, Հակատակ ու նկատ զօրաւոր զգացումներուն: Գիծադրում էր ծօտ երկու տարի, պայքադում, Հեռու պահում ինքզինքը: Երեսունհինգ տարեկան էր այն ատեն, շատոնց ամուսնացած, արդէն գեղեցիկ աղջկան մը մայրը, երբ պատահեցաւ ստիկա: Երեսունհինգ տարեկանին, Հին ու ամուր սերէ մը հաշ, որչ չափով մը գեռ այդ սիրոյ ընթացքին մէջ իսկ՝ նոր սէր մը, նոր կոպ մը, նոր դահլուստիներու ընկերացած՝ բնու երեսուկայնիկ չէր իրեն Համար: Միծաղելի, անհնձիք եւ ուրիշն քականարար մերձիկ բան մը պիտի ըլլար ստիկա: Մանաւանդ բարոյապէս ու նիւթական գեղեցիկ վրայ ոչինչի պէտք չունէր ինք: Սէր, ընտանիք, ամէն անասի գահացում եւ ժպիտ: Ինք եւ իրմէ զատ սեւէ ուրիշ կին պատեստ մը պէտք չէր ունենար նման պայմաններով կեանք մը Հարիւր տարի առանց ներքին նոր ազմուկի տարելու:

— Օ՛, կեանքին խորհուրդը սակայն օ՛, մեր Հողին անդունդնէ՛րը Ինչպէ՛ս անասի մը ազայ էր Բազրատ:

Կ'ըսէր իրեն-

— Տիկին Ալիսէն, բարեբախտաբար կեանք ըստանը երկրի վրայ աղ-

քառ իրողութիւն մը չէ: Մեր երեւակայածէն շատ աւելի հարուստ է ան, շատ աւելի զօրեզ, շատ աւելի աստուածային: Մենք չենք, որ զինք պիտի կառավարենք: Իրեն զէմ գործող մեր կամքը մանրամասնութիւններու մէջ է, որ կրնայ եւ պարտի յաղթել անոր: Մեծ եւ էական հարցերու մէջ ո՛չ ուժ եւ ո՛չ ալ իրաւունք ունինք զէմ կենցաղու անոր ցանկութեան: Լա՛ւ որ այդպէս է: Լա՛ւ որ կեանքը մէկ ծառի, մէկ ծաղկի, մէկ կրակի ու մէկ սիրոյ չէ, որ կը սպասարկէ՝ այլ բոլոր ծառերուն, բոլոր ծաղիկներուն, բոլոր հողիներուն: Լա՛ւ որ սահմանափակ եւ կաղապարեալ չէ, այլ անսահման, այլազան, խոր ու խորհրդաւոր: Վա՛յ այն հողիին, որ բացառիկ պահու մը, երբ ան այլեւս չ'ուզեր, որ տղջատ մնաս՝ կը յամառիս աղքատ մնայ, երբ կ'ուզէ թեզ նորոգել՝ չես նորոգուիր, երբ կ'ուզէ դուրս բերել թեզ հին կաղապարներէ՝ ու դուն կը մերժես: Կեանքը ատկէ ետք մատուտ քարի մը կը վերածէ թեզ, պզտիկ, չնշին, ինքնազուժ թշուառի մը՝ բրածոյ պոսութեան մը՝ հողիով, մարմնով, զաղափարներով: Թորանալու ընդունակ ընենք մեր հողին, նոր երկինքներու նուաճութիւն համար նոր փետուրներով թեւեր պէտք են մեզի:

Այս տեսակ ճառերուն Աշխէն զիմադրեց մօտ երկու տարի: Այտուհանդերձ, ասորիքնակ համ մը կ'աններ այդ բառերէն, եւ կարծես հագին ճշմարտութիւն մը կը զանէր ըստածին մէջ: Բազրատ չէր նահանջներ: Կը տխրեր, կը զայրանար, կը յուսահատէր՝ բայց նորէն նոյն յամառօրէն զինք սիրող, իրմով գրաւուած երիտասարդն էր: Կը զբէր իրեն, կը հանդիպէր, կը խօսէր շարունակ: Եւ ինք, Աշխէն, զիմադրելով հանդերձ, կ'ուզէր որ խօսի Բազրատ, հասկնալի իր զիմադրութեան, սիրէ՝ զինք եւ ջանայ յաղթել հողիին մէջ գամուած հին բաներուն — սիրոյ, նկարագրի եւ կեանքի ըմբռնութիւններուն: Ինք ի վիճակի չէր ինքզինք յաղթելու, բայց հողիին շատ խորերէն, կ'ուզէր որ այս աղան իրաւունք ունենայ զինք նուանելու: Անոր սերէն ու յայտնած որոշ ճշմարտութիւններէն ետք, Աշխէն կը զգար, որ հին սէր, բարոյական, նկարագրի եւ դոյութիւն ունեցող ներկայ պայմաններ՝ ամբօրէն կառչած են էութեան, հաստատապէս զամուսն մէջը՝ բայց այլեւս մերթ ընդ մերթ նեղութիւն ու զժգոհանք պատճառող ամբութեամբ մը: Սկսած էր զազտօրէն զժգոհել իր վիճակէն եւ տարիքը, որ կը յառաջանար՝ կը ցուցներ ենթացիտակցութիւնը:

Յոգնածութիւն մը կ'ընկերանար ժպիտին: Ու Հայելիին նայած ատեն՝ որոշ տհաճութեամբ մըն էր, որ կը նայէր մորթիին, մորթէն անդին տարածուող հողիին: Բազմաթիւ նկատումներէ քաշկուսուած մօրթ մըն էր անիկա: Բարոյականն ու տարիքը ճճութեամբ թուղթի մը պէս կրնային ընել զայն, ընկզմել կանխահաս ծերութեան մը մէջ: Եւ ինք ուրեմն հիմի եւ նորի մէջ տատանող, այդ տատանութիւն մէջ մաշող զո՞ն մը:

Վերադառնալ ու ճամբիլ ուզած էր Բազրատը: Բայց ամէն անգամ ալ ետ առած էր որոշումը, կամ ուզած յետաձգել: Որմէ՞ համ պիտի աններ, բոլոր միւս ներկայութիւնները անհամ դարձեր էին, տաղապալի, շինծու եւ սուտ: Մա՛նաւանդ չուզեց, որ տատապի այդ աղան, այնպէս բոլոր կիներուն եւ աղիքիներուն մէջ զինք ընտրած այդ ջերմ երիտասարդը, որուն հողիին մէջ զեւ չիբազործուած, բայց իրազօրծուելու պատրաստ արեգիկը մը կը նշմարէր ինք:

Տասնչորս ամիս եղան այնպէս՝ ինչպէս փափաքած էր միշտ Բազրատ: Ոչ մէկ բան հուսաարեցու աչք ամիսներուն զնկնկուութեան: Ոչ մէկ բան կենսաբան մէջ այդքան քաղցր էր նզամ, այգբան ճշմարիտ, այդքան իրական: Վերջնական: Զգացած էր, որ ինք Բազրատին համար ծնած էր, բայց իր կեանքը մինչ այդ սխալ Հասցեալութեամբ կեանք մը եղած էր: Աշխատութիւնը երբեմն կեանքի մը սկիզբը գրուած կ'ըլլայ երեւի, երբեմն մէջտեղիքը, երբեմն

վերջը: Աւ կապ չունի արտաքին տեսողութեան հետ, այլ ուժգնութեան հետ՝ որ ներքին եւ աւելի երկար տեսողութիւն մըն է:

Իր կենանքին ճշմարտութիւնը Քարգասն էր թէն, բայց Հարկ էր հրաժարիլ անկէ, քանի որ ընտանեկան եւ ընկերային պայմանները պահանջ չունեցու վճճակէ մը պէս օղջ կը հասուցայային:

— Ամէն մարդ գոհ մը իր պայմաններուն: Տիրութիւնը անզրանիկ դաւակն է պայման կոչուած բունակային:

Ազգեց վերադառնալ տունին եւ պայմաններուն հին հպատակութեան.

— Էութեանս բացարձակ տէրն ես, Քաղքատ, բայց ի՞մ տեղս Վահէին քով է, աղջկանս քով:

Ձեզաւ: Այս խօսքը տիրութիւն գոյացուց լոկ, բայց ոչ խղում:

— Ի՞նչ որ կ'ուզես առ ինձմէ, բայց ա՛յ չկանք իրարու համար, երկու բացականերու տէր է ասկէ ետք մերինը:

Տղուն մէջ քանի մը վէրք եւ իր մէջ արցունք ստեղծեց ըսուած խօսքը: Ինչու՞մը նորէն չիրազրծուեցաւ: Անցաւ քանի մը շաբաթ եւս: Բայց կարելի չէր շարունակել, կարելի չէր:

— Խորեցիր դիս, տարիք ետեւէդ: Կ'ստեմ քեզ ճիշդը, միակ սիրած մարդս խաբելիչ զգուեցայ քեզի համար, չեմ ուզեր: Կ'երզնում՝ կ'ստեմ քեզ: Քանի մը անգամ այսպէս՝ ու գնաց Բազրաս:

Ողբերգական բազմահասար վէպի մը շափ կրակ ու տիրութիւն կայ Աշխէնին մէջ, կարօտ կայ, Բազրասը գրիթէ ճամբած ըլլալուն զղջումը կայ: Այսուհանդերձ ամուսինին աւջեւ անկեղծ ժպիտ է ան, աղջկան առջեւ՝ ուրախ արտայայտութիւն, տազերուն, տայո՞ղ եւ ուրիշներուն ներկայութեան՝ զուարթ խօսք ու դիմադիմ:

— Ա՛յ, ժպիտը ուրիշ քան է: Հարկ է ժպտիլ նոյնիսկ կոյրերուն, քանի որ ժպտուն դէմք մը աւելի շոյս ունի, քան մտայլ դէմք մը: Կարծեմ կոյրերը պէտք է զգան մեր դէմքերուն որակը: Յետակ է, յստակ՝ մեր կենանքին մեղի պատկանողը մասը մեր ներսն է՝ արտաքինին մէջ ուրիշները եւս բաժին ունին, թեւեւ առաւելադոյն բաժինը: Այնպէս ընենք, որ զառն շրջայ ուրիշներուն բաժինը, յիշելով միշտ, որ կրնայ ամէն մարդ գազտնի գաւնութիւն մը կերակրել ներսը:

Բայց ինչ որ կը հնչէ իր մէջ ժպիտ եւ տիրութիւն բառերուն հետ, ամուսինի գիտուն կարծիքն է՝

— Ժպիտը զեղազիտական առաւելութիւն մըն է, տիրութիւնը՝ աւեր մը:

Ձ'ուզեր՝ որ տղեղնայ: Չ'ուզեր՝ որ զազկո էջ մտածուի իր մասին, մա՛նաւանդ Վահէն ունենայ այդ մտածումը: Ճիշդ է, Բազրաս կը գնահատէր տիրութիւնը իր վրայ, պայմանաւ, որ արցունքներու չյանդի. բայց եթէ Բազրաս կը գնահատէր թեթեւ թախիծ մը դէմքին վրայ՝ կը պաշտէր ուզողակի ժպիտը:

Իսկ ամէնէն կարելու կը մտածէր Աշխէն.— պէտք է ծածկել ամէն ինչ իսկ ժպիտը լաւապէս ծածկողն է քրտի խնդիրներուն:

Իր աննի կացութենէն թիւ մը դուրս գալու համար, տալեւապի սուր պատհեր կ'ապրի Աշխէն: Այդ տուայտանքի ծայրագոյն որութեան մէջ Աշխէն կրնայ մաղթել նոյնիսկ, որ Վահէն կտառի ուրիշ կնոջ մը, ուրիշ՝ Բայց երբ տալեւապը յարաբերարար մեղմանայ, խորունկ գոհունակութեամբ մը կ'արատասանէ կարծես.

— Ան իր սիրտը չի՛ տար ուրիշին: Ամուր է, մ'ս եմ, որ վիշտ եմ:



Ոչ ոքի կեանքը այնքան փրած չէ սակայն, որքան Աննայինը: Գոնէ իրեն այդպէս կը թուի: Հիւանդ է մէկը — ոչինչ: Մուռթիւններ ունի՝ — ոչինչ: Կը սիրէ՝ չի սիրուիլը՝ — ոչինչ: Կեանքին ահա որագոյն պատիժը ամուսնունն է, մա՛նաւանդ կին էակներուն համար: Եւ Աննա ամուսն է: Ինչպէս դիակէ մը բան չես յուսար, պէտք չէ իրձէ եւս յուսաս:

Քառասուն տարեկան է, եւ դեռ գեղեցկութիւնը չէ դադարած յորդելէ անոր դէմքին ու մարմնին բոլոր մասերուն վրայէն: Կին մը էսպէս, ամբողջապէս կին ընկնու բոլոր կատարեալ արտայայտութիւնները կան վրան: Կը թուի սիրոյ, կիրքի եւ մայրութեան համար միայն այնպէս եկած բացառիկ գեղեցկութիւններէն մէկը: Ու գեղեցիկ կին մէն է՝ սակայն չոր, ապարդիւն: Զուր իզուրիւն մը, որուն արեւը դատապարտուած է անճառագայթ մնալու, անճառագայթ եւ աննշոյլ կորուսելու մահուան մէջ:

— Ի՛նչ է դաւակ մը, եթէ ոչ իր ձօր արեւնին ճառագայթումը դէպի ապագայ, դէպի յաւերժութիւն: Ամէն դաւակ, Սուբէն, ձօր մը սրտին պայծառ շողն է:

Տասնհինգ տարուան Հին խօսք է ասիկա, Հին պատմութիւն: Սուբէն եկած էր Արեւելք իրբեւ ընկերութեան մը ներկայացուցիչը. Հանդիպեցան իրարու ծովեզերեայ շքեղ պանդոկի մը մէջ, ուր մօտ երկու ամիս պիտի մնար Սուբէն: Անթերի անգլիերէնով մըն էր, որ ծանօթացան իրարու, յետոյ տղան դժ հեղաւ, որ աղջիկը անգլուհի մը չէ, այլ՝ շնայխարհիկ գեղեցկութեամբ ազդակեց օրիորդ մը: Առաջին տեսակցութեան պահուն իսկ համակրանքի կամուրջ մը նետուեցաւ երկու հոգիներուն միջեւ: Տեսակցութիւնները կրկնուեցան, հետզհետէ յանախակի դարձան, իսկ նշանաւորէն երկու շարքաթ առաջ, առանց բացառութեան ամէն օր իրարու կը հանդիպէին:

Աննա եւ Սուբէն կը սիրէին իրար: Կարծեր կը զգային ամէն պահը իրարու ներկայութեան: Բացակայութիւնը ծանր տառապանք մըն էր այլեւս իրենց սրտին մէջ: Նիւթական, բարոյական ու ֆիզիքական պայմաններով ամէնէն յարմար զոյգը կը նկատուէին ամուսնութիւն մը երջանիկ դարձնելու համար:

Սուբէն, քանի որ Ամերիկա վերադարձի թուականը կը մօտենար, կ'ուզէր փութացնել ամուսնութիւնը: Նոյն ատեն դրած էր Նիւ Եորք, ընկերութեան կեդրոնատեղին, ամիս մը եւս երկարաձգելու համար իր բնակութիւնը Լիբանանի մէջ: Դիմումը ընդունուած էր, եւ Աննային մտքէն չ'ելլէր բնաւ ուրախութիւնը, որ կը ճառագայթէր Սուբէնին ամբողջ անձին վրայ:

Նախքան ամուսնութիւնը, մօտ երկու ամիս, միշտ միասին էին: Ամառ էր, եւ անոնք այցելեցին Ծովեզերքի բոլոր նշանաւոր քաղաքները, գիւղազնացութեան բոլոր հրաշալի փայտերը: Սր մը Պաալպէքի հուշակաւոր աւերակներուն մէջ էին, յաջորդ օր՝ Սէւր, ուրիշ օր մը՝ Պէյտ էտ Տիւնի պալատը, չի սիրային Լիբանան, հարաւային Լիբանան, Հայկի, Տէր-Ջօր, Պլուտան: Տեղ չմնաց, որ չերթան այս երկիրներուն մէջ: Ու չեղաւ, որ փախչեն ասիքը ներկայ ըլլալու Լիբանանի բարձր դատակարգին կողմէ կազմակերպուած պարսկահանդեսներուն:

Վայելքը կատարեալ էր այդ ամիսներուն: Դրամ, սէր, գեղեցկութիւն — ամէն ինչ կար, ամէն ինչ առատօրէն կար: Սուբէն ո՛չ միայն խենթի պէս զինք կը սիրէր, այլեւ հաւնած էր իրենց ամբողջ ընտանիքը:

— Աննա, այսպէս ուրախ եւ ներդաշնակ ընտանիք մը կեանքի հազ-

ւաղէպ բախտաւորութիւններէն մէկն է, մանաւանդ մոայտութեան վարժըւած ձեր Արեւելքին մէջ:

— Իրաւունք ունիս,— պատասխանած էր Աննա,— ձեր երկիրներուն ամէնէն հաղուապիտ ապրանքը ծպիտն է. թախիծ եւ ջղայնութիւն՝ ուղածիդ չափ: Պատաս կ'ըսէ: «Պէտք չկայ մոայտ-մոայտ գեղերելու. քաղաքակիրթ շինք, եթէ չմտունք ջղայնութիւն ըսուած հին ու վայրենի բանք»:

— Այո՛. թէեւ իրականին մէջ հակառակը կը պատահի. քաղաքակիրթութեան հետ զարթոյթն ու անհանդուրժողութիւնը կ'աւելնան ժըւ. ժիւղչեա պէտք էր պակսէին: Բայց պատան իսկապէս շատ հետաքրքրական մտքը մը կ'երեւի. չես գիտեր որչափ կը համակրի՞մ իրեն, որչափ Արեւելքի մէջ...

— Գիտե՞ս, Սուրէն, երբեք չեմ մտնար. երկու տարի առաջ Հայ-Աքուլի աւարտական դասարանն էինք: Ունէինք անգլիերէն լեզուի դասախօս մը, որ Հօրս պէս ծերուկ էր եւ լաւատես— Արեւելքի երկիրները,— կ'ըսէր,— արտադրած են առաւելարար աւազ, արժաւ եւ թախիծ: Տեսակ-տեսակ սարկու-թիւններ տուած են կեանքին, տեսակ-տեսակ բունութիւն: Բայց նայի՛նք, բայց նայի՛նք,— կ'աւելցնէր,— ձեր երկիրները պայծառ երկիրք ունին, եւ դուք պէտք է հետզհետ ծպտիք, քանի որ հետզհետ ձեր հողին հողիէն միայն ծպիտ պատահանող բան մը կ'ըլլէ — ֆէթրոյ: Այնպէս ուսած, խոշոր ծայրոզ արտասանեց «ֆէթրոյ» բառը, որ ամբողջ դասարանը խնդաց:

— Մեր կալազախօտը ուրեմն ասկէ ետք՝ ֆէթրոյ եւ ծպիտ,— պտուցինք մէկ բերան: — Այո, — յարեց,— ֆէթրոյ, ֆէթրոյ, թէեւ սեւ, բայց քաղցր ծպիտ մըն է ան:

Երկու ամսուան մէջ Սուրէն Աննայեց առունին հին անդամներէն մէկը եղած էր արգէն: Եղբոր պէս էր վազուտան աներմաքներուն հետ, առնը նոր եկած Հարսին, Աշիւնին հետ:

— Ապահով եմ, որ եթէ քոյր մը ունենայիր՝ Աշիւնէն աւելի կուզուած պիտի շրջայինք իրարու: Վաճէն բախտաւոր եակ է:

— Ըսէ՛, թեպէ՛ պէս, թեպէ՛ պէս:

— O; darling! ես աւելի, ես աւելի:

Ի՞նչ յարմար կային տասնհինգ տարի առաջ, որչա՛փ իրական կը թուէր երջանկութիւնը:

Այրած դաշտանկար մըն է հիմա Աննայի հողին: Երբ առուն է՝ կ'ուզէ ծած առաջ փնտառի այդ բոլորապիսի մութ դաշտանկարը, փախչի տունին սո-վորական ու սառն զուարթութիւններէն: Պզտիկ տոբի՞ մը, եւ կը նետէ ինքզինք ինքնաշարժին մէջ. կը մտնէ ամայի ճամբաներու մէջ ու կը զննէ կառքը զլիսապտոյտ տուող արագութեամբ: Կ'ըսեն. «Կառպեր է այս հարուստ կինը»:

— Կ'ըսեն. «Accident պիտի ընէ, պիտի զարնուի ծայրի մը, պիտի ինչայ մտի մը մէջ»: Կըլոյթը կ'արագանայ սակայն հողիին մէջ, եւ անիւները կը թաւային այդ ամուշ հողիին սարսափելի կըլոյթով, մինչեւ որ կանգ առնէ անտառի բա-ցասին տուփէ:

Առանձնութիւնը կը թուի պահ մը Աննային բուն տեղը, բուն վայրը, բուն բնակարանը: Կը հանդիպի հուն իր սիրտին, իր ամբողջական խորունկ ցաւ-ւերուն, զորս կը զգայ, թէ պէտք է լիովին կրէ ինք: Միտերու մէջ չզործող ցու-մը եւս առաւել անտանելի ցու մըն է. հա՛րկ է որ ցուերը ստի՞թ ունենան փրթիլու հողիէն եւ բաշխուելու նաեւ մարմնին վրայ, արզնոցի նուազ ան-հանդուրժելի ըլլան, նուազ ջղայնացուցիչ: Մարմինը պէտք է օժանդակէ հող-գիրին՝ կրելու կեանքին խոշոր ցուերը. իսկ ստիկա կ'ըլլայ առանձնութեան մէջ, մարգարդէ հնուու բնութեան մէջ:

Ու թէ ստաւապանքէն փախչելու, այդ ազատագրին իր անտապանքին մո-տենալու եւ միտապու համար է, որ Աննա կը փնտառէ առանձնութիւնը: Ջիւնք

ստեղծողները կը կարծեն, թէ բնութիւնը սիրող մեղմագծու կին մըն է եւ կամ զգեցիկ տեսարաններ փնտռելու եւ բժրոշխնելու գիւրութիւն ունեցող շփոթած արարած մը: Բայց ծով, լեռ, ձոր ու հովիտներ կը գիտէ ինք, թէ կը նայի տեղ մը, ուր բոյսի եւ բուսանելու գաղափարն իսկ չկայ, ծնունդ ըսուած բանը արգիլուած է ընդմիջում:

Աննա ինքզինք կը տեսնէ՝ առանձնութիւնը հայելի ըրած:

— Սէ՛ր եւ ամուսնութիւն:

Այս նրկու բառերուն փշապսակին տակ ցաւը կը թմբեցնէ եւ կ'անուշաքննէ: Լաւ է այսպէս: Ժպտանք ընկերային ու ընտանեկան պարտադրանքները չկան: Իր սեփական մարմնէն, սեփական հոգիէն եւ ասոնց դժնդակ պարտադրանքէն զատ ուրիշ մէկը չկայ, եւ ինք ազատ է հոս, բոլորովին ինքզինք ըլլալու, ինքզինք զգալու, միայն ինքզինք ցոլացնելու: Ամայի բնութեան մէջ ահա ինք եւ իր կեանքին Ֆիլմը:

Հինգ տարի առաջ, օր մը այդպէս, անՖալթապատ լայն խնուղիէն բաւական հեռու, ընկողմանած էր մեծ եւ սաղարթախիտ մայրիկ մը հովանիին տակ: Աշնան յետ-միջօրեի զմայելի պահերէն մէկն էր. օդը բիրենդի պէս թափանցիկ, այլ սիրտը նորէն լեցուն անցեալի ախար եւ անթափանց պարումանքով: Կր յիշէր Ամերիկան — ճոխ, գիտուն ու լաւատես այդ հանրապետութիւնը՝ կապո՛յտ-կապո՛յտ անասնամտութիւններէ անդին, որուն երջանիկ քաղաքացիներէն մին եղաւ ինք, կարն աստե՛ն մը: Երեւակայութեան ի՛նչ մեծղի իրազորմամբ մարդ արարածին միտքն ու աշխատանքը ի՛նչ նուաճումներ կատարեց էին այդ աստուածընտիր երկրին մէջ: Որչա՛փ ամէն ինչ փայլուն էր, որչա՛փ խոտմանայից, մա՛նաւանդ ամէն ինչ որչա՛փ հնարաւոր: Կա՛ր բան մը հոն, որ չբազմապատկուէր միշտ, չաճէր շարունակ, չզննեցկանար օրըստօրէ: Կա՛ր բան մը, որ մէ ուրիշ բան մը ծնունդ չառնէր: Երկիր մը տեսաւ հոն տաւաքայր յոյի, տեւաքայր մայրութեան մէջ, տեւաքայր ծնող, արտադրող, հարազատութեան, առատութեան ու շարունակութեան ձգտող: Երկիր մը, օրուն սէրն ու իսկալը ամուլ չեն:

— Օ՛, արզանդը, որ լուռ է կեանքին զէմ, համբ, մեւեա՛լ:

Յուշերէն բխած այս անձկայրեաց մտածումը ճնշեց կուրծքին վրայ:

Առաւ զլուխը ափերուն մէջ ու լացաւ:

— Օ՛, հո՛ն ալ, հո՛ն ալ:

Հոն, այդ շատ երջանիկ երկրին մէջ եւս կային իրեն պէս դժբախտներ, դատապարտուած իրենց սէրն ու արիւնը շտեմնելու երբեք հարազատի մը մարմնին մէջ կեանք առած: Գիտութիւնը չէր կրցած յաղթել ամուսնութեան:

— Սուրէ՛ն, Սուրէ՛ն:

Ի՛նչ ազնիւ երիտասարդ էր իսկապէս, եւ սէրը որչա՛փ ամուր էր, խոր ու իրական անոր մէջ: Ձեր ուզեք, որ կիներ պղտիկ եւ նուաստացած զգայ ինքզինք իր ամուսնեան համար: Ձեր ուզեք երբեք, որ տառապի: Ուրախ էր միշտ աւելի քան երբեք. առիթ կը ստեղծէր նուազագոյնին ինչնեղու մայրութեան եւ զաւկի առաւելութիւնները, շմոռնալով թուել երբեմն անոնց կարգ մը անպատեհութիւններն ալ:

— Աննա, կարեւորը սէրն է, զօրաւոր սէր մը ինքնաբաւ է յաճախ. զաւկի մը չդոյութիւնը միջակ սիրողներուն սէրը կրնայ վտանգել, բայց մեծ սէրերու համար կարծե՛մ թէ տեւականութեան խթան մը պէտք է ըլլայ:

Գու լար, կու լար Աննա:

— Սուրէ՛ն, օ՛, Սուրէ՛ն ջան, չեմ կրնար ներել ճակատագրին, նոյնիսկ Աստուծոյ՝ որ քեզ պաշտող կիներ պատճառ դարձուց քու անզաւակ մնալուդ: Ես արիւնիկ ուղիւ արգելք մը եղայ, ապագայիդ առջեւ բացուած գերեզման մը, ծա՛նք գերեզմանաբար մը:

Սուրբն կը շոյէր մազերը, կը համբուրէր ճակատէն, կը ժպտէր.

— Խաղաղէ՛ տարլիձկ, խաղաղէ՛ ինծի համար զաւակները կրնան յոգնութիւն ըլլալ, անվերջ տաղտուկ, սիր չսփաւորող բան մը: Լսած եմ, կը շտեմ յաճախ, որ զաւակները կը շտեմնէ ծնողքին հոգին, մտածումները եւ կեանքի շատ մը թանկագին բաներ: Իբր թէ յաւերժութեանդ թելը բռնած կը տանին, բայց ի՞նչ, պատրաս՛ք, անոնք եկած են ճիշդ քեզ թաղելու համար, յաւերժութիւնդ կատարեցիս համար. իրենք զիրենք ըլլալու համար պարզապէս եւ ոչ թէ քու շարունակութիւնդ: Հոգիները շարունակութեան պէտք չունին: Կան արդէն ու կան միտ: Ձաւակ մը իր հօրը հոգիին շարունակութիւնը չէ, այլ միայն սա չոր բնութեան երկարածումն է: Իսկ հոգին կայ. մենք կանք, անուշիկ Աննա, մենք կանք:

«Միտքիս անք, միտքիս անք», կը մտածէր Աննա եւ կը զգար երախտազիտութիւն մը՝ բառ ըստածին հանդէպ, որ տուեալ պահու մը հմայիչ զօրութեամբ մը կը փութայ միտքիս քեզ:

Արեւը բուսական ցածրացած էր, եւ հետուն, ծովուն վրայ, քանի մը առաքատանաւեր կ'երեւէին: Բլրակողերէն, այդիկ այդիկ ցատկելով, այնան քամիկ կտորներ կը փաթթուէին սաղարթախիտ մայրիկն ճիւղերուն: Վարը, մինչեւ ձոր հասնող մայրիկ մեծ ու փոքր ծառերու անտառ մը սկսած էր արեւին ոտկնող ճառագայթներուն տակ մեղմօրէն ծփալ: Աննա կը մտածէր այդ բոսկիլին Նիւ. Եորքի այն զժոխային իրիկուան մասին, երբ հեռագիր մը Խաղաղականի կղզիներէն կը հաղորդէր մահը իր «պաշտելի» Սուրբնին, զո՛հ՝ օղանաւային սարսափելի արկածի մը: Որչա՛փ խաւար էր այդ պահը, Աստուած իմ, որչափ խաւար՝ Մարած էր: Եւ պիտի մտէր կարծես դարձեալ, տարիներ հետք. Լիբանանի այդ գեղեցիկ բարձունքին վրայ, երբ Էլիֆ կղզիներէ բաց գոյն բանկուն հազած չէկ երիտասարդ մը տեսաւ, որ ուղղակի դէպի իր գտնուած տեղը կը յառաջանար:

Առաջին խօսքը եղած էր կղզիներէ բաց գոյն բանկուն հազած չէկ երիտասարդին, վերջին ծայր քաղաքա՛վար ու ժպտուն՝ զլանիկ մը խնդրել իրմէ, քանի որ իրը մէկ ժամ առաջ հատեր էր ուրիշ ձորագլուխի մը վրայ: Կապոյտը զոգքան քաղցրացած չէր տեսած ուրիշ որեւէ բանի վրայ, քան այդ երիտասարդին աչքերուն մէջ: Մեղմ, շոյող, տենչացող կապոյտ մը կար այդ աչքերուն մէջ, արտայայտելի կապոյտ մը: Վայրկենաբար, կեանքին ամէնէն գեղեցիկ անակընկալներէն մէկը ելած էին իրեն այդ աչքերը: Այնքան զատ, այնքան անձնակախ, բնականաբանէն այնքան հեռու էին անոնք: Յուշերու եւ սուգի մէջ մխրճուած հոգին ցնցում մը կրած էր յանկարծ:

Այս եւ ուրիշ որեւէ պարագայի տակ, սեւէ մէկը կրնար քաղաքա՛վարութեամբ կամ խոտորէն ճամբու գնել Աննա, բայց երբ կղզիներէ բաց գոյն բանկունով երիտասարդը շոյող, կարեկցող իր մեղմ նայուածքը աչքերուն թոյլաբուսութիւն խնդրած էր զլանիկը այդտեղ ծիսելու, համաձայնող լուսութիւն մը իսկ չէր կրցած պահել, այլ գիրնաք՝ պատասխանած էր: Տիրած էր յետոյ, վերադարձած բնական վիճակին:

— Որքա՛ն մինակ կը թուիք, տիկին, — ըսած էր տղան, — գեղեցիկ, տխուր, մինակ:

Ձեր պատասխանած:

— Պէտք է փախչիլ տիրութեան առջեւէն, տիկին, պէտք է փախչիլ: Ու թէեւ արուեստին հոգին է տիրութիւնը, այսուհանդերձ մարդ անկէ արժէքաւոր ուրիշ բան մը ունի՝ — կեանքը:

Նորէն չէր պատասխանած, բայց այս անգամ մեղմօրէն գլուխը դարձուցած՝ նայած էր անոր աչքերուն: Կարեկցութեան ու տենչանքի քողքը դիտեր էին անոնք, մեղմ, գիտուն, վտանգաւոր:

Յայտնեց, թէ նորվեկիացի է ինք, մանկութիւնն ու պատանութիւնը անցած են Փիորդներու ցուրտ երկրին մէջ, մառախլամած երկինքի մը տակ, բայց ահա Քան տարի պիտի ընէ շուտով, որ ընտանեօք հաստատուած են Միացեալ Նահանգներ եւ Քաղաքացի դարձած: Յայտնեց թէ ընտանիքին անդրանիկ զաւակն է ինք եւ իրմէ ետք կան հինգ ուրիշներ, որոնց մէջնէն փոքրը, ընտանիքին միակ աղջիկն է: «Ազուոր է, աղու՛ր, ես եւ ինք նկարիչ ենք. հոգայրներս բոլորը շահարեւր մարդեր ընտրած են. քոյրիկս եւ ես կը պատկանինք արուեստին»:

— Անր քոյր աչքերը անշուշտ կապոյտ են, հաստատելու ձեւով հարցուցած էր Աննա:

— Ընդդ իմ աչքերս են, քիչ մը աւելի խոշոր:

— Իրա՞ւ:

Ու նայած էին իրարու, նայած:

Օ՛ր, այդ րոպէն, այդ երկար, խորունկ, տարօրինակ ըրպէն: Պարուրոյ, տաք, բեղմնաւորիչ նայուածք մըն էր Փիորդներու երկրէն եկած այդ երիտասարդ նկարիչին նայուածքը: Կապոյտ եւ խորհրդաւոր բեղմնափոշի մը լուծուած էր կարծես այդ աչքերու լոյսին մէջ, որ երկար ըրոպէ մը ջերմութիւն ու կենսք ներմուծեց իր երակներուն մէջ:

Բայց չէր ուզած, որ համբուրէ զինք. հրած էր մէկն շարժում ետ: Մնաք բարով ըսած, ուղղուած գէպի ինքնաշարժ: Ի գուր անցած էին նկարիչին բոլոր ազաշական բառերը. ա՛յ չէր նայած անոր. ինքնաշարժը հանած էր ճամբայ եւ իրիկուան ստուերներուն մէջ առանձին ձգած հեռաւոր հիւսիսի զինք սիրող անծանօթը լիբանանեան գառիվերի մը գլուխը:

— Սէ՛ր, ես ամուլ եմ, սէ՛ր...

Կը յիշէ հիմա: Այդ բառերն էին, որ կը փրթէին մարմնին բոլոր բջիջներէն եւ մահուան տիրապոյն կողնակի պէս կը հնչէին ականջին մէջ. այդ բառերն էին միայն, որ պիտի գլորէին զինք անդունդ, եթէ ազատարար ծառը չըլլար:

Աստուած՝ ամառստ լիպակէ մը)

Ե՛ՆՈՒԱՐԴ ՊՕՅԱՃԵԱՆ



Է. ՍԱՐԱՃԵԱՆ

ԳՈՂՈՐՇԻ

Յանցառ ցաւերու տառապանքէն կայ  
 Յրուած ձայնի զուսպ բեկորներուն  
 Եւ  
 Յամբող կենսանիւթի տեղանքին մէջ,  
 Որ այլ կարող չէ  
 պայթեցնելու բանին բաժանելիութիւնը:  
 Մտերիմ բաւարարութեան  
 Գազափարը աւկայ է,  
 Գազջ ջուրի դանդաղ պղպջակներուն մէջ:  
 Պաշտպանուելու փնտռումիքը  
 Զովացուած արհեստական օդին մէջ  
 Գալարուն՝ հետզհետէ գոլորշի  
 Թլփատուած մտածմունքի էղանցքին  
 Երկրպագու:

Կորուստէն վեր  
 Այլ կարօտի արգելքին  
 Զսպանակուած կեցութիւն  
 Կարիքի կարողութեան.  
 Օրհնաբեր՝ հարկադրուած հրաժեշտին  
 Կարօտովը  
 Երկփեղկուած:

ԱՌԱՍՍԱՆՈՎ ՄԻԱՑՈՒԱԾ

Դրամապանակի ծախքերուն կը ձմեռեն  
 Խնդրարկուներու գեղեցկագիտական նուէրներ  
 Ու  
 Յառաջիկայ ամսուան  
 միջին ուղիւորները գրանցուած:

Հաւանական քակտակներու այցելութիւնները

Անտեսանելի առատանով միացուած  
 (մանկական այն խաղիւն նման),  
 Որուն մատնեց թէն կրնային մատչիլ  
 Բայց՝ շարժանկարի պատտանին վրայ երեւցող  
 կամ կարգ մը անիրականանալի  
     երագներու նման  
     անէացող ու հետզհետէ  
 Համարեա՛ փախչող անկապ բուսնշաններ են:

Գրամապանակի ներքնախցիկները  
 Քու հասցէով մակագրուած  
 Հեքիաթանման կեցութեան խոստումով  
 Սակարանային յանելումով պարարտացող  
 Ակնթարբի ազիւտակներ են:

Ամանորի մշտադալար ծառին վրայ  
 Պսպղացող՝ զանգակի, լամբի կամ  
     սիրամարգի նման աճող  
     խիտ, անկատ  
 Սազարթներու ստուերին մէջ  
 Հանգչող գեղեցկութիւնները  
 (մութեան կերպու յանելումով)  
 Սպառողական թերթերը օրացոյցի  
 Գործադրելի՛  
 Դագազի մը զնման առթած փութկոտ  
 Այլ անհերձելի անհրաժեշտութեան  
     Տամարակալներն են:

Է. ՍԱՐԱՃԵԱՆ

Յ. ԿԱՐԱՊԵՆՑ



Արագ սափրուելուց յետոյ Ծրէզը կարծիր փողկապը կապեց, կզակը վեր ցցեց, Հայելու մէջ ծամածոնց դէմքը եւ մտքում «Սանտա Լուչիա» երգելով, սասիճաններէց վար իջաւ. հաշտանձակ, ոտքի վրայ մի քանի կում սուրճ խմեց, Հպանցիկ համբուրեց իր կնոջ քնաթաթախ այտը, ժամացոյցին նայեց, կապոյտ բանկոնը հագաւ, դուքս ելաւ. պարտէզ՝ ապահով, որ իր մանչն ու ազնիկը տակաւին մէկ ժամ ունեն միջեւ. դպրոցական հանրակոթքի գալը:

Սեպտեմբերի 23ն էր: Մառախուղը մէկ սունայափ գորշ գորգի պէս նստել էր ծառուզու վրայ: Այստեղ ու այնտեղ, տերեւները զեղնել էին: Մաքուր, խոնաւ օդը կաղզուրեց նրան: Քայլելիս նա զգաց իր սեփական օժանելիքի բոյրը: Կրկին ժամացոյցին նայեց: Ժամը 9ին կը հասնի Նիւ Եորք, իր դրասենեակը: Խնձորենու տակից անցնելիս, նա կուայաւ, մի խնձոր ջուկեց, քսեց տարատին, խածեց, մնացեալը նետեց: Կրֆիլդի բարձրունքներից միջնու շաղաք մէկ ու կէս ժամ էր, եթէ ինքնաշարժերի խճողումէ չհանդիպի: Ճանապարհին, ձայնաժապաւենի վրայ կը լսի ելեւմտական վերջին զեկոյցները եւ զինուած կը դիմաւորի օրը: Վաղը շարաթ է: Մինչեւ կէսօր կը քնի:

Կառատան առջեւ նա մեքենական միապաղազ բզզոց լսեց: Կառատան սպիտակ դուռը բացեց: Սեւ քաղիլակի լոյսերը վառ էին: Զարմացաւ: Մի՞թէ վառած եմ թողել լոյսերը: Սակայն ինչո՞ւ է այնպատու մեքենան: Մօտեցաւ, ներս նայեց: Ինքնաշարժի մէջ բանալի չկար: Բանալին իր ձեռքում էր: Քաղիլակի կափարիչը բացեց, ստուգելու եզելու թիւնը: Մեքենան կիզիլ գոյօրշի լակի: Ծրէզը ափերով ծածկեց դէմքը, Քաղիլակը հանեց, սրբեց երեսը: Երբ փոխեց Ծրէզը ափերով ծածկեց դէմքը, Քաղիլակը հանեց, սրբեց երեսը: Երբ փոքրեց գոցել կափարիչը, մեքենայի իւզատար խողովակը պայթեց, սեւ իւզը

ցայտեց նրա վրայ: Այդ պահին ինքնաշարժը սկսեց ցատկոտել իր կանգնած տեղում: Կափարիչը աղմուկով վար իջաւ: Տրէզը որոշեց բանալիով դադարեցնել ինքնաշարժի մեքենան: Հազիւ մէկ քայլ մտնեցաւ ինքնաշարժի դռանը, ապակիները սկսեցին վեր ու վար իջնել: Ապակեմահանի վրայ անձրեւ արդէլ թեւերը խելագար թափով դարձան բեւեռից բեւեռ: Նա բացեց դուռը եւ այն է ուզում էր տեղաւորուել նստարանի վրայ, երբ դուռը ուժեղ փակուեց, ճգմելով նրա աջ թեւը: Թեւը ազատելու համար մետաղէ ատամներից, նա թեքուեց, գլուխը ներս խոթեց: Դուռը լայն բացուեց, ապա ահագին թափով հարուածեց նրան: Տրէզի գլուխը վայր ինկաւ իր ստեբրին: Այնտեղ, ուր վրդն էր, արեան շատրուան գոյացաւ:

Արեւը կանգնեց Հասարակածի պորտին, օրը կիսեց երկու Հաւասար միւսորներին: Երջը առաջ խոյացաւ, լոյսի գերանները խրուեցին երկրի ընդերքում, բեղմնաւորեցին ցամաքն ու ծովը: Երգեցին անտառները: Միծաղեցին ծաղիկները: Ովկիանոսներում ձուկերը լսեցին լոյսի կանչը: Երկրագունտի շուքը, շաւիղների բաժանուած՝ մտաւ տիեզերական փոշիների մէջ: Մի կին նստեց պատուհանի առջեւ, իր անցեալը լիչեց: Անցեալը քերեց նրա ներսը: Նա ուզեց լալ, սակայն լացելուց առաւել՝ ուզեց անէանալ: Ցուշերի անձրեւը տեղաց նրա չոր ներկայի վրայ: Նրա հետ արտասուեցին աշխարհի բոլոր մայրերն ու կոյսերը: Քաղաքներում բազմութիւնը, բան-ու-գործ թողած՝ ուք-ըն-ուլ պարեց: Ռիթմը մտաւ մարդկանց արեան մէջ: Ռիթմը եռաց սայլատակի վրայ, ճճուեց շէնքերի տանիքներից: Նոյնիսկ խաճմերուկի ուտիկանը ծափ տուեց, գարձաւ իր կրուակի վրայ: Աւաններում ու գիւղերում տեղացիները շուրջպար բռնեցին կենարոնական հրապարակում եւ ամէնուր փիթիարի շուշաններ բացուեցին: Գիշերը միացաւ ցերեկին, արանքում բան չմնաց: Էլիկտորոնիկ աչքերը բռնեցին պահը, չիմացան ի՞նչ անեն: Չայները բաժմացան, բիւրացան, ապա բիւր անգամ բազմապատուեցին՝ աւետելով արեւի առնական մուտքը: Գետերը ուռճացան, լրերը հոսեցին, հողը ծծեց անձրեւի կաթիլները: Միւս մոլորակները նախանձեցին, խռովեցին, գլուխներն առան, դարձան արեգակի շուրջ՝ դատարկապորտ ու ձեռնունայն: Մանուկը նայեց երկնքին ու որոշեց, որ անմահութիւնը սկսում է երկրում: Նա չիմացաւ, որ վայրկեանները դարաւում են իրար վրայ եւ լոյսի արագութեամբ հեռանում: Ես ի՞նչ պիտի անեմ երկու անգամ երկուն, երբ արամարանութիւնը աւելի արագ է ընթանում, քան աստղերի լոյսը: Եւ երկիրը ողբաց իր մենութիւնը, իր շնչին գոյութիւնը Համաստեղութեան անծայրածիր փոշու մէջ: Մարդը զգաց, որ մենակ է: Գրեց առաջին բառը, որը եղաւ բռնաստեղծութիւն: Այնուհետեւ մահը դարձաւ կապոյտ մի ժապաւէն, տարածուեց անհունի մէջ, ապա ամէն մի մահից ծնունդ առաւ մի կենսեք: Երկունս էլ շարունակուեցին: Մնաց մանդոլինը հօրս դրկում, որի լարերից ուսուսկան մեղերդիներ էին ծորում: Հայրս հող դարձաւ հեռաւոր Արեւելքում: Հիմա չգիտեմ ո՞վ է նուագում այդ մանդոլինը:

Ու մինչ Մարլբորո գիւղը զուարճանում էր, փոքրիկ Կրէզը անջատուեց ամբողջից, իր դեզին հեծանիւր նստեց, բունեց Վերին Մարլբորոյի գառովեր ճամբան: Թէեւ աշնան առաջին օրն էր, ամառը տակաւին շարունակում էր իր տիրապետութիւնը: Ձերմաստիճանը Փարրենայթով 72 էր: Ծոնաւութիւնը կախուել էր բլուրից, նստել ծառերին: Ասֆալթէ ոլորապտոյտ ճամբան սեւացել էր: Մինչ ինքնաշարժերը երկրորդ ատամի վրայ էին մաղլցում բլուրը, Կրէզի հեծանիւրը քամաւ պէս առաջ էր սուրում, կտրում դարձղարձիկ կիսապատոյտները, վեր արշաւում խելագար մատակի պէս: Կրէզը իր յետին թողեց կաթոլիկեան Սուրբ Ամենափրկիչ եկեղեցին, անցաւ Եպիսկոպոսական Սլյանթ Զան եկեղեցու առջեւից, թեքուեց աջ, մտաւ Վերին Հրապարակը, որի ամենա-

բարձր կէտի վրայ կանգնած էր ժողովականների սպիտակ խոտատեսք եկեղեցին, էր սեւ պատուհաններով, երկու հարիւր տարիներից ի վեր, երբ կրէզի նախահայրերը հովիտները ճեղքելով Ուսիրբէրից եկան, հաստատուեցին բլուրի վրայ, առաջին հերթին կառուցելով ժողովատեղին, քառակուսի վիթխարի մի մարտգ, որի վրայ հետզհետէ բարձրացել էր նեղ, երկնաքեր զանդապատներ:

Վերին Հրապարակը ամայի էր: Բնակիչները նոյնպէս հովիտ էին իջել՝ տօնելու արեւադարձը: Խնամքով մշակուած մարգագետինների շուրջ պոպղուժ էին բազմապատուհան հինաւուրց բնակարանները: Կրէզը հայեացքով գննեց բլուրն ի վար տարածուող արդիական շինութիւնները, համայնրը Գանրի միջնակարգ դպրոցի, ուր հիմնական կրթութիւն էին ստանում նիւ Ինգլիզի ընտրանի գերդաստանների զաւակները: Ոչ մի ուսանող չկար: Բոլորը տուն էին գնացել: Հրապարակը յօրանջում էր արեւի տակ: Կրէզը հեծանիւից իջաւ, մտաւ եկեղեցի, կանգնեց խորանի առջեւ, որը փաստօրէն ընկուզենու փայտից կառուցուած ամբիոն էր, բարձրաբերձ ու անմատչելի: Կրէզը անմիջապէս զգաց հնութեան հոտը, որը յատակի մաշուած աղիւսներից բարձրանալով կպչել էր անհիւրընկալ պատերին:

Նա ամբողջ կէս ժամ կանգնած մնաց ամբիոնի առջեւ, ընդարձացած, քարացած: Ապա նա աչքերը փակեց, յետ ու առաջ օրօրուէց, ինչոր օտարտոի բառեր մրմնջալով: Յանկարծ լուսամուտները շաշունով բացուեցին, քամու պող հոսանքներ խաչաձեւեցին միջոցում: Կրէզի դիմի մագերը վեր տնկուեցին: Երբ նա կուպրը բացեց, աչքերի փոխարէն կրակի երկու կէտեր էին գոյացել: Այդ կէտերից հրոյ սյաքներ ժայթքեցին, խրուեցին ամբիոնի տախտակի մէջ, ծուխ բարձրացաւ, ծխի տակ հրեղէն լեզուներ դուրս պրծան, զայարուեցին: Երբ նա կուպրը բացեց, աչքերի փոխարէն կրակի երկու կէտեր էին գոյացել: Այդ կէտերից հրոյ սյաքներ ժայթքեցին, խրուեցին ամբիոնի տախտակի կած միջնացքից, դուրս բացեց, դուրս էլաւ եկեղեցուց, հեծանիւր նստեց, առաջ քշեց: Հրապարակի ծայրում նա մի պահ յետ նայեց: Եկեղեցին հրդեհուում էր: Հրոյ լեզուները հասել էին զանգակատուն:

Քրնեթիբը թուժ աշունը ծօտենում է մեղմիւ քայլերով: Աշնան շունչը առաջին հերթին զգում էս միջոցում, երբ յատակ առաւօտի միջից արեւի ցոլքերը ինչոր սպիտակ երանգ են ստացել: Ծառերի որոշ ճիւղեր գեղնել են, կարմրել: Մերթ ընդ մերթ տերեւները տարուբերում են օդի մէջ, անձայն իջնում հողին: Մի աներեւոյթ ստեղծաշարից անընդհատ լուում է Եոպէնի գիշերերգը, որը փաստօրէն երգ չէ, այլ՝ հեքը մենաւոր հոգիների, կաթիլ առ կաթիլ, մինչեւ որ մի անանուն տրամուծիւն պարուբում է էուծիւնդ: Այդ պահերին զգում էս հողի տնջոցը, մի բան է ուզում ասել, ինք էլ չգիտի ինչն է սակայն գիտես, որ նոյնացել էս հողին, գիտես նրա անձայն ճիւղը, որն արձագանգում է արեւանդ մէջ: Ժամերը փոխուել, խաղեր են խաղում: Հիմա գորշ ամպեր են կուտակուել հիւսիսում, բայց ինչ փոյթ, երբ մէկ ժամ յետոյ երկինքը կապոյտի խոտուժներ ունի: Ծանապարհի եզրին երէկուայ դաշտային ծաղիկներից մահուան բոյր է գալիս: Քաղաքի Հրապարակում աղջիկները լիկնել են: Ամէն ոք մի բանի է սպասում: Մարդիկ անապարում են: Անորոշ խուճապ կայ նրանց հայեացքների մէջ: Անցեալ օրը Մեքսիկեան Ծոցից տաք քամիներ եկան, ջերմաստիճանը բարձրացաւ 87ի, այսօր քանադական օդային հոսանքներ են խուժել, ջերմաստիճանը իջել է 47ի: Այդուհանդերձ, Քրնեթիբը թուժ ունի իր ուրոյն աշունը, որը նման չէ որեւէ տեղի աշնան: Նիւ Եօրքից եւ այլ մեծ քաղաքներից այցելուներ են գալիս ըմբոշխնելու Քրնեթիբը թուժ աշունը: Մի քանի օրից կը հրդեհուի անասուն: Արդէն ամբողջ նահանգը անտառ է,

յատկապէս Լիֆօլդի շրջանը, որին բնիկ կարծրամորթները «Հաղար բլուրների անտառ» են կոչել: Այսուհանդերձ, աշու՛նը ախուր է իր զեղեցկութեան մէջ, ինչպէս ամէն զեղեցկութիւն տխուր է իր անցողիկութեան մէջ: Այդ այդպէս չէր լինի, եթէ առաւօտեան թուխար չիջնէր մարդագետիների ու արահետների վրայ՝ կապոյտ մշուշ ցանկով շորս դին: Միջօրէին արգէն լոյսերի տօնահանգէտ է, ամէն մի տերեւ վառելով իր սեփական ճրագը: Դեռ երեկոն շիջած՝ անձրեւ է մաղում՝ ամոքելով ա՛յն՝ ինչ այլեւս անամոքելի է, մարդը մարդկանց մէջ, մարդը բնութեան մէջ, մարդը իր անվերջ մենութեան մէջ ու, ստեղնաշարից իջնում են սիրոյ կայակաները ճիշդ այն պահին, երբ մուրաբկը որոշել է հոռուայ արեգակից, վերստին հանդիպելու խոստումով, իսկ մինչ այդ, տիեզերային սպասումը վարակել է Հոգիներին, որոնք չգիտեն ի՞նչ անեն, ինչպէ՞ս չի՞նն կարօտի կրակը, լինելութեան ցաւն ու բերկրանքը, սպասումը անցած օրերի եւ զեռ սպասումը ներկայի ու զայիք օրերի, որոնց միջև ձմեռը պիտի տարածի իր սառնամանիքը: Եթէ միայն լինէր սէր: Ու հիմա աշու՛նը կանգնել է շեմիս եւ հրդեհել մօտակայ ջրիգանթիմներն ու հեռաւոր թաւառաները, երբ ես գարնանային Եռուշանին եմ տեսնում, որը որք մնաց առաջին արեւագարձին, գարնան առաջին ճիլի հանգոյն: Քրնէթիքըթում աշու՛նը յու՛շ չիկ քայլերով է գալիս:

Երբ «Փան Ըմերիքըն» ընկերութեան օդանաւը օաւառնում էր Հասարակածային գօտու վրայից, Մարգարիտին մի արտասովոր զգացում համակէց: Նրան թուաց, թէ օդանաւը կանգ է առել, որ օդամուղ շարժիչները դադարել են, որ 350 մարդնոց ինքնաթիռը կախուած է մնացել մթնոլորտային ինչ-որ կետից: Նա յեռ վանեց այդ օտարոտի զգացումը, սուրճի զաւաթը դիմացի սեղանիկի վրայ դրեց, մեքենաբար թեւի ժամացոյցին նայեց: Տեսնեա այս պահին ի՞նչ է անում Մանուէլը:

Օդուղեկցուհին մօտեցաւ, վերջրեց դաւաթը, Մարգարիտին յանձնեց ճաշացուցակը՝ վրան գրուած Օրիոն, ապա երեք դեղահատների պատկեր՝ կարմիր, կապոյտ, դեղին: Մարգարիտը վեր նայեց, շճանայեց: Նոյն խարտեալ մազերով օդուղեկցուհին էր, սակայն նախկին արճագոյն համազգեստի փոխարէն հազած ունէր արծաթագոյն մի սեղմ ընդհանրազգեստ, ճակատին մի ժանեսակ, վրան՝ կանաչ մի աչք, որից շարունակ աննշան շողեր էին արճակուած:

— Ի՞նչ է, տարազահանդէ՞ս պիտի գնանք, — ասաց Մարգարիտը մտերմաբար:

— Ոչ — պատասխանեց օդուղեկցուհին ժպտալիք, — տուն ենք վերադառնում:

Մարգարիտը մի քանի անգամ աչքերը բացուիտուփ արեց, փորձեց ժպտալ, ասաց.

- Դու՞ք էլ նիւ Եօրք էք ապրում:
- Ոչ: Օրիոն:
- Երբեք չեմ լսել այդ քաղաքի անունը: Ո՞ր նահանգում է գտնուում:
- Օրիոն համաստեղութիւն, — ասաց օդուղեկցուհին, — ձեր գիցարանութեան մէջ «Ենիկ աստղը»: Մենք Օրիոն ենք վերադառնում:

Մարգարիտը բնաւ չհասկացաւ: Նա ժամանակ չգտաւ դարձանալու: Խուճապի էլ չմատնուեց, որովհետեւ կատակը անհեթեթ լինելու չափ ծիծաղելի էր: Նա իր գլուխը վեր տնկեց եւ չափազանցուած ծորանքով խօսեց.

- Ե՞րբ կը հասնենք Օրիոն:
- Ձեր մուրակի յաջորդ արեւագարձին, — պատասխանեց օդուղեկ-

ցուհին, — մենք այժմ լոյսի արագութեամբ ենք սուրում, այնպէս որ, ձեր ժամանակից առաջ ենք անցել:

Մարգարիտը նորից բան չհասկացաւ, սակայն այդ շարունակ զձերձերը եկան նստեցին նրա գիտակցութեան կիզակէտում, մտան նրա ենթագիտակցութեան ամենահեռաւոր ծալքերի մէջ: Նա աղօսւմ էր լոյս տեսաւ, արագ դարձաւ, շուրջը նայեց: Նա չհասկացաւ իր այլերին: Բոլոր ճամբորդներն էլ նոյն արծաթագոյն ընդհանրազգեստն էին հագել ինչ օդուղեկցուհին, ճակատնեւորին նոյն ժանտակն ու կանաչ այլքը: Նա շուռ եկաւ դէպի օդանաւի պատուհանը եւ կկոցեց այլքը: Անվերջանալի մի փայտուղի էր, ուր յեռնացած հորիզոններ արշաւում էին առաջ, հրճուում իրար, երկրաշափական յարափոփոխ պայթիւններ արձակում, կերպարանափոխում, դառնում հրեղէն ծով, ապա՝ սառու՝ միթխարի սառցակոյտերի ովկիանում:

Անասելի լուսութեան մէջ Մարգարիտը լսում էր իր սրտի ահադին զարկերը, այնքան ուժգին, որ ահա պիտի պատուէին իր ականջաթաղանթները: Նա ափերով ծածկեց իր քունքերը, այս անգամ լսելով իր արեան շրջանառութեան հրաշալի ձայնը:

Օդուղեկցուհին ամէն ինչ գիտէր: Նա իր ափերի մէջ առաւ Մարգարիտի ձեռքը, խօսեց.

— Մենք այստեղ, բոլորս, Օրիոն Համաստեղութեան բնակիչներ ենք: Հետազոտութեան էինք եկել ձեր համակարգութիւնը: Մեր առաքելութիւնը այլեւս աւարտուած է: Ձեր մոլորակին վտանգ է սպառնում: Դուք թունաւորել էք երկիրը: Մի օր պիտի փոշիանայ այդ գեղեցիկ ովազիւրը: Ափսո՛ս, հազար ափսոս: Ձեզ մեզ հետ առինք, որովհետեւ դուք լուսագոյն նմոյշն էք մարդկութեան: Դուք չիմացաք, սակայն Բուէնոս-Այրէսում մենք փոխեցինք օդանաւը: Դուք այժմ բարեկամների մէջ էք:

- Հապա Մանուէլը, — ճշաց Մարգարիտը:
  - Մանուէլը ուշացաւ, — ասաց օդուղեկցուհին:
  - Առանց Մանուէլի չեմ կարող ապրել, — առաջին անգամ լինելով սարսափեց Մարգարիտը:
  - Մանուէլը մահացաւ 1567 տարի առաջ, ձեր թուականով 2015 թուին, նիւ Երբքի Փուքիպսի քաղաքում: Իր վերջին խօսքը ձեր անունն էր:
  - Անկարելի է, — բղաւեց Մարգարիտը, — երէկ գիշեր մենք միասին էինք:
  - Դուք մոռանում էք, որ մենք այժմ տարբեր համակարգութեան ծիրի մէջ ենք, — ասաց օդուղեկցուհին:
- Մարգարիտը ժամացոյցին նայեց: Սլաքները կանգ էին առել 2-16ի վրայ, այն պահը, երբ օդանաւը կտրել էր հասարակածային դօտին:

Հին ծառուղին էր բլրի կատարին, ուր թղկենիներն ու ընկուզենիները, իրենց գլուխները խոնարհելով՝ կանաչ փայտուղի էին ստեղծել: Նա սովորութիւն էր դարձրել քաղաքի ամէնօրեայ ժխորից յետոյ, ամէն երեկոյ, քայլել բլուրներն ի վար դէպի դաշտերը, լինելու ինքն իր հետ, գտնելու իրեն, իր հետ՝ բնութիւնը, քանի դեռ ուշ չէ, երբ տպաւորութիւնների տարափի տակ հետըզհետ էր թանում էին իր զգայարանները, որոնք հանասակտնօրէն, դանակի պէտ որուել էին օրերի ծանրութեան տակ: Եւ նորից, առաջին զգացումը, որ նա ունեցաւ տառապանքն էր, որ իր հետ քայլել էր մանկութեան առաւօտներից եւ հիմա նա քայլում էր տառապանքի թաւուանների միջից, գիտակցելով, որ փրկութիւն չկայ, որ իր սերերն էլ տառապանքի շիթեր են եղել, որ լարիւրինթոսից ելքի իրապէս ոչ մի յոյս չկայ: Եւ այդպէս արի մէջ ամուր պահել էր վեր-

ջին լուցկին, չփորձելով վառել, թէ կուզ եւ լոյսի տակ երեւար էլքի միակ գու-  
 ուր: Նա գարմացու, թէ ինչո՞ւ այլոք չեն տառապում: Սարսափ, այո՛: Սար-  
 սափում են: Ահարեկո՞ւմ, այո՛: Ահարեկում են: Վա՞խ, այո՛: Վախենում են:  
 Սակայն չե՞ն տառապում, չե՞ն զգում զեղեցկութեան ցաւը: Նոյնիսկ բանաս-  
 տեղծներից շատերը չեն տառապում, ուղեղային մարզանքներ են կատարում,  
 սուր հակադրութիւններ ստեղծում, տաղանդաւոր գիւտեր հնարում, սակայն  
 չեն իջնում տիղմի մէջ գտնելու տառապանքի սկունքը, որը զար, քերէր մար-  
 դու ճարպակալած սրտի անօթները, ազնուացնելու նրա գոյութեան երթը,  
 թէ կուզ եւ անխուսափելի է վախճանը: Հիմա ամէն ոք աշխատում է տպաւորել,  
 զգայացունց մի բան ստել, երբ այլեւս տաշուել են Վետաֆորները, բազում  
 կրկնուած պատկերի տակ բան չի մնացել, եթէ մնացել է, ապա սակարանում  
 գին վճարող չի մնացել, մնացել է յոգնած բառը: Ահա այս էր, որ հիմա տառա-  
 պեցնում էր նրան, նրան, որ հիմա արեւադարձի առաջին օրը փորձում էր  
 հաւասարակշիւ իր կեանքը, գտնելու, թէ ո՞րն է իրականը: Կեանքը, թէ  
 առատելը, երբ խորքում գիտեր, որ պատասխան չկար, որ սիրուց առաւել  
 սերն էր սիրում, որ սիրելով հանդերձ չպիտի հասներ սիրոյն, թէ կուզ հազար  
 ծրոյց, Յունդ ու Աղլէր փորձեն հակառակը ապացուցել: Ահա այս մտորու-  
 ների մէջ էր նա, երբ մի սկիւռ ճամբան կտրեց, դիմացի ծառը մազլցեց, մի ըն-  
 կոյզ պոկեց, վար իջաւ, գլուխն առաւ եւ առանց շոր կողմը նայելու՝ անապա-  
 րեց տուն, ճիշդ այն պահին, երբ 86ի մի սեւ Օլիգոմերի կատաղած ցուլի պէս  
 առաջ խոյացաւ: Այս անգամ ազատուեց սկիւռը՝ հրաշքով դուրս պրծնելով  
 անիւների տակից:

Դաշտերը նրան ասացին, թէ չպիտի վախենալ մահուանից, առաւել՝  
 կեանքից, թէ եւ կեանքը աւելի դժուար է, քան մահը: Այդպէս ասացին դաշտե-  
 րը, շեշտելով թէ իրենք իրենց բնագրքում կը կրեն սերմը, կը բողբոջեն, կը ծլեն,  
 կը յարատեւեն, թէ կուզ ինչ էլ տեսնու լինեն փոխափաները: Նա մտածեց իր  
 անաւարտ սիրոյ մասին եւ բերկրնաքով յցուեց իր սիրտը, որ եղել է օր ու արեւ:  
 Եւ կարտը, որ նա զգաց, կարտն էր անաւարտի, այն՝ որ պիտի գար, պիտի  
 լինէր: Նա քայլեց մինչեւ հեռաւոր ծմակները, ապա վերադարձաւ այն նոյն  
 ճամբով, որով սկսել էր իր ամէնօրեայ երթը:

Պրուայ շորրոք աղէտը պատահեց Նիւ Եորքում, 78րդ փողոցի եւ Եր-  
 րոք պողոտայի միջեւ ընկած համար 176 շինութեան հինգերորդ յարկում,  
 ժամը 20ին: Այս մասին թերթերը շարեցին, որովհետեւ ապացոյց չգտան:

Վիկտորը զործից տուն էր եկել, սառնարանից գարեջրի մի շիշ վերցրել,  
 երկարել իր նախասիրած բազկաթոռի վրայ եւ դիտում էր ճնաշընջ Ղիոզրա-  
 Փիկ սոսայթիթի՞ն արտագրած մի փաստագրական ծրագիրը՝ սենեակի ամէնից  
 կայուն անկիւնում գետեղուած հեռուստատեսային ընդունիչ սարքաւորման  
 լուսապատաստի վրայ: Իր կինը՝ Ժանէթը, Մէյրիկ էր գնացել աշնանային վե-  
 րաբնու գնելու համար, որը ըստ ճնիւ Եորք Թայմզի ծանուցման, 50 տոկոսի  
 զեղչով էր վաճառուում: Ուր որ է կը գայ Ժանէթը, ուրախ, որ օգտուել է այս  
 բացառիկ պատահելից: Թի-Վին գնացել էր Հարաւային Աֆրիկա եւ ցու-  
 ցազրում էր բոս օձեր ընկերային եւ սեռային կեանքը: Մեկնաբանը այնպիսի  
 խանդաղատանքով էր խօսում այդ վիթխարի օձերի մասին եւ այնպիսի  
 քնքշութեամբ էր շոյում նրանց ահագին գլուխները, որ կարծես իր վաղձի  
 բարեկամները լինէին: Այդ բանը շիբեց Վիկտորը: Արդէն նա երբեք օձ չէր  
 սիրել: Ո՛չ միայն չէր սիրել, այլեւ յարատեւ վախ ուներ օձերից, յատկապէս գի-  
 շերները, մութի մէջ, անկողնում: Այժմ մեկնաբանը բացատրում էր բոսայի  
 մարտդական համակարգը, այնպիսի մանրամասնութեամբ, որ սարսուռ  
 զգաց Վիկտորը: Նա այն է, ուղու՞մ էր կայանը փոխել, երբ Թի-Վիի լուսապատ-



տառը թուղթի պէս պատուեց, գլուխը դուրս տնկեց ճամբան կորցրած մի բռա, շորս բոլորը նայեց, ապա առանց աճապարհու ներս սողաց սենեակ, դարձաւ պատերի ու կահոյքի շուրջ, եկաւ փաթաթուեց Վիկտորի մէջքին, կտրեց մէջքն ու կրծքավանդակը, միանգամից կուլ տուեց նրան:

Երբ ժանէթը տուն վերադարձաւ իր նոր վերարկուն հագած, սենեակի ու թիւփի լոյսերը վառ էին: Նա ձայն տուեց, դէս ու դէն նայեց, չգտաւ Վիկտորին: Մտածեց, թէ ամուսինը գնումների է գնացել: Նա նստեց ու հետուսացոյցի շարունակուող յայտագիրը դիտեց: Մեկնաբանը բացատրեց, թէ օձերի մէջ ամենածոյնն ու ամենապարտաբար նոր է սնուել եւ որ այժմ հանգստանում է: Ժանէթին հետաքրքրեց այդ փաստը:

Հենց այդպէս է լինում: Ամէն արեւադարձին համատարած ցնծութեան մէջ անանուն ողբը գալիս պարարում է աշխարհը, ժամանակը ճեղքելով երկու հաւասար մասերի, տարին երկու անգամ, հոգ չէ թէ երեւոյթը անցնում է աննկատ, արձանադրուելով մարդկանց ենթագիտակցութեան մէջ, իսկ երբ միաջը չի ուզում ընդունել աստղերի պարը, ստեղծում է օնպաշտութիւնը, յատկապէս պատմութեան տագնապալի շրջաններում՝ նախապաշարումների մէջ գտնելով սփոփանք ու իմաստ, երբ երեւակայութիւնը առաջ է անցնում իրականութիւնից, կերտելով իր ուրոյն իրականութիւնը:

Ի հարկէ, այս բացատրութիւնը որեւէ կերպ չի փրկում կացութիւնը, քանի որ արեւակային համակարգի բախտապարից առաւել՝ անբացատրելի է մարդու ներքին համակարգը, վայրկեանների ցոլքը յոյզերի ու մտածումների պատաստի վրայ, երբ մարդկութեան մանուկը շարունակ ներկայ է նրա սնվելով որոնումներում, երբ նա գիտէ՝ առանց գիտենալու, գիտէ մահը՝ առանց մահանալու:

Հիմա կրկին անձրեւ է մազում: Կաթիլները բախում են ցամաքը, հողը յազենում է, լճանում, գետի վերածում, գետերը ձեծում են ժայռերը, յորդում առաջ, մտնում ծով: Ծովը կեանք է, ծովից սկսում է կեանքը, առաջին ամօքալն: Եւ խնդութեան ճեղք, որ գալիս է, գալիս է նախաերկրային ճիշտ, երբ վիթխարի սղոյվակները վեր յառնելով պայթում են լեռների գլխին՝ բիւր ծիածաններ ցանկելով շորս դին, մեր միակ ապաւէնը, որին կառնած՝ կարմիր Փորով գրասենեակ ու աշխատանոց ենք գնում: Այլապէս ո՞վ պիտի երգի մեր երգը, ո՞վ պիտի բռնի մեր արբունքի խօլ արշաւը:

Հիմա պտրուում է մանկութեան կառուսելը: Փայտէ՛ ձիերը ուստուսում են անդադար իրենց մեքենակաւն առանցքի շուրջ, մեր կեանքի շուրջ, տիեզերքի շուրջ, ու դեռ պահը չպահանջած՝ լոյսի շառաւիղները խուժում են հասարակածի կրծքի վրայ, կիզում կիզակէտը, ապա, բռնելով մթնոլորտի շերտերը՝ բեկոււմ են, արշաւում դէպի Ասիա, Աֆրիկա, Եւրոպա, Աւստրալիա, շուտով հասնելու Արեւմտեան կիսագունտ, մեր տունն ու տեղը, մեր նախամարդոյին բնազդների օրրանը, մեր խորհուրդների միակ խորանը, ուր գտանք Աստուած ու նրա հետ մեր մահկանացութիւնը, հոգ չէ թէ շինացին շինարէն է խօսում, իմ եղբայրներն ու քոյրերը, հոգ չէ թէ ուսական տափաստաններում անմատչելի են Անդերի հոգմն ու Սահարայի լուսութիւնը, իմ հայրերն ու սրղիները, իմ մայրերն ու դասերը, մեր միակ ընտանիքը, մենակ ծուարած Կաթնածիրի լուսանցքում:

Հիմա ես լոււմ եմ աստղերի տնջոցը, ուղիւ-այիթների որդեկորոյս կոծը, որը գառնում է ջազ՝ նիւ Օրլիոնդում, սեւամորթի հաստ պոռչների վրայ ու փողի բերանից արծաթէ՛ հնչիւններ են ցուում, երբ արեան ցաւը այնքան խորն է, որ այլեւս արցունք չի մնացել, չի՛ մնացել, չի՛ մնացել, մնացել է կո-

պոյս վիշտը, որը սրտից սիրտ, կամարել է աշխարհը, նոյնիսկ էթէ Մագիսըն Սքուէր Գարդընի մէջ ուաք—ըն—նոյր առաստաղն է քանդում, փորձելով խառնել արիւնը արեան հետ, մինչեւ որ այլեւս տենդաւար կը լույսից զատ այլ բան չմնայ:

Հիմա կայ ու չկայ, հիմա կայ ու չկայ, հիմա կայ ու չկայ, հիմա մի չքեզ սօնահանդէս կայ, սօնահանդէսում մի անծայրածիր դաշնամուր կայ, բանտերից ներս տառապանք կայ, հիմա կայ ու չկայ, նոր կենսաքի խոստում կայ, սահմանադիրին կախաղան կայ, հիմա կայ ու չկայ, անհաս արտերի կարօտ կայ, մի տեղ սովաւար մանուկ կայ, նեղալում մի բանաստեղծ կայ, կայ ու չկայ, ինքն իր մէջ կուչ եկած մի հողագունտ կայ, գինուր ու հիւլէական ումը կայ, գոնէ հիմա արշալոյս ու վերջալոյս կայ, երազ ու հաց ու սէր կայ, սպասում կայ, չկայ ու չկայ, խինդ ու երջանկութիւն կայ, վիշտ ու անդունդ կայ, մեռելի թափօր կայ, մանուկին սպասող մայր կայ, կայ ու չկայ, դէպի Հրատը երկարող սանդխամատ կայ, Աստծոյ հետ խօսող թելեֆոն կայ, էլ ի՞նչ կայ:

Հիմա հեղեղել է Հասարակածը: Երկնքից Հնդկաստանի մեծութեան աբարդներ են իջնում երկրի վրայ, դարաւում իրար վրայ, աւետում յաղթական մուտքը հինաւորց պատանու, որը, կուչած արեւոտ առաւօտներին՝ չքիտէ կա՞յ, թէ չկայ:

Պ. ՀԵՐԵԱՆ

ԱՐԳԱՆԴ



Զգայութեան մատները դողողոջ  
Եզիմէի նման դեմքիս կը հպին...:

Պահն է արարման,  
Այլ սերմեր չկա՞ն.

Արգանքը սիրոյ, գուրգուրանքին իրակէզ  
Զնտան է միայն,  
Ուր արցունքով առագուած  
Մշոյ դաշտերը կ'այրին...:

Ո՞վ պիտի սանձէ ժայթքումը ժահրին,  
Որ այսօր տարի աւեր կը գործէ  
Մեր տեսողաշտին սահմաններէն ներս.

Թող պատարագի բիլ հասանքին մէջ  
Կնճորեսկի տուներուն տանիքները թեւածեն  
Զերթ միջնադարեան տաղերգուներուն  
Լարերը այուան...:

Ինչպէ՞ս, ո՞ր, ինչպէ՞ս  
Կրեմ մարմնիս մէջ այսօր գիակներ,  
Որ արքայութեան դռներուն առջեւ կը նիսիւն այսպէս,  
Միջ յարաւեզները, ո՞ր, իրե՛նց կարգին, կը թունաւորուին  
Եւ մարմինս ողջ կը փոխակերպեն մտայլ դամբանի...:

## ԼՈԳԱՆՔ



Մամուկալած պատի պէս  
Գանկո ամուր կը փակուի  
Կատաղութեանս բոլոր շարժումներուն դէմ տկար...:

Գրակալիս մէջ յանկարծ  
Կորիզային հիւլէնէրը կը պայթին,  
Մինչ արուեստի անհաշիւ թափուր ճիշեր կը ճեղգեն  
ճերբաններս յոգնարեկ-

Անուրջներու արանքին մէջ կը միայ  
Մահնակալս խորխած,  
Ուր կը կտրեմ մեզներու բազկերակը շարշարուած,  
Զոր կը յանձնեմ Մաքրութեան  
Հմայական ջուրերուն...:

Խիզախութեան վառ յայտը հոգիիս՝  
Ես կը սպասեմ իմ մահուան,  
Որ վերստին արարուիմ  
Լոգանքին մէջ խենթութեան...:

4 Հուլիս, 1996

Պ. ՀԵՐԵԱՆ

Ս. ՍԱՐԳԻՍԵԱՆ

**ՀՈԳԻՆԵՐԸ ՄԵՐԿԱՑԱԾ**  
**ԹԱՏԵՐԳՈՒԹԻՒՆ 4 ԱՐԱՐ**

**ՃՈՆԻ.**— Կրնա՞նք սկսել ժողովի:

**ՋՈՀՐԱՊ.**— Սկսինք: Նախ պետք է նախազան մը ընտրենք:

**ԱՄԱՆ.**— Ընտրենք:

**ՋՈՀՐԱՊ.**— Ես կ'առաջարկեմ Հայր Վերմէյը: Նկատի ունիմ իր կղերականի հանձնարարութիւնը:

**ԱՆԱՀԻՏ.**— Կ'առարկեմ: Ձեմ հանդուրժեք այդ սեւ ցնցոտիներուն համար նախազան ընտրել մէկը, որ կենա՞նք մէջ որեւէ բան ընելու անկարող նկատուելուն պատճառով, կղերական ձեռնադրուած է:

**ՋՈՀՐԱՊ.**— Կը բաւէ, Անահիտ: Իրաւունք չունիս նախապէս մէկը, որովհետեւ դուն բողոքական ես, իսկ ան՝ կաթոլիկ:

**ԱՆԱՀԻՏ.**— Կը սխալիս, Ջոհրապ, ես յարգանք ունիմ կոյուժով կղերականներու հանդէպ: Սակայն մեր կղերականները, զիտեմ, ընդհանրապէս տխուր, անճարակ, թույլ ու բթամիտ պատանիներ եղած են, որոնք իրենց դասակարգի բերումով, ժամանակի ընթացքին ձերբազատուած են ամէն տեսակ բարդոյթներէ, շփացած են ու սկսած են իրենց ջիթը խոթել ամէն տեղ, հաւաքած են տիտղոսներ ու պացած են աստիճաններէ վեր, դառնալով եպիսկոպոս, եպիսկոպոսապետ, կարտինալ եւ դեռ ինչ անիծեալ կարգ, որ չոյուժիւն ունի: Միջակ եպիսկոպոսի մը կենաքը, կարելի է բաղդատել բախտախնդրի մը կենաքին հետ: Համա՛միտ չէ՞ք ինծի հետ:

**ՋՈՀՐԱՊ.**— Կը բաւէ՛ ապուշութիւններ դուրս առա: Ես մէկը առաջարկեցի, դուն ալ ուրիշ մը ներկայացուր, պայմանաւ, որ այդ ուրիշը ես լըլլամ:

**ԱՆԱՀԻՏ.**— Քեզմէ աւելի կարող մարդիկ կան այստեղ: Կ'առաջարկեմ ձոնին:

**ՋՈՀՐԱՊ.**— Կնոջս հաճոյք պատճառելու համար՝ կ'երկրորդեմ:

**ՃՈՆԻ.**— Աւելորդ ժամավաճառութիւն խնայելու համար՝ կ'ընդունիմ: Թնդրեմ, որակարգեր դրէք:

**ԱՆԱՀԻՏ.**— Կ'առաջարկեմ, որ սահմանու՞մը ընենք սիրոյ: Ժանչնա՞ք թոյլատրուած ազատութիւնները: Ձե՞ք կարծեր, որ ամենակենսական հարցն է ասիկա:

**ՋՈՀՐԱՊ.**— Լուրջ եղի՛ր, Անահիտ, աւելի կենսական հարցեր կան կարծեմ:

**ՃՈՆԻ.**— Վնաս չունի, Ջոհրապ: Հարցեր կան, որոնք անպայման պետք է լուծու՞մ մը գտնեն: Միայն կը խնդրեմ, որ կարելի եղածին շափ կեղծո՞նանանք ու աւելորդ արանութիւններու մէջ չմտնուինք:

**ՁԱՅՆԵՐ**— Լաւ, լաւ, սկսինք:

**ՃՈՆԻ**— Սկսինք, առաջին օրակարգը՝ սիրոյ օրէնքը:

**ՄԱԿԻ**— Մեր քաղաքակրթութիւնը օրէնքներ սահմանած է արդէն, իրաւական ու բարոյական օրէնքներ: Իսրայելու ընթացքին կոկուած ու ընդհանրացած այդ օրէնքները չէ՞ք կարծեր, որ պէտք է պահենք նոյնութեամբ, նոյնիսկ կարիքութեան սահմաններուն մէջ՝ սեղմումներ կատարելով:

**ԱՆԱՀԻՏ**— Ի՜նչ, անփորձ ու յետադիմական դատողութիւն: Ես կը կարծեմ, թէ կին ժը, Հասուն ու կշիռ ունեցող դաղափարներ յայտնելու Համար՝ պէտք է առնուազն ամուսնացած ըլլայ: Աւելի՛ն. մէկը կարծիքներ չյայտնէ իր չհասկցած հարցերուն մասին:

**ՄԱԿԻ**— Այդ խօսքերով զիս կը վիրաւորես, Անահիտ: Ի՞նչ աւելի կըտացած ըլլա՞յու ես, Հետեւաբար կուշտ ու պահպանողական: Մի՛նչդեռ խօսքերդ...

**ՋՈՂՐԱՊ**— Կիներու անսակ կայ, Մակի, Անահիտը կուշտ ու զուսպ տեսակէն չէ: Անահիտը անյատակ հոր մըն է, անկուշտ ու անյազ:

**ԱՆԱՀԻՏ**— Ապրիտ, Ջո՛ղրապ, ոչ ոք պիտի կարենար զիս այդքան հարազատօրէն ներկայացնել: Անյատակ հոր... այո, կ'ընդունիմ, որ անյատակ հոր մըն եմ:

**ՃՈՆԻ**— Լաւ, ի՛նչ է ուզածդ:

**ՋՈՂՐԱՊ**— Եթէ ժողովը թոյլ կու տայ, ես կրնամ ըսել, թէ ինչ է Անահիտի ուզածը:

**ԱՆԱՀԻՏ**— Այո, թող ըսէ:

**ՋՈՂՐԱՊ**— Ազատ սէր... ահա թէ ինչ կ'ուզէ Անահիտ: Եւ աւելի՛ն. կ'ուզէ, որ կինը ըլլայ ընտրողը:

**ՎԵՐՄԷՅ**— Արդար չի, Ճոնի, կը բողբոքեմ:

**ՃՈՆԻ**— Կը խնդրեմ, որ առանց ձայն առնելու չմիջամտէք: Աւելցնելիք բան մը ունի՞ս, Անահիտ:

**ԱՆԱՀԻՏ**— Առաջին մտահոգութիւնն մարդկային ցեղին ազնուացումն է: Կին մը իր ցանկացած արուին Հետ միշտ լաւազոյն արգիւնքներու կը Հասնի:

**ՄԱԿԻ**— Յեղին ազնուացումը ոչ մէկ կապ ունի ազատ ընտրութեան Հետ: Ի՞նչ անձնական ցանկութիւններդ կը չփոթես ընդհանրական շահերուն Հետ: Ինչ որ դուն կ'առաջարկես, Անահիտ, անտրամաբանական է եւ նոյնիսկ քիչ ժը, կը ներես, ապուշ:

**ՋՈՂՐԱՊ**— Եստ կը սխալիս, Մակի, Անահիտի առաջարկը դուցէ անտրամաբանական է, սակայն երբեք՝ ապուշ: Ան գիտէ ինչ կ'ուզէ, եւ ձեռք կը ձգէ աւագածը:

**ՄԱԿԻ**— Ես կը կարծեմ որ այդ բոլորը խօսիլն իսկ ամօթ է:

**ԱՆԱՀԻՏ**— Ամօ՞թ, ո՞վ պիտի ամչնայ եւ որմէ՞:

**ՄԱԿԻ**— Մարդ նախ եւ առաջ կ'ամչնայ ինքն իրմէ:

**ԱՆԱՀԻՏ**— Ատիկա նախաձեռնութեան պակաս կը նշանակէ: Վստահ եմ, որ իմ տխրութիւններս յաճախ քեզ այ կը գրգռեն, սակայն նկարագրի թույլութիւնը՝ ամօթի պիտակին տակ, կը խափանէ զգացական ամէն թոփէք:

**ՄԱԿԻ**— Բայց չէ՞ որ քաղաքակրթի մարդեր ենք, պէտք է գիտնանք պատշաճին եւ յոռիին տարբերութիւնը: Այնպէս չէ՞ք կարծեր:

**ԱՍՏՂԻՎ**— Կը զարմանամ, ուրիշներն են, որ կ'ընեն այնպիսի՝ առաջարկներ, որոնց ջատագովը պէտք է ժենք ըլլայինք, ես, Մհերը, Վերմէյը:

**ՎԵՐՄԷՅ**— Բացարձակ նշմարաութիւն: Երբ այս հարցը դրուեցաւ, ես կարծեցի, թէ նախ եւ առաջ պիտի խօսուէր մեր իրաւունքներուն մասին: Թօսեցէք, ի՛նչ պիտի ըլլայ իմ վիճակս: Առաջ, ես որոշ իրաւունքներ ստեղծած էի ինծի համար, սակայն ամէն ինչ կը մնար ծածուկ: Հիմա տարբեր է: Վրաս կը նայիք իրբեւ աշխարհէն քաշուած հոգեւորական մը, անզգայ՝ ամէն մարմնային հաճոյքի: Բայց ես կը յայտարարեմ ձեզի, զիս սեպեցէք աշխարհական եւ իմ բաժինն ալ ճշգեցէք: Եթէ այս սքեմն է, որ արգելք կ'ըլլայ, ես կը պատուեմ այս աղտոտ լաթերը: Կը հրատարիմ կուսակցութիւնն: Հեռագրեցէք արբազան պապին, սաղայելին, որո՛ւ որ կ'ուզէք: Ես կը հրատարիմ հանդերձեալ կեանք-

զէն, տուէջ բաժինս, ապա թէ ոչ՝ ահա՛ կը յայտարարեմ, կը դառնամ հան-  
րութեան թիւ մէկ թշնամին:

ՃՈՆԻ.— Արդար կը գտնեմ եւ մարդկային, հայր Վերմէյի ընդվզումը: Սակայն  
նախ կ'ուզեմ ձեր կարծիքն ալ առնել: Տիկինը ի՞նչ կը խորհի այս մասին:

ԱՆԱՀԻՏ.— Մի մտնաք, որ հայր սուրբը ուխտ մը ըրած է, տրամաբանական փոր-  
ձի շրջանէ մը ետք ու խոստացած է մինչեւ կեանքին վերջը մնալ ապաշխա-  
րած: Հիմա, մէկ օրէն միւսը, շինք կրնար թոյլատրել, որ դրժէ իր ուխտը:

ՎԵՐՄԷՅ.— Իսկ դուն կը մտնաս, որ քու կարգիդ ուրիշ ուխտ մը կատարած ես՝  
հաստատելով մնալ ամուսնոյդ: Ես գտնէ, քանհինգ տարիէ ի վեր, դէշտա կը  
պահեմ խոստումս: Գալով քեզի, անկասկած չեմ սխալիր, եթէ ըսեմ, որ  
ամուսնոյդ դաւաճանած ըլլալու ես գուցէ մեղրալուսնի ամուսնու:

ՁՈՀՐԱՊ.— Կը սխալիս, վարդապետ, մի քանի ամիս վերջն էր միայն, որ սկսու  
մեղանչել:

ՎԵՐՄԷՅ.— Նոյն բանն է, եւ եթէ դուն իր ամուսինը չըլլայիր, ես միակ բառով մը  
կ'որակէի զինք:

ՁՈՀՐԱՊ.— Մեծ գուշակութիւն մը ըրած չեմ ըլլար, եթէ ըսեմ, թէ պոսնիկ պիտի  
գտնիր կամ ատոր նման բան մը:

ՎԵՐՄԷՅ.— Ի վերջոյ կրնո՞ւնք է, ինձմէ լաւ ճանչցած ըլլալու ես:

ԱՆԱՀԻՏ.— Ես այս հարցին արմատական լուծումը կ'ուստամ, եթէ ուզէք: Հոս մենք  
երեք ենք: Երեքէն ո՞վ կ'ընդունի հայր սուրբին հրահրը: Պօսեցէք, ինչո՞ւ  
լուս կը մնաք:

ՁՈՀՐԱՊ.— Ըստ իս, ամենայնարար դուն ես, Անահիտ, տարիքով թէ արտօմ-  
կով: Ձէ՞ որ քիչ առաջ եզրակացուցինք, անյատակ հար մըն ես:

ԱՆԱՀԻՏ.— Ձգուելի ես ու անճաշակ...

ՃՈՆԻ.— Ես կը կարծէի, թէ Արեւելքի մէջ իմաստուն մարդոց պիտի հանդիպէի:  
Մինչդեռ կը տեսնեմ...

ՁՈՀՐԱՊ.— Արեւելքի մէջ իմաստութիւնը միշտ ներկայ է, ձօնի, սակայն այդ  
իմաստութիւնը աղաւաղուած է արեւմտեան Կաթոլիկ-Պրոտէստանտական  
ներքով:

ՃՈՆԻ.— Առաջարկներուդ առաջին ընդդիմացողը ամուսինդ է: Այս հարցը նախ  
եւ առաջ պէտք է լուծէիք գուցէ ձեր մէջ, ապա ներկայացնէիք մեզի: Կ'առա-  
ջարկեմ այս հարցը յետաձգել հետագայ ժողովի մը: Մինչ այդ, շօշափած կ'ըլ-  
լանք իրարու կարծիքները, գոյացուցած կ'ըլլանք մասնակի համաձայնու-  
թիւններ, եւ եզրակացութիւններ կը հանենք այս բոլորէն:

ԱՆԱՀԻՏ.— Ձախողութիւն: Ահա թէ ինչպէս կ'որակեմ այս ժողովը: Ես քարթերս  
բացի: Գրեմք ինչ կը հետապնդեմ, ու ինչ ալ ըլլայ օրէնքը, զոր պիտի մշակէք,  
իմ գործունեութիւնս մէկ ձգտում պիտի ունենայ: Ծոնի, զիս չե՞ս ընդունիր  
իրրեւ... ընկեր: Առաջին առիթով վրադ չեմ նետուիր, զգացական բարդու-  
թիւններ չտեսողներու համար ներկաներուն մէջ: Սակայն ես ըսի եւ դուք լսե-  
ցիք: Ես կ'ուզեմ ապրիլ, ապրիլ այնպէս՝ ինչպէս ես կ'ենթադրեմ ապրիլ, ու կը  
գտտահեցնեմ ձեզ, ոչ ոք կրնայ արգելք հանդիսանայ ինձի:

ՁՈՀՐԱՊ.— Կը սխալիս, Անահիտ: Հիմա ես կրնամ արգելք հանդիսանալ:

ԱՆԱՀԻՏ.— Գո՞ւն, ինչ՞ է:

ՁՈՀՐԱՊ.— Կը սխալիս, Անահիտ, հիմա ամէն ինչ փոխուած է, եւ ձերբազատ-  
ւած եմ այլուէն, ցաւով կը յայտնեմ, իսկ դուն՝ երիտասարդական հմայքնե-  
րէդ, դարձեալ ցաւով կը հատուտեմ: Այս մեր պզտիկ աշխարհը կարծածիդ  
չափ ապականած չէ, բարդաւասած միւս աշխարհին: Հոս ես մարդու նմանող  
մարդիկ կը տեսնեմ, որոնք գիտեն, թէ ինչ կ'ուզեն եւ ինչ պէտք է ուզեն: Կը  
յուսամ այս մարդոց օգնութեամբ սանձել քեզ:

ԱՆԱՀԻՏ.— Այդ բոլորը պէտք է ըրած ըլլայիր առաջ, սիրելիս, հիմա ուշ է  
այլեւս, յետ կրնար զիս հակահշտիդ ենթարկել:

ՁՈՀՐԱՊ.— Ծոնի, դուն ալ երկու խօսք ըսէ:

- ՃՈՆԻ**— Ի՞նչ ըսեմ, ես արդէն նշանած ու նիմ: Հայր Վերմէյի օգնութեամբ ու ձեր վկայութեամբ, կրնանք անմիջապէս ամուսնանալ:
- ՎԵՐՄԻՅ**— Ես այդ ամուսնութիւնը կը վաւերացնեմ իբրեւ պարզ քաղաքացի:
- ՃՈՆԻ**— Կարելոր չէ, մեզ արդէն կրնաք ամուսնացած սեպել:
- ԱՆԱՀԻՏ**— Այդ բոլորը շատ փայլուն է, սակայն վերջը, պիտի չընա՞ս:
- ՃՈՆԻ**— Պիտի խնամ հաւատարիմ մնալ: Եթէ պէտք ըլլայ գծէն շեղիլ, այդ շեղումը արդարացնող չքնադ էակ մը կայ այստեղ, եւ անկեղծ խօսելով, կ'արժէ կեողը դառնանել, երբ փորձաքարը այսքան նազելի է ու զգլխիլ:
- ԱՆԱՀԻՏ**— Զպատասխանե՞ս, անզգամ, բացէ ի բաց աղջկադ այդ տնկած է:
- ՁՈՂՐԱՊ**— Ես քու անպատկառ վարքիդ հանդուրժած եմ տարիներով, կ'նամենար ու քաղաքավար գովեստի մը համար տակնուվրայութի՞ւն ստեղծեմ:
- ԱՆԱՀԻՏ**— Բեզի պէս էրի՛մ արդը:
- ՁՈՂՐԱՊ**— Կը բաւէ, Անահիտ, մի ստիպեր, որ ամէն ինչ ըսեմ:
- ԱՆԱՀԻՏ**— Ձիս կը վախցնէ: Պիտի ըսես, որ սիրահա՞ր ունէի:
- ՁՈՂՐԱՊ**— Աւելի՞ն. պիտի ըսեմ, որ սիրահարէ՞դ զաւակ մըն ալ ունիս:
- ԱՆԱՀԻՏ**— Ի՞նչ զաւակ:
- ՁՈՂՐԱՊ**— Խոստովանէ, Անահիտ, երբ այդ առաջին ճամբորդութենէն վերադարձայ, արդէն յդի էիր: Խոստովանէ:
- ԱՆԱՀԻՏ**— Ինչե՞ր կ'ըսես:
- ՁՈՂՐԱՊ**— Անգամի մը համար պարկեշտ եղիր, Անահիտ, Աստղիկին վրայ ես աղջկանս պէս գուրգուրացած եմ, զատահ գիտնալով, որ իմ աղջիկն չէ ան:
- ԱՍՏՂԻԿ**— Հայրիկ...
- ՁՈՂՐԱՊ**— Ես հայրդ չեմ, աղջիկս:
- ԱՍՏՂԻԿ**— Հայրիկ... (կը փաթբաւիմ):
- ՁՈՂՐԱՊ**— Ես քու մօրդ ամուսինն եմ, կամ հօրեղբայրդ, եւ կամ խորթ հայրդ: Այս բոլորէն ընտրէ ինչ որ կ'ուզես: Իսկ ո՞վ է բուն հայրդ, ասիկա հարցուր մամայիդ, եթէ ինք կրնայ գիտնալ:
- ԱՍՏՂԻԿ**— Հայրիկ...

Վ Ա Ր Ա Պ Ո Յ Ր

ԵՐՐՈՐԴ ԱՐԱՐ

Նաւագ՝ Պեթիսվեմի իննգերորդ սեմֆոնին

**ԽՕՄԵԱԿԸ**— Անմեղութիւնը... (Իտիք դանդաղօրէն կը յառաջանայ դէպի բեմի վերջնային կողմը, կանգ կ'առնէ ու կը սպասէ, որ խօսեալը վերացնէ ինչ որ կը վերաբերի իրեն): Անմեղութիւնը, որ տակաւին կ'ապրի ու մէլս ներկայ պիտի ըլլայ ամէն տեղ, ուր մարդկային ցեղը պիտի շնչէ: Անմեղութիւնը, որ տակաւ պիտի պղտորի, վարարի ու թուեաւորուի, երբ սկսի (Կը մտնէ Միներ) իր ուղեղը յողմեցնել կեանքը արատաւորող կեանքի ինքնորոշման, երբ դարձած է արդէն պատանի ու կը զգայ, որ արտակարգ ձգողութիւն մը գոյութիւն ունի, որ զինք կը կանչէ, կը պարուրէ ու կը համակէ իր խորհրդաւորութեամբ: (Իտիք եւ Միներ դանդաղօրէն կը հեռանան, մինչ դանդաղօրէն ու երազկաւ կը մտնէ Աստղիկ): Ու պահ մը այնպէս կը թուի պատանիին, որ այս խորհուրդը թիւ-թիւ մտածին կ'առնէ, ու կը դառնայ շնչող էակ, կը հրդեհէ



Հողին ու այն տպաւորութիւնը կը թողու, որ կեանքը Հաճելի սարսուռներու շարունակականութիւն մըն է: (Աստղիկ կ'իլլէ ու միւս կողմէ կը մտնէ Աճախիտ): Սակայն այս պատրանքը շատ կարճատեւ պիտի ըլլայ: Շուտով պիտի սորվի, որ ամէն Հանուշ իրեն հետ պիտի տանի մաս մը իր կեանքէն, մաս մը իր արինէն, իր երիտասարդութենէն, իր երազներէն, եւ եթէ այս բոլորը անզանգիչ յայտարարներէն ետք, ան տակաւին կառչած մնայ իր պատրանքներուն ու երազներուն, կեանքի վրիժառու թաթը պիտի փչրէ ամէն յաւակնութիւն ու պիտի խնդրէ ամէն կանչ, որ կը ձգտի վերակենդանացնելու անցեալը: (Անախիտ կ'իլլէ ու կը մտնէ Վերմէյ): Սակայն Հակոտակ անհամար ձախողութեանց ու վհատեցուցիչ որդիչքներու, ան պիտի շարունակէ իր կեղրոնախոյս վազքը, կեանքի Հարուածներէն պիտի չչմի ու ամէն անգամ, անյազ ցանկութիւններու մղուժով՝ պիտի սթափի, պիտի շարունակէ իր խօլ արշաւը, որ զինք ի վերջոյ պիտի հասցնէ անդունդի մը կլափին: Այնտեղ (Վերմէյ կ'իլլէ ու կը մտնէ Զահրապ) կանգնած այդ անյատակ անդունդի եզրին, իր երկար վազքէն հեռուպառ, արհուսանքով պարապին մէջ պիտի փնտռէ իր վազքին իմաստը... ունայնութիւն, արտո՛ս, ունայնութիւն... (Զահրապ կ'իլլէ, կը մտնեն Մակի եւ Ճոնի): Երանի՛ անոնց, որոնք իմաստուն ու փիլիսոփայ, զիտեն կանգնել ունայնութեան առաջնորդող ճամբու կէտին, կրնան զուպել իրենց վազքը ու ասպետական խիզախութեամբ ծառանայ մահացու ցանկութիւններու զէժ, երանի՛ անոնց, որովհետեւ անոնք միայն պիտի ճաշակեն իրական ու անխարդախ երջանկութիւնը:

ՄԱԿԻ.— Երջանիկ եմ, Ճոնի, կարծես հրաշքի մը ազդեցութեան տակ, մտքած եմ ամէն ինչ, որ մեզ կը կապէր հին աշխարհին:

ՃՈՆԻ.— Ինչ որ կը զգաս, բնական է: Այսօրուան երջանկութիւնը բաւական է մեզի առանց մտահոգութեան ապրելու քանի մը ամիս: Սակայն ետքը, ինչ պիտի ընենք ետքը: Այդ մարդիկը, որոնք չունին մեր այսօրուան հողեմիծեակը, արդէն սկսած են զալարուիլ վաղուան մղձաւանջով:

ՄԱԿԻ.— Ի՞նչ է կարծիքդ իրենց մասին:  
 ՃՈՆԻ.— Զուրապ իմաստուն է: Աստղիկ՝ չըճող էակ մը: Տղաքը՝ չես զիտեր, թէ ինչ են տակաւին: Կը խորհիմ, թէ պէտք է մտածենք մեկուսացնելու կրնը, որ ատակ է ամէն շարիքի ու անբարոյութեան: Սակայն իսկական վտանգը կու գայ այդ կղերականէն:

ՄԱԿԻ.— Կը յիշե՛ս, ամէն ամէն անգամ, որ ոտքը սակեր ժայռերուն վրայ, Աստուծոյ կը Հայհոյէր:

ՃՈՆԻ.— Գիտեմ: Ես այն ատեն քիչ-չատ կ'արդարացնէի զինք, սակայն ինչ որ Հետադային Հաստատեցի, զիս կը ստիպէ, որ յոռետեսութեամբ մտածեամ այս Հարցին: Պէտք է կերպ մը մտածենք սանձելու Համար այս երկուքը:

ՄԱԿԻ.— Այո:

ՃՈՆԻ.— Պէտք է Զուրապի անկեցութիւնը ապահովենք ամէն գնով:

ՄԱԿԻ.— Ահա կու գայ, հի՛շո առիթն է:

ԶՈՂՐԱՊ.— Երջանիկ բարեկամներ, թոյլ կու տա՞ք, որ մասնակցիմ ձեր անուշ զրոյցին:

ՄԱԿԻ.— Նոյնիսկ կը հրաւիրենք: Վատե՛ս ենք, որ Հաւասարակշռուած տրամաբանութեամբ անձերու միջեւ իօսակցութիւնը միշտ շինելի կ'ըլլայ ու Հաճելի:

ՃՈՆԻ.— Այս Հանդիպումը ստիպողական կարեւորութիւն կը ներկայացնէ:

ԶՈՂՐԱՊ.— Կու գայի ձեզի խօսելու այս մասին:

ՄԱԿԻ.— Հրաշայի է, արդէն վստահ էինք ձեր վրայ:

ՃՈՆԻ.— Լաւ, հիմա որոշենք, թէ ինչ պէտք է ընենք:

ԶՈՂՐԱՊ.— Իմի՛ններուն վրայ կրնամ ազդեցութիւն բանցնել, անուշաբույր կընօժէս, որուն վրայ հիմնական հիմա կրնայ ազդել միայն Ճոնին: Կենդան աչք ցանկութիւնը եթէ չյազենայ, անմիջապէս պիտի վերածուի ատելութեան ու այն ատեն մենք բաւական պաղարիւն պէտք է ըլլանք, անհանդիմանաբար ատաղքը առնելու Համար:

**ՄԱԿԻ.**— Նոյնիսկ Հիմակուրնէ պաղարիւնով շարժինք, ու տրամաբանական օրէնքներ ժշակենք:

**ՁՈՂՐԱՊ.**— Օրէնքները կը մնան Հին օրէնքները, կրօնական թէ կառավարական: Մենք օրէնադէտներ չենք, եւ նոյնիսկ եթէ ըլլայինք, պիտի չկարենայինք աւելի ազդու ու արդար օրէնքներ ժշակել, ջնջելով Հինները: Ընդհանուր առմամբ կը հետեւինք տրամաբանութեան ու խորհրդակցարար կը ճշդենք պատիճները:

**ՃՈՆԻ.**— Տրամաբանական կը զտնեմ:

**ՁՈՂՐԱՊ.**— Իսկ ինչպէ՞ս պիտի բնորոշենք ազատութեան սահմանները:

**ՃՈՆԻ.**— Ազատութիւն ա՛յնքան, որ ուրիշի ազատութիւնը չկաշկանդուի: Ազատութիւն խօսքի, առանց պատշաճութեան դաւաճանելու, ազատութիւն՝ մտալու հոս կամ հոտանալու, պայմանաւ, որ այդ հետաքուտը չվտանդէ Հաւաքականութեան շահը: Ազատութիւն՝ աշխատանքի ու կառուցումի, ազատութիւն՝ կրօնքի ու պաշտամունքի, ազատութիւն՝ սիրոյ, իր բոլոր արտայայտութեան ձևերով:

**ՁՈՂՐԱՊ.**— Այս մեր պզտիկ աշխարհին մէջ, բազմաթիւ բարդութիւններ պիտի պատահին: Օրինակի համար, ի՞նչ պիտի ըլլայ մեր դիրքը միասնական սիրոյ նկատմամբ, կամ չեզպեան սիրաբանութեան: Գիտէք, որ Հին օրէնքները այս ազատութիւնները տուած էին մարդկութեան:

**ՄԱԿԻ.**— Այո, զգուշիկ են այդ ազատութիւնները:

**ՁՈՂՐԱՊ.**— Ազատութիւնները պէտք է ըլլան շինիչ: Ապահանութիւնները պէտք է կանխենք Հիմա, որ յստակօրէն կրնանք զատորոշել լաւն ու վատը, շարն ու բարին, օգտակարն ու վնասակարը:

**ՃՈՆԻ.**— Նրբեք մի կակածիք, որ միասնական հակումներ ունիմ կամ Հետապաշին կրնամ ունենայ, սակայն կը թիւադրեմ, որ չբռնանանք սեռային արտայայտութիւններուն վրայ: Արտօնենք միասնական բարքերը, միայն արդիւնով անոնց հրապարակային արտայայտութիւնը:

**ՁՈՂՐԱՊ.**— Արգիւնով կամ դադարի գործադրութեան թոյլտուութիւն շնորհելով՝ այդ մեղքերը, այո, կը համարձակիմ մեղք որակել այդ բոլորը, աւելի քաշողական կը դարձնենք:

**ՃՈՆԻ.**— Դժուար հարց մըն է ու աւելի ժամանակի պէտք ունինք, զայն պէտք եղածին պէս ուսումնասիրելու համար: Տակաւին կան անուանդումները, դասերն ու դուադրութիւնները:

**ՄԱԿԻ.**— Որքան ասէն, որ մարդ արարածը կայ, այդ բոլորը պիտի պատահին: Ձկայ երջանկութեան մը, որ նախանձ չգրգռէ, նաեւ չկայ նախանձ մը, որ տրամաբանական պատճառներ չունենայ: Մարդկութեան արիւնին հետ շագուած են այս ունակութիւնները, իրաւունք չունինք պատժելու եւ ոչ ալ կարողութիւնը՝ ջնջելու: Ձէ՞ որ քաղաքակրթութեան աշխարհի վերջին բնակիչներն ենք եւ ամէն ժամանակեւ աւելի՛ Հիմա է, որ կը զգանք, պէտք է հասաստաբազունք օրէնքներն այնպէ՛ս, որ ոչ վերադառնանք վայրենի նախամարդուն, եւ ոչ ալ հասնինք արդի մարդուն ստեղծած ծայրայեղութեան ու ապահանջութեան: Ես կը կարծեմ, որ եթէ նոյնիսկ արգիւնեք, դարձեալ անկարող պիտի ըլլանք: Ասկայն եթէ լուռ մնանք այդ մասին, գուցէ ոչ ոք սխորժակ ունենայ այդպիսի մոլորումներ կատարելու:

**ՁՈՂՐԱՊ.**— Կը սխալու այդքան լուստեսութեամբ մօտենալով Հարցին, սիրելիս: Գուցէ չես նկատեր, որ այդ անհաւատ կրօնականը որքան նեղ կացութեան մատնուած է եւ ինչ չարութեան հակամէտ է:

**ՄԱԿԻ.**— Կը ներէք, ես այդքան խոր թափանցած չեմ այրերու հոգեբանութեան ու այդ ազատազուտ բարքերը կը նկատեմ հազուադէպ ախտ մը, քիչերու մօտ:

**ՁՈՂՐԱՊ.**— Կը սխալու, Մակի, շատ ընդհանրացած ախտ մըն է, տեսական փրկարութեան մէջ եղող մարդուն մէջ լուսահատական փորձն է սեռային մոլորումներուն մէջ գտնելու հաճոյքն ու երջանկութիւնը: Ուրիշներ զոհն են դիպուածին, ու շատեր՝ այլ միջոցներու սակաւութեան կամ չզոյութեան:

ձՈՆԻ.— Պէտք է կանչենք առանձին-առանձին, Անահիտն ու Հայր Վերմէյը, յիշեցընենք իրենց բարոյականի ու պատշաճութեան հանդէպ յարգանքի կարեւորութիւնը, ու ազդարարենք օրինազանցութեան պարագային ձեռք առնը-ւելիք միջոցները:

ՄԱԿԻ.— Բայց, մա՛նաւանդ պատրաստուելու ենք Հայր Վերմէյի պահանջները դիմադրուելու:

ՁՈՂՐԱՊ.— Ահա կու գան, միասին, գայլ կղերականն ու աղուէս հաւատացեալը, կատարեալ զոյգ մը կը կազմեն, այնպէս չէ՞:

ձՈՆԻ.— Կեղբոնանանք: Անմիջապէս գործի անցնինք:

ՎԵՐՄԵՅ.— Այլեւս ամէն ինչ լաւ կ'ընթանայ, եթէ Ձոնրապ չլզգորէ:

ՁՈՂՐԱՊ.— Նոյնիսկ օրհնութիւնս կու տամ, Հայր սուրբ, այդպիսի շնչին հարցե-րու համար տակնու վրայութիւն չեմ յարուցաներ:

ԱՆԱՀԻՏ.— Կը տեսնէ՞ք սկզբունքի տէր մարդը, կը տեսնէ՞ք զգուհիին: Կինը կը գողնան ու ամենայն հանդարտութեամբ կը համակերպի:

ՁՈՂՐԱՊ.— Տրամարանական չէ՞, սիրելիս, կորսուած առարկան իր արժէքին չա-փով մտածել կու տայ:

ԱՆԱՀԻՏ.— Վերմէյի առաջարկը ընդունած պահուս՝ կարծես սիրտս նմլուեցաւ, երբ յիշեցի անցեալը, այն անուշ օրերը Ձոնրապի հետ...

ՁՈՂՐԱՊ.— Ի՞նչ վառ յիշողութիւն...

ԱՆԱՀԻՏ.— Սակայն Ձոնրապի այս անտարբեր հակադրեցութիւնը կը ստիպէ, որ խեղդեմ մէջս ամենազոյզն խզի խայթն իսկ:

ՁՈՂՐԱՊ.— Ի՞նչ արտէ կը շնորհաւորեմ, երեցկին: Այս երջանիկ ստիժէն օգտուելով, կ'ուզեմ հաղորդել ձեզի նաև մեր վերջին որոյումները: Այս համայնքին պե-տերը մենք ենք, ես եւ ձոնին: Ըստ մեր հաստատած օրէնքներուն, կը կար-ծեմ, որ ձեր միութիւնը անկարելի է այնքան աստեղ, որ Հայր Վերմէյ հաղած է կղերականի սրեմը, եւ դուք տակաւին օրինական կինս ես:

ԱՆԱՀԻՏ.— Կը շնորհաւորեմ, պարոն կառավարիչ, սակայն կ'ափսոսամ, արդեօք ձեր առաջին գործը ու բիշնկը ու ազատութիւնը կաշկանդելը եղաւ:

ձՈՆԻ.— Ազատութիւնները բացարձակ իրաւունքներ են: Սակայն ազատութիւն մը, որ ոտնակոխ կ'ընէ ուրիշին իրաւունքները, կը դադրի ազատութիւն լը-լալէ ու կը դառնայ օրինազանցութիւն, յանցանք, ոճիր:

ԱՆԱՀԻՏ.— Ես կը ձաղկեմ ձեր օրէնքները:

ՁՈՂՐԱՊ.— Այս ալ ուրիշ յանցանք մը՝ միւս յանցանքներուդ վրայ:

ԱՆԱՀԻՏ.— Արձանազրեցէք յանցանքներս, եթէ արձանազրութեան միջոցներ ու-նիք: Պատիժներն ալ հետագային կ'որոյնք: Ես խօսք կու տամ, եթէ խօսքս որեւէ արժէք կը ներկայացնէ ձեզի, որ կ'ենթարկուիմ ձեր տնօրինած պա-տիժներուն, եթէ այդ պատիժները դիւր զան ինծի:

ձՈՆԻ.— Կ'արդիւնեմ, որ այդ եղանակով խօսիս այսքան լուրջ հարցերու մասին:

ԱՆԱՀԻՏ.— Կը լսե՞ք, խօսելու ազատութիւնն ալ կորսնցուցինք: Պիչ ետք պիտի ըսեն, թէ շնչելն ալ արդիւնած է: Կը լսե՞ս, Վերմէյ, նախանձը միշտ ո՞ր կը հասցնէ ձեծաղելիութիւնը:

ՁՈՂՐԱՊ.— Նախանձը չէ, սիրելիս: Ձե՛մ յաւանդիք նոյնիսկ ըսել, որ տակնու թիւնն է կամ անտարբերութիւնը: Մենք միայն կ'ուզենք յարգել սուլ օրէնքը:

ՎԵՐՄԵՅ.— Իսկ ո՞վ վաւերացուցած է այդ օրէնքները:

ձՈՆԻ.— Մենք: Տրամարանոզ ու ողջախոհ մարդիկ: Գիտէ՞ք, թէ ինչ ապականած պատկեր մը կը ներկայացնէք:

ՎԵՐՄԵՅ.— Աստուած ստեղծեց մարդը, անոր մէջ դրաւ բնազդներ: Մնացեալը բոլոր մարդոց ստեղծած կեղծիքներն են: Ինչ որ կը ձգտի մարդը ձերբազա-տել իր բնազդներէն, կաշկանդուած է մարդկային իրաւունքներու եւ, այս պատճառաւ՝ դատապարտելի: Թոյլ տուէք, որ մարդը ապրի իր բնազդներով:

ՁՈՂՐԱՊ.— Որպէսզի դառնանք շուներու եւ գայլերու վոհմականք՝: ձիւղ է, Աստ-ւած մեզի տուած է բնազդներ, ինչո՞ւ չես ըսեր, թէ տուած է նաև բանական-

նութիւն: Զատորոշելու ինչ որ պարկեշտ է ու արգար եւ խուսափելու շարէն ու ապականութենէն:

ՃՈՆԻ.— Աստուած ժարդուն տուած է նաեւ կարմրելու եւ ամչնալու առանձնաշնորհու՞մը, առաքինութիւն մը, որմէ դժբախտաբար զուրկ էք, երկուքդ:

ՄԱԿԻ.— Կ'երեւի այս բոլորը նկատի առած չէիր, երբ քահանայ ձեռնադրուեցայ:

ՎԵՐՄԷՅ.— Ասձմանափակ դատողութեամբ եւ նոյնքան սահմանափակ գիտելիքներով պատանի մըն էի, երբ վանք մտայ: Ինձի ազագայ հրաշալի կեանք մը խոստացան, առանց թոյլ տալու, որ ճանչնամ ու ճաշակեմ այխարհիկ կեանքի քաղցրութիւնները: Ըսին՝ այս այխարհը անցաւ որ է ու խարուսիկ, սակայն ոչ մէկ ապաւնտութիւն տուին ճանդերձեալ երջանկութեանց համար: Փորձեցին խեղդել մեր մէջ ամէն բնազդ, որ կեանքի կը ձգտի, ես իսկ անձնապէս ճգնեցայ, բռնանալով ցանկութիւններուս ու զգացումներուս վրայ, սակայն կը բաւէ, ա՛յ բաժակը յորդեցաւ: Ա՛յ ոչ մէկ ուժ կրնայ զիս վերագարձնել կուսակրօնութեան:

ԶՈՂՐԱՊ.— Այդ բոլորը տրամաբանական պատճառաբանութիւններ չեն ուրիշ կիներ գողնալու համար: Կը շնորհաւորեմ, չափազանց համոզիչ փաստերով կարգարացնես կեանքի մէջ ունեցած սայթաքումներդ, սակայն տրամաբանական ինչ պատճառ կրնաս ներկայացնել ապագայ ասպատակութիւններու զ համար:

ՎԵՐՄԷՅ.— Բայ ճակատով կը ներկայանամ ձեզի: Նախ կը յայտնեմ, թէ արդէն հրոժարած եմ կուսակրօնութենէ: Ապա, Անահիտի թելադրութեամբ կ'իմասցնեմ, թէ ծրագրած ենք ամուսնանալ, եւ եթէ չհանդուրժէք մեր միութեան, որոշած ենք հեռանալ:

ՃՈՆԻ.— Պաշարիւն եղիր, Զոհրապ, բացայայտ է, որ կ'ուզեն ջեզ ջղայնացնել:

ԶՈՂՐԱՊ.— Կը սխալուի, ձեռի, եթէ կը կարծես, որ կը վիրաւորուիմ կամ կը ջղայնանամ: Ես հաշտուած եմ կացութեան հետ, շատոնց: Սակայն երբ տակաւին կը գտնուի կից հին այխարհը, երեւոյթները փրկելու համար ստիպուած էի ճանդերձեմ անհամար քայթակրութեանց եւ վիրաւորանքներու: Կային նաեւ եւ զաւակներս, որոնք պէտք է մայր մը ունենային: Հիմա այդ բոլորը աւելորդ են, քաղաքակրթուած ժարդուն պարտադրուած ձեւական զոհողութիւնները անիմաստ են հիմա ու ես ոչ մէկ անպատեհութիւն կը տեսնեմ այս միութեան մէջ: Սակայն մէկ պայման կը դնեմ: Թող միանան ու երթան, հեռանան, հեռանան այստեղէն, որպէսզի աղտոտութիւնը մաքրուի մէկ անգամ քնշմիտ:

ԱՆԱՀԻՏ.— Կ'ուզես զիս հեռացնել, դիւային ծրագրերնիդ իրագործելու համար, այնպէս չէ՞: Զիս ապուշ կը կարծես: Կ'ուզես ամուսնական իրաւունքներ ստեղծել ջեզի՝ աղբիկս կուլ տալու համար, այնպէս չէ՞: Բայց ես թոյլ չեմ տար, կը շնե՞ս, թոյլ չեմ տար:

ԶՈՂՐԱՊ.— Կ'ընտրես երկուքէն մէկը, կա՛մ կը մնաս հոս՝ իրրեւ կիսն, եւ կամ կը հեռանաս, այդ սրբապիղծ Տօն Ժուանիդ հետ:

ՎԵՐՄԷՅ.— Մենք կը հեռանանք, այնպէս չէ՞ Անահիտ: Մենք պէտք չունինք ձեզի:

ԱՆԱՀԻՏ.— Լո՛ւ: Տակաւին իրաւունք չունին անուսնովս խօսելու:

ԶՈՂՐԱՊ.— Ոչ ալ երբեքից այդ իրաւունքը պիտի ունենաս:

ՃՈՆԻ.— Իր փնտառած ուրիշ առանձնաշնորհու՞մ մըն է արդէն:

ԱՆԱՀԻՏ.— Իրաւունք չունիք ժարդոց զգացունքներուն հետ խաղալու:

ՄԱԿԻ.— Ես կը կարծեմ, Զոհրապ, որ իրաւունք չունիս պնդելու, որ հեռանան:

ԶՈՂՐԱՊ.— Կի՞նս արձակելու համար, գտնէ՛ պայման մը դնելու իրաւունք պէտք է ունենամ:

ՎԵՐՄԷՅ.— Ընդունէ, Անահիտ, առիթ մի տար, որ խօսքը ետ առնէ:

ԱՆԱՀԻՏ.— Դուք չո՞ւ, եւ մի խառնուիր գործերուս:

ՎԵՐՄԷՅ.— Ինչպէս որ կը փափաքես:

ԱՆԱՀԻՏ.— Ես կը մնամ հոս, Զոհրապ, կը մնամ... կի՛նդ:

ԶՈՂՐԱՊ.— Ուրեմն այնպէս, եթէ ուզես զիս լքել՝ կրնաս ուզած ատենդ լքել: Իսկ

Եթէ ուզես մնալ կի՛նս՝ դարձեալ կը մնաս երբ որ ուզես: Ուրեմն այսպէս, հիմա յանկարծ որչեցիր մնալ կի՛նս: Ենորհակայ եմ, սիրելիս, սակայն կը ցատիմ, այս անգամ ես չեմ ընդունիր քեզ, որպէսզի անգամի մը համար, խաղալիքդ դարձած չըլլամ: Զոնի, ապահարզան կը պահանջեմ:

ԱՆԱՀԻՏ.— Զգուհի:

ԶՈՂՐԱՊ.— Եւ կը բողոքեմ: Իբրևունք չունի զիս անարգելու այլեւս, քանի որ զինք կի՛նս չեմ նկատեր:

ՎԵՐՄԷՅ.— Հիմա, Անահիտ, ուրեմն անմիջապէս կրնանք ամուսնանալ:

ԱՆԱՀԻՏ.— Անգին, ամէն մարդ պէտք է փորձէ կեանքի մէջ բարձրանալ:

ԶՈՂՐԱՊ.— Սողունը, որ թռչի կը փորձէ:

ԱՆԱՀԻՏ.— Պիտի զգլխս, Զոհրապ... իսկ զաւակներս:

ԶՈՂՐԱՊ.— Իրաւականօրէն զաւակները երեքն այլ ինծի կը պատկանին: Սակայն կ'արտօնեմ, որ ուզած ատենդ տեսնես զիրենք:

ԱՆԱՀԻՏ.— Իսկ Ասաղիկը, չէ՞ որ միայն իմ ազնիկս է:

ԶՈՂՐԱՊ.— Իմ անունիս արձանագրուած է:

ԱՆԱՀԻՏ.— Ուրեմն այսպէս, դառնուկը կը յանձնէք զայլին:

ԶՈՂՐԱՊ.— Զիս գա՛լլ կ'որակես: Ես նոյնիսկ մարդ ըլլալու արիթ չեմ ունեցած: Մինչդեռ դուն շատ անգամ ընացած ես, դուն ի՛նքզիք խոստովանեցար:

ՄԱԿԻ.— Իրար վիրաւորելէ զգուշացէք: Մա՛նաւանդ տեսէք, Ասաղիկն է կու գայ:

ԶՈՂՐԱՊ.— Ասաղիկ, մօտ եկուր, աղջիկս: Ես ու մայրդ այլեւս բաժնուած պիտի ապրինք: Որոչեցինք, որ դուն ընտրես, թէ որու մօտ կ'ուզես մնալ, ի՞մ, թէ մօրդ:

ԱՍՏՂԻԿ.— Այդ մասին օրէնքը բան մը չ'ըսէ՞ր:

ԶՈՂՐԱՊ.— Այս պարագային ես կ'ուզեմ պարտազբոյ ի՛մ օրէնքս:

ԱՍՏՂԻԿ.— Թէեւ մամաս անցեալ օր իմացուց, թէ իսկական հայրս չես, սակայն դարձեալ ես կը նախընտրեմ մնալ քոզդ:

ԱՆԱՀԻՏ.— Ի՞նչ հանգամանքով, կրնա՞ս ճշդել:

ԱՍՏՂԻԿ.— Ինչ հանգամանքով, որ ինք ուզէ:

ԱՆԱՀԻՏ.— Պտուհի:

ԱՍՏՂԻԿ.— Ժողովուրդը կ'ըսէ՝ ինչպէս մայր, անանկ աղջիկ:

ԶՈՂՐԱՊ.— Ատիկա շատ ծանր է քեզի համար, աղջիկս, դուն մայր չունիս այլեւս ու բնաւ դատապարտուած չես ամչնալու: Իսկ հիմա միայն հայր մը ունիս, ես եմ այդ հայրը:

ԱՆԱՀԻՏ.— Մտեղուկ:

ՎԵՐՄԷՅ.— Իսկ ի՞նչ պիտի ըլլայ իմ վիճակս:

ԶՈՂՐԱՊ.— Դուն ճամբաներուն անկիւնը սպասէ գիշերները:

ԱՆԱՀԻՏ.— Ամէն անգամ, որ փորձես որամտութիւն ընել, ծիծաղելիտօրէն կը ձախողես:

ՄՇԵՐ.— Հասէք, շուտ հասէք, Դաւիթ բարձր ժայռէ մը վար դիրեցաւ:

(Ընքս կը մտնէ Միւնը, որուն կողքին է Դաւիթ՝ արիւնկուայ):

ԱՆԱՀԻՏ ԵՒ ԱՍՏՂԻԿ.— Աստուած իմ, այս ի՛նչ վիճակ է:

ԶՈՂՐԱՊ.— Առատօրէն արիւն կը կորսնցնէ: Պէտք է ճար մը ընենք:

ՄԱԿԻ.— Երակ մը պայթած է, կ'երեւի սուր ժայռի մը զարնուելով:

ԱՆԱՀԻՏ.— Աստուած իմ, այս ի՞նչ դժբախտութիւն է, արդեօք այսպէ՞ս կ'ուզես զիս պատժել: Ես կը խնդրեմ:

ԱՍՏՂԻԿ.— Մամա, մամա, ուղիք՝ եկուր:

ԶՈՂՐԱՊ.— Անահիտ, ինքզինքդ զսպէ: Մակի, խնդրեմ, Անահիտը բռնեցէք, որ պէտքի նայինք, թէ ինչ կրնանք ընել:

ԱՆԱՀԻՏ.— Աչքերը կը մարին, Աստուած իմ, այս ի՛նչ փորձանք է:

ԱՍՏՂԻԿ.— Մամա, հանդարտէ, դեռ ամէն յոյս կորսուած չէ:

ԱՆԱՀԻՏ.— Եթէ Դաւիթին բան մը պատահի, ես կը մեռնիմ:

ԶՈՂՐԱՊ.— Թող սուր, որ ճար մը ընենք, այս ձեռով մեր գործը աւելի կը զժուարացնեն:

ԱՆԱՀԻՏ.— Ազատեցէ՛ք, Աստուծո՛յ սիրոյն, ազատեցէ՛ք: Տեսէք, աչքերը կը մա-  
րին: Աստուած իմ, իմ հոգիս առ, բայց խնայէ՛ Դատիթին:

ՃՈՆԻ.— Եստ արիւն կորսնցուցած է, սակայն տակաւին ամէն յոյս կորուած չէ:  
Մահը, ու լաթերը տար, թրջէ ու բեր: Եռու ըրէ, քեզ տեսնեմ: Կարդապեա,  
զօտիդ քակէ, պէտք է սրունքը վերէն պինդ կապենք, արիւնահոսութիւնը  
թեթեւցնելու համար:

ՋՈՂՐԱՊ.— Աղօթէ, Անահիտ, գուցէ Աստուած խղճայ մեզի, ես անհաւատ եմ,  
բայց գուցէ Աստուած լսէ՛ մայնդ, այս բոլոր գոբրատութիւններէն ետք,  
գուցէ խնայէ՛ մեզի:

ԱՆԱՀԻՏ.— Ա՛խ, Զոհրայ, այսպիսի բան մը մտքէս երբեք չէր անցներ, այս ի՞նչ  
հարուած է: Գիտե՛ս, մեր կիրքերուն զերին դարձած էինք ու չէինք մտածեր  
ուրիշ ոչ մէկ բանի մասին: Որքան ապուշ ենք եղեր:

ՋՈՂՐԱՊ.— Ճիշդ է, Անահիտ, գուցէ Աստուած մեզ կ'ուզէր փորձել, ու հիմա, այս  
ձեռով կ'աշխատի զգաստացնել մեզ, մեր աչքին առջեւ օրօրելով մահուան  
ստուերը:

ԱՆԱՀԻՏ.— Ամէն ինչ պարայ է եղեր, Զոհրայ, պարայ, պարայ, ա՛խ, ինչ կ'ըլ-  
լար, եթէ զաւակս տգատուէր:

ՃՈՆԻ.— Կարծեմ նուաղեցաւ: Մահը, շո՛ւտ հասցուր լաթերը:

(Ընդմիջում կը բերէ լաթերը)

ՄԱԿԻ.— Այո, կարծես սթափեցաւ, չափազանց արիւն կորսնցուցած է ու այդ  
պատճառաւ տկարացած:

ԱՆԱՀԻՏ.— Ճար մը չկա՛յ, Զոհրայ:

ՋՈՂՐԱՊ.— Աղօթէ, Անահիտ, ուրիշ բան չենք կրնար ընել:

ՃՈՆԻ.— Ինչո՞ւ այսքան անկարող ենք: Գիտական անսահման նուաճումներէ  
ետք, երբ կրցած ենք ոտք դնել միջին հեռագոյն մոլորակներու վրայ, ինչո՞ւ  
այսքան տկար ենք մահուան դիմաց: Աւելի լաւ չէ՞ր ըլլար, աւելի օգտակար,  
եթէ ամէն մարդի մէջ մեր սպառած ուժերը հաւաքէինք ու կեդրոնանայինք  
միայն մարդկային կեանքի բարօրութեան համար: Այնպէս մը պիտուէինք, որ  
այլեւս չսարսափէինք մահէն:

ՋՈՂՐԱՊ.— Կը սխալիս, Ճոնի: Մահուան գաղափարը միշտ պէտք է ներկայ ըլլայ:  
Ուրիշ բազմաթիւ օրէնքներու կարգին, օրէնք մըն է նաեւ մահը: Ամենա-  
խիստ ու ամենազաժան օրէնքը: Օրէնք մը, որ կարելի չէ բանարարել: Որմէ  
կարելի չէ խուսափիլ: Այո, բարեկամներ, պէտք է մնայ մահուան օրէնքը, որ-  
պէսզի միւս օրէնքները իրենց ուժը չկորսնցնեն: Որպէսզի մարդ արարածը  
ստիպուած ըլլայ օրէնքներ ստեղծելու, ու ապա հսկելու անոնց գործադրու-  
թեան: Ճիշդ է, այս վայրկեանիս մահուան դառնութիւնը ամէն ատենէ ա-  
ւելի կը ճնշէ զգացումներու վրայ, բոլորս յուզուած ենք, մոռցած ենք մեր  
քէնն ու ոխը, հիմա երբ կը զգանք, թէ որքան ռեզոր ենք մահուան դիմաց:  
Սակայն մեր ստեղծելիք աշխարհը աւելի հանդուրժելի չէ՞ր ըլլար, եթէ ամէն  
տաւառ, արթնայէ անմիջապէս ետք, պահ մը ինքնամոփոխուէինք ու մեր  
կատարելիք գործերը նժարի մէջ դնէինք մահուան գաղափարին դիմաց: Մեր  
որսի ամէն մէկ զարկին հետ համոզուէինք, որ մարդ արարածը հաւասար է՝  
մահուան ճիրաններուն մէջ:

ՃՈՆԻ.— Ինչ որ դիւ կը մզէ ընդՎզու՛մի, մահուան դէմ մեր անզօրութիւնն է:

ՋՈՂՐԱՊ.— Ինչո՞ւ ընդՎզել, սիրելիս: Քեզի համար արամբարանական է, երբ  
մրջիւն մը կրունկիդ տակ ճգմուխ, սակայն ընդունելի չէ մահուան գերա-  
կայութիւնը մարդ արարածին վրայ: Ինչո՞ւ արամբարանութեան այս եր-  
կուութիւնը:

ՃՈՆԻ.— Կարծեմ տարբերութիւն մը պէտք է ըլլայ մարդուն եւ մրջիւնին միջեւ:

ՋՈՂՐԱՊ.— Տարբերութիւն է, կայ: Բանականութիւնը, ինչ որ այնքան սարսա-

փառալու կը դարձնէ մահուան դաղափարը: Եթէ բանականութիւն չունենա-  
 յինք, մահը մեզի համար շատ պարզ ու հասարակ երեւոյթ մը պիտի ըլլար:  
 Մենք ալ պիտի ըլլայինք տեսակ մը մեծ մըջիւններ, որոնք հասարակ մըջիւն-  
 ներու նման պիտի աշխատէին, զուգարուէին ու ապա սատկէին:  
 ԱՆԱՀԻՏ.— Կարծեմ ձեռքերը ստոնելու սկսան, Զոհրայ:  
 ԶՈՀՐԱՊ.— Աստուած իմ, մեզ փրկեցիր, որ այսպէս չարարե՞ս:  
 ԱՍՏՂԻԿ.— Դաւիթ, Դաւիթ, ես եմ, Աստղիկը, քոյրիկդ:  
 ՃՈՆԻ.— Մեռաւ, Զոհրայ, որդիդ մեռաւ:  
 ԱՆԱՀԻՏ.— Դաւիթ...  
 ՎԵՐՄԷՑ.— ... զի հող էիր եւ ի հող դարձիս, եւ փառք յաւիտեանս, ամէն...:

Վ Ա Ր Ա Պ Ո Յ Ր

ՉՈՐՐՈՐԴ ԱՐԱՐ

ԱՆԱՀԻՏ.— Այս ի՞նչ կեանք է: Աւելի լաւ չէ՞ր ըլլար, եթէ կերպով մը վերջ տայինք  
 մեր կեանքին: Անդենականին մէջ, առնուազն զերծ կ'ըլլայինք ապագայի  
 մտահոգութիւններէն:  
 ԱՍՏՂԻԿ.— Հանդերձեալ կեանքի վերաբերմամբ այնքան լաւատես մի՞ ըլլար,  
 մամա: Գիտեմ, Դաւիթին մահը շատ ծանր հարուած մը եղաւ բոլորիս հա-  
 մար, սակայն կեանքի մէջ մարդ միշտ պէտք է ձգտի լաւագոյնին, առնուազն  
 աւելի լաւին: Մեր կեանքին վերջ տալը, պարզապէս վատութիւն մը պիտի ըլ-  
 լար, աններելի խուսափում մը ծանր պարտականութիւններէ, որոնց  
 յանձնառու պէտք է ըլլանք, իբրեւ քաղաքակրթութեան մարդկութեան վերջին  
 նմուշները: Ընդ պէտք չէ խնայենք, ստեղծելու համար նոր մարդկութիւնը:  
 Պէտք է թօթափենք մեր կիրքերը, որպէսզի ապագայ սերունդները մեր կեն-  
 ցաղն ու դաղափարները տպուորեն իրենց յիշողութեան մէջ:  
 ԱՆԱՀԻՏ.— Կեցցե՛ս, իսկական առաքելի մը պէս կը խօսիս, նոր մարդկութեան  
 առաջին սրբունի: Մակայն հարցում մը տամ քեզի. վատա՞հ ես խօսքերուդ  
 անկեղծութեան: Ես կը կարծեմ, թէ առաջին սայթաքողը դո՛ւն պիտի ըլլաս,  
 առաջին առիթով իսկ մեղանշելով հորդ հետ:  
 ԶՈՀՐԱՊ.— Ահ եւ ես, նոր օրերու Ղովար, վատահամբաւ առաջին հայրը, որուն  
 ստեղծած նոր շատախղէն գուցէ ծնի նոր փրկիչ մը, որ իր յեղափոխական  
 գաղափարներով, նոր հորիզոններ բանայ, աւանդութիւններով եւ ոսկորու-  
 թիւններով ստրկացած մարդկութեան աօրնէ:  
 ԱՆԱՀԻՏ.— Կը նախանձիմ անհոգութեանդ, Զոհրայ, կը տեսնեմ, թէ արդէն մոռ-  
 ցեր ես:  
 ԶՈՀՐԱՊ.— Մի՛ յիշցնիր, Անահիտ, մոռնալ կ'ուզեմ ամէն ինչ, մոռնալ, մոռնալ,  
 չի՛ մը ու խօսքի, թաղաւորութիւնս կու տամ չի՛ մը ու խօսքի փոխարէն:  
 ԱՍՏՂԻԿ.— Թագաւորութիւնդ, այս քանդուած աշխարհը, հայրիկ:  
 ԶՈՀՐԱՊ.— Կարելորը ժէսթն է, աղջիկս, ոչ թէ նուէրը:  
 ԱՆԱՀԻՏ.— Դու եւ քու բարոյախօսութիւններդ:  
 ԶՈՀՐԱՊ.— Ես եւ իմ բարոյախօսութիւններս, ես եւ իմ տափակ սրամտութիւն-  
 ներս, ես եւ իմ արտակենդրոն գաղափարներս: Կը զարմանամ, Անահիտ, ի՞նչ  
 բանը ստիպած է քեզ, որ մնաս կպչած տարատիս, տարիներէ ի վեր:  
 ԱՆԱՀԻՏ.— Չաւանդներուս սէրը, Զոհրայ, անոնց հանդէպ սէրս եղած է միշտ  
 անարատ:

**ՁՈՂՐԱՊ.**— Երանի՛ թէ սերդ նոյնքան անարատ ըլլար նաև ինծի Հանդէպ, Հաւատա՛ տա՛, աշխարհի ամենաերջանիկ մարդը կ'ըլլայի: Սակայն այնքան զէշ տպաւորած ես զիս, որ երբեմն կը մտածեմ, արդեօք Հաւատարմութիւն գոյութիւն ունի՞ աշխարհի վրայ:

**ԱՆԱՀԻՏ.**— Գուն Հաւատարիմ ընկերներու պէտք չունէիր, այնպիսի՛ Հաւատարիմ ընկեր մը գտած էիր, որ այլեւս մէկու մը պէտք չունէիր:

**ՁՈՂՐԱՊ.**— Ուրիշի շիշ ըսել կ'ուզես: Եատ ճիշդ կը խօսիս: Կեանքը այնքան պարպուած էր ինծի Համար, որ կը փորձէի այդ սահեղոյն ճեղուկին մէջ փնտռել ինչ որ կը խօսէր օրտիս, եւ կը վստահեցնեմ քեզ, այդ Հրաշալի բմպէլիին ընկերակցութիւնը այն պատրանքը կու տար ինծի, որ երջանիկ եմ:

**ԱՆԱՀԻՏ.**— Իսկ Հիմա ի՞նչ կը մտածես ընել, երջանիկ ըլլալու Համար:

**ՁՈՂՐԱՊ.**— Ոսկեգոյն ճեղուկս այլ դաւանանց ինծի, ամէնքը դաւանանցին: Հիմա Համոզուեցայ: Կարելի չէ ոչ ոքի վստահիլ, ոչինչի վստահիլ:

**ԱՍՏՂԻԿ.**— Այնքան յոռետես մի՛ ըլլար, Հայրիկ, կացութիւնը այնքան ողբերգական չէ:

**ԱՆԱՀԻՏ.**— Ահա մէկը, որ վստահօրէն պիտի չդաւանանէ քեզի, Ձո՛հրապ:

**ՁՈՂՐԱՊ.**— Ո՛վ տկարութիւն, անուշդ կին է, Եէյքսիիրը ըսած է ժամանակին: Հիմա իմաստուն դարձած եմ, զիտեմ, կիներ այլեւս ամէն քաղաղականութիւն կորսնցուցած է ինծի Համար: Ամէն պայքար դադրած է մէջս: Խարուսիկ վայրկեանի մը Համար չեմ գոհեր Հողիին անդորրութիւնը:

**ԱՆԱՀԻՏ.**— Կը քաջայերեմ իմաստուն կեցուածքդ, Ձո՛հրապ, սակայն երբեք չեմ նախանձիր քեզի, ես ծնած եմ ապրելու Համար, վայելելու, ինծի Համար վա՛յերը կեանքի իմաստն է:

**ՁՈՂՐԱՊ.**— Ո՛վ ըսաւ, որ ես վայելքը չեմ սիրեր, կարելորը ճշդեյն է, թէ դուն վա՛յերը ըսելով ի՞նչ կը Հասկնաս:

**ԱՆԱՀԻՏ.**— Հասկցայ, քու վայելքդ ուրիշի շիշ է:

**ՁՈՂՐԱՊ.**— Ո՛չ բոլորովին, մասամբ մը միայն: Գալով քեզի, միակ վայելքդ ինծի դաւանանելի էր, այնպէս չէ՞:

**ԱՆԱՀԻՏ.**— Գուցէ: Զարմանայի է կեանքը: Աստուած այսպէս է ստեղծած մարդ արարածը: Արգելուած պտուղը Համով կ'ըլլայ:

**ԱՍՏՂԻԿ.**— Իսկ ի՞նչ պիտի ըլլայ իմ վայելքի բաժինս, յարգելի ծնողք:

**ՁՈՂՐԱՊ.**— Ամէն մարդ կը ստեղծէ իր երջանկութիւնը՝ ոչինչէն, աղջիկս, մի յուսահատիր: Կեղծունացիր, մտածէ, անպատճառ կը գտնես:

**ԱՆԱՀԻՏ.**— Այդ պատասուը ինծի թող, Ձո՛հրապ, մի՛ պղտորեք ջուրը:

**ՁՈՂՐԱՊ.**— Նախ ճշդեմ, թէ թելադրութիւնս սեռային Հանդամանք չուներ, կը վերաբերէր օրեւէ վայելքի, որ Աստղիկի երեւակայութիւնը պիտի կարենար ստեղծել:

**ԱՆԱՀԻՏ.**— Աստղիկը կին է, սիրելիս, կին: Ընչէ կողմնացոյցի հակառակը: Իր վայելքի պարը միշտ Հարաւային կողմը ցոյց կու տայ:

**ՁՈՂՐԱՊ.**— Քեզի Հետ Համամիտ չըլլալով Հանդերձ, կ'ուզեմ իմանալ նաև Աստղիկին կարծիքը այս մասին:

**ԱՍՏՂԻԿ.**— Ես ի՞նչ կարծիք յայտնեմ, Հայրիկ, ես մօրս տարիքին Հասած չեմ տակաւին, որպէսզի Հանդերձս կեղբոնացած ըլլան սեռային զործարաններու վրայ: Ես ինքզինքս կողմնացոյցէ մը աւելի՛ ժամացոյցի մը կը նմանցնեմ կամ Հողմացոյցի մը:

**ՁՈՂՐԱՊ.**— Կատարելապէս Հաւատարակչուած:

**ԱՆԱՀԻՏ.**— Առանց մտածելու մի՛ խանդավառուիր, Ձո՛հրապ: Նախ՝ Աստղիկը աղջիկը չէ: Աստահօրէն ըսեմ. ինծի պէս անյատակ Հոր մըն ալ ա՛ն է: Ալ-խարհի բոլոր կիներն ալ անյատակ Հորեր են, բոլորն ալ կը գալարուին նոյն ախորձակներով, սակայն քաղաքակրթութիւն կոչուած աղէտը կը կաշկանդէ ինչ որ բնազդները կը թելադրեն ուղեղին:

**ՁՈՂՐԱՊ.**— Մի՛ մոռնար, Անահիտ, որ ժամանակի ընթացքին բնազդները քիչ-քիչ



կոկուած ու դարձած են սովորութիւններ, ապա դառնալու համար օրէնքներ:

ԱՆԱՀԻՏ.— Օրէնքներ, հա, ես կը ձողկեմ բոյ՛ր օրէնքները, որոնք ստեղծուած են տկար մարդոց կողմէ, պայքարելու համար զօրաւոր մարդոց դէմ: Ահայն ժամանակը եկած է, պէ՛տք է ամէն մէկը դիտանաք, որ անխուսափելիօրէն պիտի վերադառնանք նախամարդուն, ապագան զգայացունց հեռանկարներ կը դժազդէ երեւակայութեանս պատասխին վրայ: Մենք ազատ ենք, Զոհրայ: Մենք ազատ ենք, ձոնի (կը յարձակի ձոնիին վրայ ու կը փորձէ համբուրն):

ԶՈՂՐԱՊ.— Կը բաւէ, Անահիտ, չափը անցուցիր:

ԱՆԱՀԻՏ.— Ի՞նչ չափ: Ո՞վ գծած է չափին սահմանները: Յանկութիւններու չափը հոս, սրտիս մէջ է: Կեղծաւորներ, բարոյականի ստրուկներ, ի՞նչ կը սպասէք, Թօթափեցէք ձեր կապանքները, թող ամէն մէկուդ նայուածքին մէջ փայլատակող ցանկութիւնները մարմին ստանան, թող ձեր լեզուները կարկամին ու չկարենան խեղաթիւրել այն խենթեցնող սարսուռները, որ կը թելադրուին ձեր սեռական անդամներուն կողմէ:

ՃՈՆԻ.— Կը բաւէ, անամօ՛թ կնիկ, կը բաւէ:

ԱՆԱՀԻՏ.— Աժօթն ու անամօթը հիմա բոլորովին նոյնն են ինծի համար:

ԶՈՂՐԱՊ.— Իր մտածումներն ու զգացումները մէկ ուղղութեամբ կ'ընթանան:

ԱՆԱՀԻՏ.— Ճիշդ կողմնացոյցին հակառակ ուղղութեամբ... ապրիս Զոհրայ, այս օրերս չափազանց սրամիտ դարձեր ես:

ԶՈՂՐԱՊ.— Բնական է, ամէն մարդ կեդրոնացած է իր կարելիութիւններուն վրայ:

ՃՈՆԻ.— Ամէն ատենէ աւելի հիմա է, որ պէտք ունինք ձեր մտային կարողութիւններուն: Զգուշացէք ամէն ինչէ, որ ապականութեան կը տանի, որովհետեւ ապականութիւնը պիտի կաշկանդէ ձեր կարելիութիւնները, ու մեզ պիտի դատապարտէ կղզիանալու ձեր անմեական քժայքներու ծիրին մէջ: Այս աւերակ երկարունտին դիմաց՝ դոնէ կանդուն պահենք ձեր հոգիները:

ՎԵՐՄԵՅ.— Ի՞նչ հոգի, ո՞ր հոգիները, այդ բոլորը ես քարոզած եմ ձեզի՛, առանց ես ինքս հաւատարմութիւն ըսածներուս: Ի՞նչ հոգի, հոգի գոյութիւն չունի: Իսկ այդ ծիծաղելի բարոյական բարոյ լըլլայ՝ որ անզամ մըն ալ գործածէք, շատ գէշ կը լինի ականջիս: Մարդուս էութիւնը կը նմանի պրիսմակի մը, որմէ հազարաւոր ճառագայթներ կը մեկնին, սնափառութեան, տենչանքի, փառամոլութեան, կիրքի ու տկարութեան ճառագայթներ, սակայն բարոյականի նոյնն իսկ կարելի չէ գտնել այդ պրիսմակին վրայ, որովհետեւ մարդուս շաղախին մէջ բարոյական չկայ: Մարդ արարածը ինքզինքը կը խարէ, երբ կը փորձէ ամէն ինչի մէջ բարոյական փնտռել ու գտնել, սակայն չ'անդրադառնար, որ կեանքը ինքնին ամենամեծ անբարոյութիւնն է: Զի՛ չ'ԱՂ Է՛ԻՒ Ե՛Ի Ի՛Ղ Գ՛ԱՐՁԻՒՄ ԽՆՁՐԵՄ, ըսէք, ի՞նչ բարոյական կայ ստոր մէջ:

ՃՈՆԻ.— Ես ալ սկսայ համոզուիլ, որ անասուններու հոգին երբեմն կեանքին կը վերադառնայ մարդկային կերպարանքով ու, հայր Վերմէյի խօսքերէն մեկնելով՝ կարելի է նզարակացնել, որ իր նախանցեալ կեանքին մէջ եղած է դալլ, չուն կամ կատու:

ՎԵՐՄԵՅ.— Մէկ բան վստահօրէն գիտեմ, ջորի եղած չեմ:

ԱՆԱՀԻՏ.— Մի՛ վրդովիր, Զոհրայ, դուն կապիկէն սերած ես:

ԶՈՂՐԱՊ.— Լաւ է կապիկ ըլլալ, քան թէ չուն, սիրելի քառորդս, շատ աւելի լաւ է կտուկի ըլլալ, քան թէ մարդ, մարդ սա սեւազգեստին հոգիով:

ԱՆԱՀԻՏ.— Ամէն մարդու հոգիին մէջ տախտի մը կայ պահուած, կ'ըսեն:

ՃՈՆԻ.— Այստեղ մարդիկ կան, որոնք հոգի իսկ չունին: Ողբայիներ, դուք ուրիշ հաւատամք չունի՞ք, իսէլայներ չունի՞ք, չինելու, ստեղծելու պատգալը չի՞ խոսովեր ձեր հոգիները: Երբեւիցէ մտածած չէ՞ք բարձրանալու, բարձրացնելու:

ԶՈՂՐԱՊ.— Անոնց խօսէ պատկերը եւ պարկեցեկու մտքին:

**ՁՈՂՐԱՊ.**— Ծրանի՛ թէ սէրդ նոյնքան անարատ ըլլար նաև ինծի հանդէպ, հաւատաս՛, աշխարհի ամենամեղանիկ մարդը կ'ըլլայի: Սակայն այնքան զէշ տպաւորած ես դիս, որ երբեմն կը մտածեմ, արդեօք հաւատարմութիւն գոյութիւն ունի՞ աշխարհի վրայ:

**ԱՆԱՀԻՏ.**— Դուք հաւատարիմ ընկերներու պէտք չուներիք, այնպիսի՛ հաւատարիմ ընկեր մը գտած կ'իր, որ այլեւս մէկու մը պէտք չունէիր:

**ՁՈՂՐԱՊ.**— Ուրիշի՛ լիչս ըսել կ'ուզես: Եստ ճիշդ կը խօսիս: Կեանքը այնքան պարպուած էր ինծի համար, որ կը փորձէի այդ ոսկեզոյն հեզուկին մէջ փնտռել ինչ որ կը խօսէր քրտիս, եւ կը վստահեցնեմ քեզ, այդ հրաշալի բնական լիին ընկերակցութիւնը այն պատրանքը կու տար ինծի, որ երջանիկ եմ:

**ԱՆԱՀԻՏ.**— Իսկ հիմա ի՞նչ կը մտածես ընել, երջանիկ ըլլալու համար:

**ՁՈՂՐԱՊ.**— Ոսկեզոյն հեզուկս ալ դաւանանեց ինծի, ամէնքը դաւանանեցին: Հիմա համոզուեցայ: Կարելի չէ ոչ ոքի վստահիլ, ոչինչի վստահիլ:

**ԱՍՏՂԻԿ.**— Այնքան յոռետես մի՛ ըլլար, հայրիկ, կացութիւնը այնքան ողբերգական չէ:

**ԱՆԱՀԻՏ.**— Ահա մէկը, որ վստահօրէն պիտի շղաւանանէ քեզի, Ջոհրայ:

**ՁՈՂՐԱՊ.**— Ո՛վ տկարութիւն, անունդ կին է, Ենթսփիւրը ըսած է ժամանակին: Հիմա իմաստուն դարձած եմ, գիտեմ, կինը այլեւս ամէն քաշողականութիւն կորսնցուցած է ինծի համար: Ամէն պայծար դադրած է մէջս: Խարուսիկ վայրկեանի մը համար չեմ զոհեր հոգիին անդորութիւնը:

**ԱՆԱՀԻՏ.**— Կը քաջաբերեմ իմաստուն կեցումքդ, Ջոհրայ, սակայն երբք չեմ նախանձիր քեզի, ես ծնած եմ ապրելու համար, վայելելու, ինծի համար վայելքը կեանքի իմաստն է:

**ՁՈՂՐԱՊ.**— Ո՞վ ըսաւ, որ ես վայելքը չեմ սիրեր, կարելորը ճշդ ելն է, թէ դուք վայելքը ըսելով ի՞նչ կը հասկնաս:

**ԱՆԱՀԻՏ.**— Հասկցայ, քու վայելքդ ուրիշի լիչդ է:

**ՁՈՂՐԱՊ.**— Ո՛չ բոլորովին, մասամբ մը միայն: Գալով քեզի, միակ վայելքդ ինծի դաւանանելն էր, այնպէս չէ՞:

**ԱՆԱՀԻՏ.**— Գուցէ: Զարմանալի է կեանքը: Աստուած այսպէս է ստեղծած մարդ արարածը: Արդիւնում պտուղը համով կ'ըլլայ:

**ԱՍՏՂԻԿ.**— Իսկ ի՞նչ պիտի ըլլայ իմ վայելքի բաժինս, յարգելի ծնողք:

**ՁՈՂՐԱՊ.**— Ամէն մարդ կը ստեղծէ իր երջանկութիւնը՝ ոչինչէն, աղջիկս, մի յուսահատիր: Կեղբոնացիր, մտածէ, անպատճառ կը գտնես:

**ԱՆԱՀԻՏ.**— Այդ պատառը ինծի թող, Ջոհրայ, մի՛ պղտորեր ջուրը:

**ՁՈՂՐԱՊ.**— Նախ ճշդեմ, թէ թելագրութիւնս սեռային հանդամանք չուներ, կը վերաբերէր որեւէ վայելքի, որ Աստղիկի երեւակայութիւնը պիտի կարենար ստեղծել:

**ԱՆԱՀԻՏ.**— Աստղիկը կին է, սիրելիս, կին: Ծիշդ կողմնացոյցի հակառակը: Իր վայելքի պտքը միտ հարաւային կողմը ցոյց կու տայ:

**ՁՈՂՐԱՊ.**— Քեզի հետ համամիտ չըլլալով հանդերձ, կ'ուզեմ իմանալ նաև Աստղիկին կարծիքը այս մասին:

**ԱՍՏՂԻԿ.**— Ես ի՞նչ կարծիք յայտնեմ, հայրիկ, ես մօրս տարիքին հասած չեմ տակուին, որպէսզի հաճոյքներս կեդրոնացած ըլլան սեռային գործարաններու վրայ: Ես ինքզինքս կողմնացոյցէ մը աւելի՛ ժամացոյցի մը կը նմանեցնեմ կամ հողմացոյցի մը:

**ՁՈՂՐԱՊ.**— Կատարելապէս հաւատարակչուած:

**ԱՆԱՀԻՏ.**— Առանց մտածելու մի՛ խանդավառուիր, Ջոհրայ: Նախ՝ Աստղիկը աղջիկդ չէ: Վստահօրէն ըսեմ. ինծի պէս անյատակ հոր մըն ալ ա՛ն է: Աշխարհի բոլոր կիներն ալ անյատակ հորեր են, բոլորն ալ կը դաւաբուին նոյն ախորժակներով, սակայն քաղաքակրթութիւն կոչուած աղէտը կը կաշկանդէ ինչ որ բնազդները կը թելագրեն ուղեղին:

**ՁՈՂՐԱՊ.**— Մի՛ մոռնար, Անահիտ, որ ժամանակի ընթացքին բնազդները քիչ-քիչ

կոկուած ու դարձած են սովորութիւններ, ապա դառնալու համար օրէնքներ:

ԱնԱՀԻՏ.— Օրէնքներ, հա, ես կը ձաղկեմ բոլոր օրէնքները, որոնք ստեղծուած են տկար մարդոց կողմէ, պայքարելու համար զօրաւոր մարդոց դէմ: Մակայն ժամանակը եկած է, պէ՛տք է ամէն մէկը գիտնաք, որ անխուսափելիօրէն պիտի վերադառնանք նախամարդուն, ապազան զգայացունց հեռանկարներ կը գծազրէ երեւակայութեանս պաստառին վրայ: Մենք ազատ ենք, Զոհրայ: Մենք ազատ ենք, ձոնի (Պը յարձակի ձոնիին վրայ ու կը փորձէ համբուրի):

ԶՈՀՐԱՊ.— Կը բաւէ, Անահիտ, չափը անցուցիր:

ԱնԱՀԻՏ.— Ի՞նչ չափ: Ո՞վ գծած է չափին սահմանները: Յանկութիւններու չափը հոս, սրտիս մէջ է: Կեղծաւորներ, բարոյականի ստրուկներ, ի՞նչ կը սպասէք, թօթափեցէք ձեր կապանքները, թող ամէն մէկուզ նայուածքին մէջ փայլատակող ցանկութիւնները մարմին ստանան, թող ձեր յեզուները կարկածին ու չկարենան խեղաթիւրել այն խենթեցնող սարսուռները, որ կը թելադրուին ձեր սեռական անդամներուն կողմէ:

ձՈՆԻ.— Կը բաւէ, անամօթ կնիկ, կը բաւէ:

ԱնԱՀԻՏ.— Ամօթն ու անամօթը հիմա բոլորովին նոյնն են ինծի համար:

ԶՈՀՐԱՊ.— Իր մտածումներն ու զգացումները մէկ ուղղութեամբ կ'ընթանան:

ԱնԱՀԻՏ.— Ճիշդ կողմնացոյցին հակառակ ուղղութեամբ... ապրիս Զոհրայ, այս օրերս չափազանց արամիտ դարձեր ես:

ԶՈՀՐԱՊ.— Բնական է, ամէն մարդ կեդրոնացած է իր կարելիութիւններուն վրայ:

ձՈՆԻ.— Ամէն ատենէ աւելի հիմա է, որ պէտք ունինք ձեր մտային կարողութիւններուն: Զգուշացէք ամէն ինչէ, որ ապականութեան կը տանի, որովհետեւ ապականութիւնը պիտի կաշկանդէ ձեր կարելիութիւնները, ու մեզ պիտի զատապարտէ կղզիանալու մեր անձնական քմայքներու ծիրին մէջ: Այս աւերակ երկրագունտին դիմաց՝ գոնէ կանգուն պահենք ձեր հոգիները:

ՎԵՐՄԷՅ.— Ի՞նչ հոգի, ո՞ր հոգիները, այդ բոլորը ես քարոզած եմ ձեզի, առանց ես ինքս հաւատալու ըսածներու: Ի՞նչ հոգի, հոգի գոյութիւն չունի: Իսկ այդ ծիծաղելի բարոյական բարձր ըլլալ՝ որ անզամ մըն ալ գործածէք, շատ զէշ կը ընէ՛ ալականիս: Մարդուս էութիւնը կը նմանի պրիսմակի մը, որմէ հաղարաւոր ճառագայթներ կը մեկնին, սնափառութեան, տենչանքի, փառամոլութեան, կերքի ու տկարութեան ճառագայթներ, սակայն բարոյականի նշոյլն իսկ կարելի չէ գտնել այդ պրիսմակին վրայ, որովհետեւ մարդուս շաղախին մէջ բարոյական չկայ: Մարդ արարածը ինքզինքը կը խարէ, երբ կը փորձէ ամէն ինչի մէջ բարոյական փնտռել ու գտնել, սակայն չ'անդադառնար, որ կեանքը ինքնին ամենամեծ անբարոյութիւնն է. ԶԻ ՀՈՂ ԷՒՐ ԵՒ Ի ՀՈՂ ԴԱՐՁԻՍ. ինդրեմ, ըսէք, ի՞նչ բարոյական կայ ասոր մէջ:

ձՈՆԻ.— Ծն ալ սկսայ համոզուիլ, որ անասուններու հոգին երբեմն կեանքին կը վերադառնայ մարդկային կերպարանքով ու, հայր Վերմէյի խօսքերէն մեկնեցով՝ կարելի է եզրակացնել, որ իր նախանցեալ կեանքին մէջ եղած է գայլ, չուն կամ կատու:

ՎԵՐՄԷՅ.— Մէկ բան մտաւօրէն գիտեմ, ջորի եղած չեմ:

ԱնԱՀԻՏ.— Մի՛ վրդովիր, Զոհրայ, դուն կապիկէն սերած ես:

ԶՈՀՐԱՊ.— Լաւ է կապիկ ըլլալ, քան թէ չուն, սիրելի քառօրդ, շատ աւելի լաւ է կապիկ ըլլալ, քան թէ մարդ, մարդ սա սեւազգեստին հոգեով:

ԱնԱՀԻՏ.— Ամէն մարդու հոգիին մէջ առիւծ մը կայ պահուած, կ'ըսեն:

ձՈՆԻ.— Այստեղ մարդիկ կան, որոնք հոգի իսկ չունին: Ողձալիներ, գուք ուրիշ հաւատածք չունի՛ք, իստայներ չունի՛ք, շինելու, ստեղծելու պապակը չի՞ խոտվեր ձեր հոգիները: Երբեւիցէ մտածած չէ՞ք բարձրանալու, բարձրացնելու:

ԶՈՀՐԱՊ.— Անոնց խօսք պառկելու եւ պառկեցնելու մասին:

ՃՈՆԻ.— Կ'երեւի դուք չէք ըմբռներ կացութեան լրջութիւնը: Աճենափոքր անխո-  
ւանութիւնն իսկ կրնայ վերջ դնել մեր գոյութեան:

ԱՆԱՀԻՏ.— Ստեղծելու մասին խօսեցաք քիչ առաջ: Նախ ստեղծենք մարդը,  
այսպէ՛ս անոր մէջ զարգացնենք կառուցելու ու աշխատանքի կարողութիւնը:  
Մենք մարդ չենք այլեւս, մեր հողինները ապակահամ ինչ զարգացումի ու յա-  
ւալդիմութեան շարիքներով: Նոր կեանք առնող սերունդը զերծ կրնայ ըլլալ  
այդ ապակահամութենէն ու իր կարողութիւնները լիովին կրնայ օգտագործել  
չինչի ծրագրներու համար:

ՃՈՆԻ.— Ազնիւ մարդուն համար, զարգացումն ու յառաջդիմութիւնը չեն կրնար  
ապակահամութեան պատճառներ ըլլալ:

ԱՆԱՀԻՏ.— Տեսականը վերացական է, դուն արդիւնքը նկատի առ: Ահա ես, Վեր-  
մէյը, Աստղիկը:

ՋՈՀՐԱՊ.— Աստղիկը հանգիստ թող, քու կտուէզ շինուած չէ:

ԱՆԱՀԻՏ.— Բոլոր կիներն ալ նոյն կտուէն շինուած են:

ՄԱԿԻ.— Պոռնիկ:

ԱՆԱՀԻՏ.— Եթէ կ'ուզէք, այո, ըսէք ինչ որ կ'ուզէք: Կ'ընդունիմ, հրեշտակ մը չեմ.  
սակայն դուք՝ հրեշտակներդ, չէ՞ք կարծեր, որ պէտք է ճշմիք, զրկութիւն, կեղ-  
ծէք, որպէսզի կարենաք մնալ այն բարձրութեան վրայ, ուր գտնուիլ կը կար-  
ծէք:

ՄԱԿԻ.— Այդ ճշմութիւնը հոգեկան հաճոյք է պարկեշտ կնոջ համար:

ԱՆԱՀԻՏ.— Սասի՛ւստ էք ի՛նչ, նորմալ մարդուն համար, տառապանքին մէջ հա-  
ճոյք գոյութիւն չունի: Նորմալ մարդը զիտէ, թէ ինչ կ'ուզէ ու կը պայքարի  
ուզածը ձեռք ձգելու համար:

ՃՈՆԻ.— Պայքարի աւելի ազնիւ ձեւեր կան, որոնց մասին երբեքից մտածած չէք:

ՎԵՐՄԷՑ.— Իրաւունքը զօրաւորին է, կ'ըսեն: Ես համոզուեցայ, որ պէտք է ուժի  
զիմեմ, ուզածս ձեռք ձգելու համար:

ՃՈՆԻ.— Համարձակ ու կը տեսնես, քեզ շանատակ կ'ընեն:

ՎԵՐՄԷՑ.— Ձիւ մի՛ գրգռէք, կը գոջաք:

ՃՈՆԻ.— Եթէ աւելի առաջ երթաս, դո՛ւն ես, որ պիտի զոջաս:

ՎԵՐՄԷՑ.— Բա՛միս կ'ուզեմ, տուէք բա՛միս:

ՋՈՀՐԱՊ.— Սատանային դնա՛, սատանի ծնունդ:

ՎԵՐՄԷՑ.— Ա՛յդ է մեր պատասխանը:

ՋՈՀՐԱՊ.— Կարճ:

ՎԵՐՄԷՑ.— Ձիւ մի՛ գրգռէք կ'ըսեմ:

ՃՈՆԻ.— Ըրէ՛ ինչ որ կրնաս:

ՎԵՐՄԷՑ.— Ուրե՛մն այդպէս:

ՋՈՀՐԱՊ.— Այսպէս:

ՎԵՐՄԷՑ.— (Մեծ քար մը կը վերցնէ, ապա Անահիտին վիզէն կը բռնէ մէկ ձեռ-  
քով իսկ միւսով քարը բռնած գլխուն վերեւ, կը սպառնայ).— Տեղերնէդ  
չարժիք, եթէ ոչ՝ զլուրը կը փլուծեմ հիմա:

ԱՍՏՂԻԿ.— Մամա՛...

ՎԵՐՄԷՑ.— Ձարժի՛ս: Ձգուշացէ՛ք, ե՛տ, բոլոր՛դ ետ: Անխոսեմութիւն չընէք, եթէ  
ոչ՝ կը սպաննեմ: Ե՛տ, ե՛տ...

ՃՈՆԻ.— Ի՛նչ է ուզածդ:

ՎԵՐՄԷՑ.— Ուրե՛մն տակաւին չհասկցա՞ք ինչ է ուզածս: Ուզածս ճանկերուս մէջ է  
հիմա, եւ ոչ ոք կրնայ խլել:

ՋՈՀՐԱՊ.— Մի՛նչեւ ե՛րբ այդ քարը այդպէս պիտի ճոճես զիսուն վրայ:

ՎԵՐՄԷՑ.— Մի՛նչեւ համոզուիք, որ իրաւունքը զօրաւորին է:

ՋՈՀՐԱՊ.— Յետո՛յ:

ՎերՄէՅ.— Յետոյ ես բաժինս կ'առնեմ ու կը հնանամ:

ՃՈՆԻ.— Յետոյ:

ՎերՄէՅ.— Ահա կ'ազդարարեմ ձեզի: Ձըլլայ՝ որ հետապնդէք զիս, կը զղջաք:

ԱՆԱՀԻՏ.— Ազատեցէ՛ք, կ'աղաչեմ:

ՎերՄէՅ.— Լու՛կ, լիբո, կը բուռէ՛ որքան շարչրկեցիր զիս, հիմա այլեւս չես կրնար ձեռքէս ազատիլ:

ԱՆԱՀԻՏ.— Կ'աղաչեմ, ազատեցէ՛ք:

ՃՈՆԻ.— Հիմա բան չենք կրնար ընել, բայց լաւ դիտցիր, վարդապետ, ասիկա այսպէս չի վերջանար:

ԱՆԱՀԻՏ.— Ուրեմն թոյլ պիտի տաք, որ զիս այսպէս առեւանգէ՛:

ՎերՄէՅ.— Լու՛կ ու քայլէ՛ եթէ կ'ուզես ողջ մնալ:

(Վերմէյ Ամսիտը բաշխուելով կը սկսի հեռանալ, երբ Միեր, Քրեմզիսքըրը բռնած՝ կը հասնի վագելով ու պոսալով):

ՄՀԵՐ.— Մտիկ ըրէք, Փարիզի ռատիոն կը խօսի, մտիկ ըրէք:

(Ամէնքը կը հաւաքուին Միերի շուրջ):

ՃՈՆԻ.— Փա՛ռք քեզ, Աստուած, ուրեմն ամէն ինչ կորսուած չէ:

ԱՆԱՀԻՏ.— Ի՛նչ կ'ընէ յստակ չեմ լսեր:

ՋՈՀՐԱՊ.— Պիտի վերադառնանք, ես՝ ուխտի շինու, իսկ դու...

ԱՆԱՀԻՏ.— Լըջացիր, Ձոհրայ, սրամտութեան ատենը չէ:

ՃՈՆԻ.— Պիտի վերադառնանք ամէն ինչի, քաղաքակրթութեան եւ օրէնքներուն, զրկանքներուն ու սովորութիւններուն: Ամէն մէկը պիտի ճշմարտացի, հակառակ ձեզ համակող ցանկութիւններուն, ինքզինքնիդ ցոյց տալ իրբեւ առաքինի, պատուաւոր ու ողջախոհ մարդիկ: Դու, վարդապետ, ի՛նչ որոշած ես ընել:

ՎերՄէՅ.— Կարծես երազէ մը կ'արթննամ, սարսափելի մղձաւանջ մը վերջ կը գտնէ: Գիտեմ, սակաւին երկար պիտի ճգնիմք, մինչեւ մեր վերադարձը զէպի մարդկութեան ծոցը, սակայն, կ'աղաչեմ, մոռցէք ինչ որ պատահեցաւ, ձեր անսածին չափ լար ու անպէտ մէկը չեմ:

(Վերմէյ ծուկի կալ գայ ու կը սկսի ազօթել):

ՃՈՆԻ.— Վաղը առաւօտ ճամբայ պէտք է ելլենք: Հետեւողական ճիգերով, վստահ եղէք, որ քանի մը ամիսէն անպայման կրնանք տեղ մը հասնիլ:

ԱՆԱՀԻՏ.— Ձեռնացունց երազները չքացան: Կը վերադառնանք ծանծաղութեան, լնացած ու նեխած օրէնքներուն, կը վերադառնանք հինին ու ծիծաղելիին, վերադարձ մը, մեծ ու ողբերգական նահանջ մը: Ազատութիւնն ու յառաջդիմութիւնը կը զոհենք քաղաքակրթութեան:

ՋՈՀՐԱՊ.— Դեռ թմբած ես, անուշ թռչնիկ, մոռցիր այդ մտքերդ, անոնք կրնան քեզ դատապարտել ու հասցնել յիմարանոց, բանտ եւ դեռ աւելի հասարակ վայրեր:

ԱՆԱՀԻՏ.— Ո՛ր կը կարծես, որ մեզ կ'ուզէ առաջնորդել պարոն Ճոնին: Աշխարհը արդէն յիմարանոց մը չէ՞, բանտ մը չէ՞, եւ արդեօք չէ՞ ինչ որ կ'ուզես հասկըցնել հասարակ վայր ըսելով: Ձեզմէ ո՞վ կը յաւակնի ու քաջութիւնը ունի ինքզինքը կատարելայ մարդ կոչելու:

ՃՈՆԻ.— Կատարելութեան հասնիլը չափ դժուար է, գրեթէ անկարելի: Սակայն Աստուած մարդու սուած է յոյս ու կամքի զօրութիւն, երկու առաքինութիւններ, որոնց մղումով մարդ առանց յուսահատելու, դարերէ ի վեր, կը ձգտի զէպի լաւագոյնը, կատարելու:

ԱՆԱՀԻՏ.— Ի՛նչ բանի կը ծառայեն լաւագոյնն ու կատարելայը, երբ մեր ներսիդին սակձուած կիբբեր կը հային ու կը խեղդուին: Պէտք է այս բոլորը համազօրել լաւագոյնին ու կատարելային հետ:

**ՃՈՒՒՑ.**— Այդ բոլորը խաւարի երկու նք են, չոյսն ու իմացականութիւնը անմիջապէս կը վանեն ինչ որ արտառոց է, պիղծ ու յանցաւոր:

**ԱՆԱՀԻՏ.**— Իսկ ձեզի կը հետեւի իմ ստանձին շմնայո՞ւ ու վերապրելու համար, սակայն մտահանգէք, ապագան շատ մութ է տակաւին:

**ՎԵՐՄԻՅ.**— Իստե՞ն փորձառութիւն մը ձեռք ձգեցինք:

**ԱՍՏՂԻԿ.**— Ամէն մէկուս ենթադրեալացութիւնը յստակօրէն երեւան եկաւ:

**ՋՈՂՐԱՊ.**— Ինծի համար բան չփոխուեցաւ: Այս փորձառութիւնը միայն կացութիւնը յստակացուց:

**ՎԵՐՄԻՅ (տակաւին ծուռկի).**— Մեր այս փորձառութիւնը հաստատեց իրականութիւն մը, որ վարակած է մարդկութիւնը. սերի եւ սեռայինի փնտտումքը, որ կը հետեւի մեր ամէն մէկ քայլին, կիրթի ու արբեցութեան մոլուցքը, որ կը փորձէ մոռնալ ներկան, ուրանալ իրականութիւնը: Ինքնախարհութեան վարպետը ետին, մարդկութիւնը բոլոր կը տուայտի սերի կիրքով, այս բոլորը եւ կը յայտարարեմ ձեզի, իբրեւ մեզաւ որ եւ սակայն բոլորովին անկեղծ կրօնաւոր մը...

(Թրեմպիսքը կը սկսի ելաժշտութիւն մը...)



# ԻՎայական Շարժում

ԳԱՐԵԳԻՆ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍ

## ՀԱՅ ԳԻՐՔԸ՝ «ՕՃԱՆԱՍՓԻԻՌ» ՀԱՅՈՒԹԵԱՆ

Ստորև տրուած գրութիւնը Անթիլիասի մէջ կազմակերպուած Գիրքի Յոյ ցուցահանդէսին արտասանած Գարեգին վեհափառին խօսքն է. որ ինձերորդ անգամ բլլալով կ'ընդդէմ հայ գիրքին զերր հայ մարզուն կեանքին մէջ, իյն օրերուն քէ ներկայիս:

Հայ գիրքին խորհուրդը բացայայտող վեհափառին այս տարուան եւ նախորդ տարիներուն արտասանած խօսքերուն աւերակը՝ ուրախութիւն է յայտնել, որ Անթիլիասի մէջ ինձ տարիներ առաջ սկսած հայ գիրքի ցուցահանդէսը տրդէմ օւսանողութեան կարգին անցած ձեռնարկ է, որ տեղւոյն վրայ մեծ արդիւններ ձեռք բերել ծուխ, վարակիչ դարձաւ: ամբողջ Մփիստի տարածքին:

Հայ գիրքը սկսած է տէր ունենալ՝ կազմակերպչական շնորհ ունեցող անհատականութիւններ, եւ անոնց ձեռնհասութեամբ շնորհի հասնիլ քուն տիրոջ՝ հայ ժողովուրդին:

Փառք եւ գոհութիւն քեզ, Տէր, որ շնորհ ըրիլ մեր բոլորին այս տարի եւս մեր սրբաշունչ, հայրենանախանձ եւ զբառենչ վարդապետին Քու պարզեւած Հայ Գիրքի պաշտամունքի այս այլեւս ծիսացեայ արարողութեան զալու: Ինձերորդ ռուխազնացութիւնն է այս մեզմէ շատերուն համար: Սրբանկախառն յուզումով կը դիտեմ դէմքերը ձեզմէ շատերուն, որոնք օրինակելի եւ ուսանելի հետեւողականութեամբ եւ հաւատարմութեամբ ինը ցուցահանդէսներուն ալ շարունակաբար եկան եւ իրենց աչքերը լուսցին Հայ Գիրքի:

digitised by A.R.A.R.@

այս աւագան-ազրիւրին մէջ: Բարձր գալուստ նաեւ անոնց՝ որոնք նորընծայ հաւատացեալներն են Գիրքի պաշտամունքի այս արարողութեան:

Տագնապի կրակը դեռ բորբ է մեր շուրջը, Լիբանանի ափերուն վրայ, զյարեւելից մինչ ի մուսոս, ի հիւսիսոյ եւ ի հարաւոյ: Մեր կեանքն ամբողջ, մեր ներքին խոհերը, հոգեկան արամադրութիւնները, ընտանեկան եւ ընկերային խօսակցութիւնները, առօրեայ գրադումները ահաւոր ու կարծես անքականելի յաճախութեամբ բռնազբաւուած են ոտմերթու, հրացանաձգութիւններու, տրճակազէններու, քանդումներու, սպանութիւններու, առեւանդումներու, կոզոպուտներու, մեկնումներու, տալարի արժողութեան ամէնօրեայ ելեւէջին, ապրուստի յարաճուն եւ արժեթաց սղութեան եւ անոնմէ շատախող բազմատեսակ այլ յարակից մտահոգութիւններու, մտալկումներու յարակրկնուող բառամթերքովը, մթնոլորտովը, հոգեբանութեամբը, նոյնիսկ սեռական մը այլեւս երկրորդ բնութիւն դարձող սովորութեանականութեամբը:

Յիրո՞ւն միտքէն կ'անցնի խօսիլ Հայ Գիրքի մասին, կամ զբաղիլ Հայ գիրքով, Հարց կրնայ տալ յետէ բանիմաց մարդ, դուքսէն կամ ներսէն, որ կը դիտէ այս երկիրն, ու մեզ՝ այս երկրին մէջ ապրող մեր ժողովուրդը:

Եւ սակայն փաստական իրողութիւն է — եւ ողբից ու յանկուցիլ երեւոյթ — որ Հայ Գիրքը կ'անցնի՝ մեր միտքէն ու մեր միտքը կը տողանցէ հայ գիրքներու մէջէն: Փա՞ստը. ահա տասնհակներով Հայ գիրքերու հրատարակումը այս բազմիցս ու բազմակողմ սուփններով Հարուածուած եւ տապնապի փշաթել ցանցերու մէջ բռնուած Լիբանանահայ գաղութի կեանքին մէջ: Փա՞ստը. ահա այս Յուցահանդէսը եւ մեր ներկայութիւնը:

Չարմանալի ժողովուրդ ենք: Չարմանալի եղած ենք: Եւ չենք կրնար ըլլալ՝ եթէ Հայ ենք: Արդէն ինքնին փարատուէն է մեր Հայակերպ գոյութիւնը Սփիւռքի մէջ: Առեղծուածին պատասխանը վեր կը մնայ պատմարաններու եւ ընկերարաններու Հասողութեան: Միակ պատասխանը Հայուն ներքին ինքնութեան, լինելութեան մէջ պէտք է փնտռել առանց յաւակներու գայն գտնել:

«Ժողովուրդ խորիմ  
Անհաս անսկիզբ...»:

Եւ խորհուրդէն ահա ծուէն մը այսօր կը բացուի մեր աչքերուն դիմաց սա Յուցահանդէսով, որ կը հանդիսադրէ Հայ Հողին միախառնումը Հայ Գիրքին մէջ, Հայ մարդուն սերտ հարազատութիւնը Հայ Գիրքին հետ:

Ինչպէս որդին կ'անդրադառնամ, որ այս չէ ամբողջական պատկերը գործնական այն կեանքին մէջ, որուն Հանդիսատեսներն ու մասնակիցներն ենք մենք բոլորս: Կայ Հայ Գիրքին հանդէպ տակաւին յամենող եւ թերեւս տեղ-տեղ ընդարմացող, կեղեւ կազմող անտարբերութիւն մը: Լոյսը անպայման ունի իր ստուերը, երբ կը հանդիպի մարդուն, կեանքին ու այխարհին...: Յիսուսի լուսազնայ եւ լուսատարած տասներկու առաքեալներու մէջ ալ գտնուեցաւ ստուերազնայ եւ խաւարակեաց Յուդա մը...: Ս. Մեսրոպի եւ Թարգմանիկ Վարդապետներու դիմաց գտնուեցան նաեւ գիրքը արհամարհող եւ զբազէտը Հալածող «վայրապար մարդիկ», դատարկախօս, հասարակաճաշակ, նախանձոտ եւ պատեհապաշտ անձեր, «Արեղէնքս հայոց» — ինչպէս կը ընդդէմ դրանք Թարգմանիկներու ընտիրներէն մին՝ Դազար Փարպեցի — որոնք Հայոց իմացական փթթումի շեղապոյն պահուն, Ոսկեդարուն, կենսաժողովուրդ լուրին փորձեցին պղտորութիւն խառնել: Բայց լոյսը լոյս ըլլալէ չի գաղբիր, ինչպէս չգաղբեցաւ: Թող այս Յուցահանդէսն ալ անոնց Համար ըլլայ



կոչնակի դողանջ՝ արթնցնելու զիրենք անհոգութեան թմբիրէն եւ հրաւիրելու  
Հայ Գիրքի սա կոչունք-պաշտամունքին:

Հետեւաբար, այս լուսահայեաց մօտեցումով եկէք այսօր անգամ մը  
եւս, եւ միասնաբար խորհրդածենք Հայ Գիրքին մասին:



Այս տարի իրբեւ սեւեռակէտ իմ մտածումին, ընտրեցի բառ մը, որ  
Հայոց Հնատիպ գիրքերու մէջ թաղուած բառ մըն է, զոր կ'ուզեմ այսօր արեւին  
մէջ լուսւի ձեր առջեւ, այս տարուան խօսքիս խորագիր ընտրելով

Հ Ա Յ Գ Ի Բ Ք Ը՝ «ՕՃԱՆԱՍՓԻԻՌ» ՀԱՅՈՒՓԻՆԱՆ:

Օճանասփի՛ւռ...

Օճան՝ Հայոց դասական մատենագրութենէն ժառանգուած, բայց այս-  
օրուան ընթացիկ մեր լեզուին մէջ մոռացութեան մատնուած բառ մըն է, որ  
Հայկազեան Բաագիրքի սահմանումով կը նշանակէ բարիք, երախտիք, օգ-  
նութիւն: Այս բառին սեւեռեալ, շեշտեալ իմաստով գործածութիւնը կը պար-  
տինք հեռաւոր Հնդկաստանի Պոմպէյ քաղաքին մէջ ասկէ 170 տարիներ առաջ  
ապրած եւ գործած խումբ մը Հայ երիտասարդներու, որոնք ընկերակցութիւն  
մը կազմած էին 1815ին՝ իրենց անգամներուն ինքնազարգացման եւ ժողո-  
վուրդի լուսաւորութեան համար եւ զայն կոչած էին «Օճանասփիւռեան»,  
ինչպէս նոյն ատեններ ուրիշ խումբ մը, իրենց ազգակից երիտասարդներէն՝  
կազմած էին ուրիշ ընկերակցութիւն մը, «Իմաստասնորիւն» մակդիրը տա-  
լով անոր իրբեւ անուն:

Օճանասփիւռեան Ընկերակցութիւնը 1821ին Կալկաթա փոխադրե-  
լած, իր երեք-չորս տարիներու գոյութեան ընթացքին Կալկաթայի մէջ տպա-  
րան հաստատեց եւ 8 գիրքեր ընծայեց ժողովուրդին, այս վերջնոյն իմացական  
լուսաւորութեան, մտաւորական եւ ընկերային զարգացման ի խնդիր:

Բառերը՝ Օճանասփիւռեան, «Իմաստասնորիւն»՝ Հնարոյր են, եւ  
ձեւապաշտ, ու հետորական արուեստականութեան մը շնչուն ու նկարագիրը  
ունին իրենց մէջ: Բայց իմաստութիւն որոնող, կեանքը իմաստալից կերպով  
ապրիլ ձգտող, ժողովուրդին համար «օճան»՝ բարիք ու երախտիք սփռող այս  
յառաջահայեաց Հնդկահայ մարդիկը, խթանուած Հնդկաստանի մէջ հետզհե-  
տէ զարգացող անգլիական քաղաքակրթութեան երեւոյթէն՝ իրենց ժողո-  
վուրդի հոգեկան, իմացական, ազգային եւ քաղաքական լուսաւորումը ձեռք  
բերելու նախանձախնդրութեամբ կը գործէին: Առաքելութիւն մը ստանձնած  
էին — «օճան» սփռել լոյսի կարօտ իրենց ժողովուրդին կեանքին մէջ:

Սե իրբեւ միջոց, դաշտը հերկող իրբեւ խոփ, հոգեգործութեան աշխա-  
տանոցի իրբեւ գործիք անոնք ընտրեցին Հայ Գիրք եւ Գիրքը, եւ անոնց գոր-  
ծարանը՝ տպարանը: «Օճան»ի, հոգեւոր եւ իմացական բարիքներու աստ-  
ւածատուր ցնցուղը, Ս. Մեսրոպով լինուած մաղը Հայ Գիրքն էր իրենց համար,  
որ երկինքէն ու այնարհէն փ'անմրելը ու կը մաղէր լոյսը:

Հնդկահայոց Տպագրութեան այնքան պերճիմաստ պատմութիւնը  
ինքնին «օճանասփիւռեան» պատմութիւն մըն է: Հայութեան համար այն-  
քան հեռաւոր եւ Հայութիւնը Հայութենէն այնքան հեռացնող Հնդկաստանի  
մէջ էր, որ Հայ «Տիպ ու տառը» նոր կեանք առաւ 18րդ դարուն, եւ հսկայ ժա-  
ռանգութիւն մը թողուց մեր ժողովուրդին, շուրջ 200 գիրքեր ընծայելով մեր

զպրութեան, ինչպէս նաեւ հիմը դնելով Հայ մամուլին, ծնունդ աւելցնելով Հայ թերթին եւ անոր աւելցնելով այլ թերթերու օգակները:

Ինչ չուզի է լսել սա ձայնը, որ սիրտերէն ու միտքերէն փրթած իմացական երգի մը եղանակին պէս կը հասնի մեզի այսօր այստեղ, Անթիլիասի մէջ, չուրջ երկու հարիւր տարիներու հետաւորութեան խորքերէն, Հնգկաստանի մէջ Հայաստանը ապրող մեր նախնեաց գրիչէն արձակուած եւ մեր ականջներուն այնքան թարմ այժմէականութեամբ հնչող:

«Տպարանի գործառնութիւնն էմբան ազգօգուտայ, որ պիտի քան զամենայն բան ի վել (աւելի) ազգօգուտ համարուի, քանզի գիտութիւնն էմ, որ այնքան կարգաւարտմայ: Եւ գիտութիւնն թարց (առանց) ընթերցողութեան՝ չի լինելէց: միւնց գիրք չլինի՝ ընթերցողութիւն ուստի՞» պիտի լինի:

«Եւ ընթերցողութիւնն շատ հարկաւորայ մեր այժմեան կացութեան, որ գնան ի վել յուսարուեմ, ծանօթութիւն ստանան աշխարհային կենցաղավարութեան, որ բարւոք կարողանան իւրեանց կառավարել: Քանզի անտրամբ թագաւորութիւն չունենէ, որով ինչ բանի ընդունակութիւն ունենանէ՝ էմ բանն կարողանանք գրաւելն: վասն որոյ այժմ գրագիտութիւնն պիտի առաւել ընտրելի լինի վասն միջաբարութեան եւ շահաւէտութեան»:

Այսինքն՝ վասն ազգային արեացման եւ հարստացման:  
Գիրք՝ «օճան» է  
Գիրքը՝ «օճանասփիւռ...»:

\* \*

Այս է ահա անդրադոյն իմաստը գիրքին — «օճան»ի ցանք է անհկա Հայոց կեանքի անդատանին մէջ: Մարդուն բարիքին համար է Գիրք՝ իր ծագումով եւ կոչումով: Եթէ դուք գիտնաք բարին կամենալ գիրքին համար, հաւատացէք, որ ձեր կեանքին մէջ պիտի գգա՛ք, պիտի տեսնէ՛ք, որ Գիրքը ձեր բարիքը կը դառնայ, «օճանասփիւռ» իր հրաշագործութեամբը ձեր կեանքին մէջ լոյս եւ բերկրանք կը ճառագայթէ, ձեր մարդկային եւ ազգային դոյութեան եւ գոյակերտման մէջ բարի սերմեր կը ցանէ:

Գիրք կեանք է, տեսակ մը անձայն ու անխօս անձ է. ինք իրմով թէեւ անչարժ, անշունչ եւ անհողի, բայց իր մէջ ունի հոգին, սիրտն ու միտքը, կամքն ու շարժումը գինք արարող մարդուն:

Մեր ամենահոգի նարեկացին, շի խորոց սրտի ընդ Աստուծոյ խօսք վերառաքող անզուգական ու խորհրդային, հայեցողապաշտ ու հոգեխոյզ բանաստեղծը, Ս. Աստուածածնի ձօնած իր ներրողի Յիշատակարանին մէջ, իր գրութիւնը խնդրող, գիրքի բարեկամ ու Մոկաց աշխարհի դիտապետ — Եպիսկոպոս — Ստեփաննոսին ուղղած իր խօսքով Գիրքին կու տայ կենդանական, ապրող ու ապրեցնող գոյութեան պատկերն ու իմաստը: «Ես այս ներքողանքը շարահիւսեցի... թուրքի վրայ՝ իբրեւ տեսակ մը սպիտակափայլ եւ լուսափառ դաշտի մը վրայ: Շրթնաւոր գրիչս մտրակելով արձակեցի ասպարէտի վրայ, գրիչս՝ օր կը խօսի՝ թէեւ շունչ չունի, կ'ընթանայ՝ թէեւ քայլ չունի, կը ձայնէ՝ թէեւ հունչ չունի, կը պատմէ՝ եւ դադար չունի, կը քարոզէ՝ եւ չի սայթափիր: Այս գիրքն մէջ արձանացուցի քու կոչմանդ սեանջիլի անունը, իբրեւ անցնելի յիշատակ, օ՛վ Տէր Ստեփաննոս, Մոկաց

Լերամ հօգոր դիտապետ: Որպէսզի՛ յաւիտեանապէս մնաս այս համառօտագիծ մատնանիմ մէջ անթիւ օրերով եւ հազարաւոր տարիներով, իմ այս փոքրիկ տեսութեամբը մտօնա:

*Այո՛, Գիրքը սլացք է՝ սլանալ ուզողին համար,  
Շունչ է՝ իմաստնօրէն շնչել փափաքողին համար,  
Յաւաջընթաց ու վերասլաց քայլ է՝ ուղիղ քարել ցանկացողին համար,  
Ձայն է՝ իմանալի ձայն լսել ձգտողին համար:  
Մէկ խօսքով՝ գիրքը հոգի է՝ մարմնեղէն աչքերը հոգեկան տեսութեամբ  
շարժել գիտցողին եւ կրցողին համար: «Անգիտաց՝ անպէտ» է անկա, բայց  
գիտնոց եւ պիտանեաց, սիրողաց եւ պիտանականաց համար՝ ամենապէտ եւ  
«օճամասփիւն»:*

*Բոլորիդ ծանօթ է անունը Ամերիկայի այնպիսի աշխարհահռչակ այն կնոջ, որ  
կոյր էր, խուլ եւ համր — Նիլն Փէլլըր: Ձեր կրնար գիրը տեսնել, ձայն լսել կամ  
ձայն արձակել: Մարդ կային ի՞նչ ահաւոր ողբերգութիւն, երբեք անդամա-  
լուծութիւն: Բայց այդ կոյր, խուլ եւ համր կինը հինգ հասարակ գիրքեր գրեց,  
հազարներ կարդալէ զատ: Լսեցէ՛ք խօսքը գիր տեսնել չկրցող այս աշագուծի  
կնոջ եւ իմացէ՛ք անոր վկայութիւնը գիրքի արժէքին եւ գրքին մասին:*

«Ճշմարտապէս ամէմ մէկ Ոռք գիրք կը Յմանի մաւու մը, որ մեզ կը  
հեռացնէ եւ կ'ազատագրէ մեր սահմանաւարումներու ճարացեալ վիճա-  
կէմ եւ կը շարժէ ու կը տանի դէպի շփեղութիւնը կեանքի անհուն ովկիա-  
նաթմ»:

*Իրմէ առաջ, երեք տարեկանին աշագուծի դարձած Փրանսացի մը՝  
Louis Braille, կարծես իր գոյութեան թելերուն մէջ գրքին բնութեանկան  
կարօտը գգալով, աշագուծի իր եղբայրներուն եւ քոյրերուն համար յատուկ,  
ցցուն, կիտաւոր գիր յօրինեց, որպէսզի աչքով կարդալ չկրցողը ձեռքով կար-  
դայ եւ գրքի լոյս-չնորհչէն շքեղութիւնը հոյրերու այս Ս. Մեարտը իմացեր էր, որ  
Գիրք «օճամ» է եւ Գիրքը՝ «օճամասփիւն»:*



*Փառք Աստուծոյ՝ մեր աչքերը բաց են:  
Բայց, խոստովանելու, որ մեզմէ շատերուն աչքերը յաճախ փակ կը մնան  
գիրքին դիմաց, եւ լայնարաց՝ դէպի այլ կողմերը կեանքի հանդիմաններուն,  
«Կանայի զուարթ ակումբներուն» կողմը, գրքապաշտ Սիլիլ պատրիարք  
Դուրեանի բառերով: Գիրքը բացող բանալին ձեռքը չէ՝ ա՛յլ է եւ՝ աչքին մէ-  
ջէն լուսարձակուող հոգեկան-գոյացական եւ իմացական-հայեցապաշտ-  
կան ընկալչութիւնը, դասական յոյներուն «ՆԱՆՍՆՆ», Միաքը, մեր հայրերուն  
«Բաճնը»: Որքան լայն բացուի կարկինը ներքին իմացողութեան այդ լուսար-  
ձակին մեր կեանքին մէջ՝ այնքան իմաստաւոր, պայծառացեալ վիճակ եւ  
իմաստ կը գգենուն մարդն ու իր կեանքը: Գիրքը այսպիսի Միտք-Աչքին՝ առ-  
ջեւ բացուած՝ տեսակ մը ներքին կողմնացոյց է, որուն սլացք ուղղուած է դէ-  
պի երջանկութիւն, դէպի ազատութիւն, դէպի իրաւ մարդկայնացում եւ  
հայուն համար՝ նաեւ դէպի իրաւ ազգայնացում:  
Սկզբնցոյ պատմութեան մէջ բառ մը կայ, որ դործածուած է անոնց  
համար, որոնք քրիստոնէական հաստքի այս կամ այն սկզբունքը, դաւա-*

նանքի այս կամ այն բանաձևեր կը մերժեն ընդունիլ կամ կը խեղաթիւրեն անոր իմաստը — հերետիկոս բառով կը ճանչցուին այդ մարդիկը:

Վարդապետական, աստուածաբանական, դադափարական, տեսարանական բնագաւառներէն եւ ոլորտներէն կեանքի եւ գիրի աշխարհին մէջ փոխադրելով այդ յղացքը, ես իրաւունք կու տամ ինծի այսօր ըսելու, որ ինծի համար հերետիկոսի պէս անձեր են անոնք, որոնք կը մերժեն Հայ դիրք կարգայ երբ Հայերէն գիտեն: Հայ դիրքին հանդէպ կամաւոր անտարբերութիւնը Հայութենէ հեռացումի ձեւ մըն է: Որքան ալ զգացականօրէն Հայութիւնը ներկայ ըլլայ անոնց մէջ՝ բան մը էական, կարծես ազգային տեսակէտէ բնութենական բան մը կը պակսի անոնց: Աղբիւրէն խմուած ջուրին զովութեան, արեւէն շառաւիղած ճառագայթին ջերմութեան, ծառէն քաղուած թարմ պտուղին համին պէս բան մը կը պակսի անո՞ր՝ որ իր աչքերը փակ կը պահէ Հայ Գիրին հանդէպ, երբ իր ներքին իմացողութիւնը իր սնունդը չ'ըմպեր հայրմատ ծառին ու Հայագիր Մատենին ակունքէն:

Գիրն ու Լեզուն որքա՞ն եզական եւ անփոփոխի ենք բաներ են: Ուզածիդ չափ եւ ուզածիդ պէս թարգմանէ, տառագարձէ, չի տար համը սկզբնատիպին, անկրկնելիին, մեր ներքին դոյութեան դիմագիծ դարձած բանաստեղծ էտարրին:

Հայ Գիրքը իր անդիջելի տղը ունի Հայ կեանքին եւ Հայութեան պայքարին մէջ: Ես չիմ կրնար երեւակայել Հայութիւն՝ առանց Հայ Գիրին: Եւ որքան նոյն ըլլայ ու խօսուի դառնայ Հայ Գիրքը՝ այնքան աւելի կ'ամբաստայ, կը զորանայ, կը հարստանայ, կը բարձրանայ Հայութիւնը:

Ահա թէ ինչու Հնդկաստանի մէջ տպարան հաստատած ու Գիրք հրատարակած մեր ազգի երախտաւորները յաճախ իրենց դիրքերու յիշատակաբաններուն մէջ կ'արտայայտեն իրենց անխառն, անջնջելի եւ անխախտելի Հուատըը Հայ Ժողովուրդի գոյատեւման եւ երազներու կենսագործման: Անոնք դիրքը կը յօրինէին եւ կը տպէին՝

- «հոռիեցնայ զօգուտ ազգիս»
- «Առ ի պայծառութիւն եւ լուսաւորութիւն Ազգին իմոյ»
- «Առ ի վայելումն ամենայն հայկազեան տոհմի»
- «Ըստ թելադրութեան ազգասիրական նախանձու մերոյ»:



Կը հաւատամ ու պատմութեամբ հոշակուած ճշմարտութեան փաստով կը յայտարարեմ, որ Հայ Գիրքով Հայ Հոգի՞ն է, որ կը կաթի ու կը տարրանայ մեր Հոգիներուն մէջ: Երբ այս օրերուն, Կաթողիկոսական օժմանն տասնութըք տարւոյն հանդրուանին եմ հասած արդէն, երբ կը պատրաստուիմ յառաջիկայ տարի, մեր եպիսկոպոսական դատու Սրբազան եղբայրներուն հետ միասին, Անթիլիասի այս Մայրավանքին մէջ, Ս. Միւռնոնի օրհնութիւնը կատարելու, երբ միտքս, սիրտս ու հոգիս հայոց Ս. Միւռնոնի խորհուրդով են ներգրաւուած, ես թոյլ կու տամ ինծի ըսելու, որ Հայ Գիրքը, որոշ եւ վաւերական իմաստով՝ ՎԻՒՄՊՆ է մեր Ժողովուրդի զաւակներուն համար: Ան՝ որ Հայ Գիրք կը կարգայ՝ կը միւռնուի Հայութեամբ:

Եթէ Գրիտոսի Առաքելայներէն ու անոնց շառաւիղ Գրիտոսաստեւ Ս. Գրիգոր Լուսաւորէն օրհնուած Միւռնը Ս. Հոգւոյն աստուածային կնիքը եւ Հայութեան զրօշը կը գնէ Հայու ճակտին, կրկնային տեսիլքով կերպ ստացած

և Ս. Մեսրոպի աչքերին կաթած Հայ Գիր-Միւռոնը հայասնունդ քաղցրութեամբ կ'օծէ եւ ուժականութեամբ կը պրկէ մեր հոգիները:

Եթէ կ'ուզենք, որ մեր «ճակտի գիր»ը մնայ անաղարատ՝ եկէք ուրեմն մեր կեանքերուն մէջ լեցնենք Հայ Գիրքը, որպէսզի մշտասնունդ ներգործութեամբ պայծառ պահէ այդ «ճակտի գիր»ը այնպէս խուժող այլատեսակ եւ այլացնող փոշիներուն դիմաց:

Եթէ կ'ուզենք մնայ Հայօրէն ուղղափառ, եկէք ուրեմն մեր ձեռքերուն մէջ ուղիղ եւ ամուր բռնենք Գիրը Մեսրոպագիծ, որպէսզի ուղիղ ընթանանք այլուզի եւ բազմուզի ճամբաներուն մէջ այս սփիւռքեան աքորութեան:

Այս վանքին մէջ եօթը տարին մէկ անգամ Ս. Միւռոնը շնորհասփիւռ հեղուժով կը լուսանայ մեր համայնական կեանքին մէջ:

Այս նոյն վանքին մէջ ահա ամէն տարի Հայ Գիրք-Միւռոնը կը պայծառափայլի եւ «օճանասփիւռ» կը ճառագայթէ մեր կեանքին մէջ:

Երանի՛ անոնց, որոնք Հայ Գիրքին «օճան»ը բարեաց առատութեամբ կը վայելեն, Մեսրոպարար միւռոնուած կը վերադառնան տուն, Միւռոնին բոյրն ու ճառագայթը կը տանին իրենց հետ եւ անոնցմով արգարապէս եւ գործնապէս կ'արտայայտեն իրենց անդամակցութիւնն ու մասնակցութիւնը «Օճանասփիւռեան» մեծ, համապարփակ այն ընկերութեան մէջ, որուն անունն է Հայու՛թիւն՝ ի Մայր Հայաստան եւ ի ծագս այնպիսի, «յարեւելից մինչ ի մուտս, ի հիւսիսոյ եւ ի հարաւոյ, յամենայն տեղիս եւ յամենայն ժամու, եւ՝ յաւիտեանս յաւիտենից»:

18 Հոկտեմբեր, 1986  
Անթիլիբաս-Լիբանան

ԳԱՐԵԳԻՆ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍ  
ՄԵՍԻ ՏԱՆԸ ԿԻՎԻԿԻՈՅ

Լ. ՄԿՐՏՁԵԱՆ

**ՅՈՎՀԱՆՆԷՍ ԿՈՍՏԱՆԵԱՆ**

(ՀԱՏՈՒԱԾ «ԻՄ ԱՐԱՀԵՏՈՎ» ՅՈՒՇԵՐԻ ԱՌԱՋԻՆ ՄԱՍԻ ՀԻՆԳԵՐՈՐԳԻ ԳԼԽԻՑ)

Ուսումնարանի ուսուցիչներից Յովհաննէս Կոստանէանը բնագիտութիւն էր դասաւանդում, բայց սկզբից եւեթ յայտնի դարձաւ նորեկներէս, որ նա բանաստեղծ է, հին սերնդից: Նախ լսեցի, յետոյ էլ ինքս կարդացի երբեմնի աչքի ընկնող գրականագիտական ուսումնասիրութիւններից մէկում, որ նրա անունը դրուել է Յովհաննէս Յովհաննիսեանի, Յովհաննէս Քումանեանի եւ Աւետիք Իսահակեանի կողքին, իբրեւ որոշակի ժամանակաշրջանի գրական որոշակի տրամադրութիւնների արտայայտիչ: Նախորդ տասնամեակի տեղական ինչ-ինչ գրական ժողովածուներ թերթելիս, ի շարս ուրիշների, կարելի էր տեսնել եւ նրա անունը՝ ժամանակին յարմար բանաստեղծութիւններով:

Այժմ նա յառաջացած տարիք ունէր՝ 70ի շուրջ (գրաւոր աղբիւրներից մէկում ծննդեան թուական է ցոյց տրուում 1861ը): Բարձրահասակ էր, նիհար, ճերմակ ու երկար մաղերը ծոծրակի շուրջը փռուած, լայն ճակատով ու ակնոցներով: Փողոցով պատահարար կողքով անցնելիս նկատելի էի, որ միշտ խորատուզուած է ինքն իր մէջ, քայլում է շրջապատին անտարբեր, եւ չթունքները շարժում է՝ թե-

րեւս էլ խօսում իր հետ: Ուրիշներից լսեցի, որ իրենք էլ են նկատել մեր ուսուցչի ինքնախօսութեան այդ սովորութիւնը:

Մենք Կոստանէանին էլ կարող էինք տեսնել միայն դասերի ու դասամիջոցների ընթացքում: Այլապէս շփուելու ոչ մի պատեհութիւն չկար ու չէր էլ ենթադրուում: Ու երբեմն, կարճատեւ ու պատահական խօսակցութիւնների ընթացքում, շօշափում էր որեւէ գրական կէտ, այս կամ այն հեղինակի ու երկի առթիւ: Այդպիսի խօսակցութիւններից յետոյ է որ, օրինակ, տրամադրուել էմ կարդալու Չարլզ Դիկկենսի «Դաւիթ Կոպերֆիլդը», Վիլհելմ Պոլենցի «Գիւղացի Բիւտնեքը», Սամուէլ Սմայլսի «Քնաւորութիւնը», եւ այլն: Խօսակցութիւնները, իբրեւ կանոն, որեւէ առիթով էին պայմանաւորուած:

Այդպիսի մի «միջադէպ» անջնջելի է մնացել յիշողութեանս մէջ: 1935-36 ուսումնական տարում էր: Դասամիջոց: Զգիտեմ, ուսուցիչս ժամանակից շո՞ւտ էր ներս մտել, թէ՞ ուշացել էր դուրս գնալ: Իր սովորական տեղում էր գտնուում, սեղանի առջեւ աթոռին նստած: Մի քանի մետր հեռու, դասասենեակի անկիւնում, մի քանի հոգի վայրիվերոյ խօսում էինք

Ռաֆայելի Պատկանեանի մասին, երեւի «Հայ գրականութեան պատմութիւն» նշանաւոր շարքի լոյս տեսած միակ երկրորդ հատորի նիւթերի կապակցութեամբ: Պատկանեանը ուսուցչի ականջին հասաւ եւ նա միանգամից բառացիօրէն կերպարանափոխուեց: Մեր կողմը նայելով՝ բացականչեց. «Հա՛, Պատկանեան»՝ ինչպէս ինքն ինքն իր քանակ արտասանել նրանից: Չգիտեմ, քառակող սկզբնաւոր բանաստեղծութիւնը ծանօթ էր մեզ, թէ՛ ոչ, բայց խիստ պատկանեանական ոգի էր կրում: Եւ արդէն էականը դա չէ, այլ ուսուցչի յանկարծակի ողբերգութիւնը, ինչ իրենից դուրս յորդելը:

Մենք, ի Հարկէ, մեր ուշադրութիւնը կենտրոնացրինք նրա վրայ, նշնիսկ ծափի նման շարժումներ արինք, իսկ նա նայում էր մի այնպիսի՝ ժպտախառն Հայեացքով, որ կարծես ուզում էր ասել. «Հայպա՛, ի՞նչ էիք կարծում, այլերոտ տեսաք՝ ջրաղացա՞ն կարծեցիք»:

Որոշ դասեր կերտեցիք լսել էի, թէ մեր ուսուցչին իր բնակարանում, բոյսեր է անեցնում եւ կենդանիների որոշ նմոյշներ խնամում: Թէեւ բնատրի ու բնագիտութեան ուսուցչի համար նման մի նախասիրութիւն կարող է հասկանալի թուալ, բայց մեր պայմաններում դա ուղղակի անբեւեակայելի էր: Ինչպէ՞ս կարող է նա այդքան ազատ տեղ ունենալ իր բնակարանում — մտածում էի ես — երբ մարդիկ զլուխ դնելու տեղ չունեն, ամբողջ ընտանիքներով խցկուած են նեղ սենեակների մէջ եւ դա էլ մեծագոյն բախտաւորութիւն է համարում: Բացի այդ, բոյսերն ու կենդանիները խնամք են պահանջում: Մի միայնակ ծերունի ինչպէ՞ս կարող է դրանով զբաղուել: Բայց, ի՞նչ կարող ես անել, ուսանողներն ասում ու միմեանց էին հաղորդում, որքան էլ զարմանային:

1936-37 ուսումնական տարում, մեզնից մէկի նախաձեռնութեամբ, մի քանի հոգի որոշեցինք այցի գնալ ուսուցչի բնակարան, զանազան նիւթերի շուրջ խօսելու, ինչպէս եւ նրա բնասիրական հրապարակումները իրողութիւնը ստուգելու մտադրութեամբ: Ասուեց, որ

նման հանդիպումները շատ են ուրախացնում նրան: Պայմանաւորուեցինք եւ որոշուած օրը հասանք կայարանամերձ փողոցի վրայ գտնուող շէնքը, որտեղ սպրում էր նա:

Բակ մտնելուց յետոյ, երբ կիսաշրջան կազմող Հնարճ աստիճաններով սլօսի բարձրանայինք, ներթելում սպրող մի կին մեզ հաղորդեց հիւրընկալի յանձնարարութիւնը, որպէսզի զգուշութեամբ բարձրանանք, որովհետեւ աղմուկն անհանգստացնում է կենդանիներին: Ուրեմն, իսկուպէս մի բան կար: Եթէ ոչ այնքան, որքան որ ասում էին, այս գոնէ իր պարզագոյն մակարդակով: Բայց որտե՞ղ էին նրանք: Երեւի աստիճանները եղբրող պատի ետեւում: Մա՛նաւանդ՝ որ ներթելում ու վերելում կանգնածները ցուցամատերը այդ ուղղութեամբ էին պտրղում: Ուրիշ տեղ դժուար էր պատկերացնել: Դա, սակայն, ի միջի այլոց:

Ուսուցչի ընդունարանը պատըշրամբի նման էր: Մի կողմից բայց: Սեղանի շուրջ տեղաւորուեցինք, այդպէս մշաւով երեւի երեք ժամ: Երբեմն ինքը ներս ու դուրս էր անում խորքի սենեակը (կամ սենեակները), այնտեղից զբոբ բերում, ցոյց տալիս, խօսակցութեան ընթացքում արձարձուած որեւէ հարցի առընչութեամբ:

Մեր զրոյցն, ի Հարկէ, յատուկ ծրագիր չունէր եւ սահուն ընթացքի ոչ մի պարտադրանք: Բայց եւ այնպէս, իրերի տրամարանութեամբ ու «խօսքը խօսք է բերում» սկզբունքի համաձայն, ինչ-որ հունով էր առաջ դնում: Եւ այսօր կարելի է դա մտաւորապէս վերականգնել:

Պատերին կախուած էին շրջանակաւ պատկերներ: Դրանց մէջ յատուկ տեղ էր բռնում մի մեծացուած լուսանկար, երեւի 30 եւ 40 սանտիմետր յարսութեամբ կերպարներ, որի վրայ երևում էին երկու գլուխներ: Դրանցից մէկը ծանօթ էր՝ Աւետիք Թաւահեանն էր: Միւրը ինքն էր՝ Կոստանեանը: Եւ այդտեղ իմացանք, որ երկուսի մայրերը հարազատ ջոյբեր են:

Տեղին է նշել, որ հետագայում, Թաւահեանին վերաբերող լուսանկարների շարքում, այդ լուսանկարին ես երբեք չեմ հանդիպել: Նմանապէս, կենսագրական

նիւթերում ես չեմ նկատել որեւէ յիշատակութիւն այդ ազգակցական կապի վերաբերեալ:

Լուսանկարն ու ազգակցական կապի հանգամանքն էլ որոշեց գրոյցի սկիզբը: Անսովոր նորութիւն թուացուցի այն յայտարարութիւնը, թէ Իսահակեանի բողոք գործերն էլ անպայման ուժեղ եւ առաջնակարգ չեն, կան նաեւ թոյլ գործեր: «Արու Լալա Մահարի» պոեմի կապակցութեամբ ցոյց տուեց իր գրուածքներից մէկը, որն աւելի առաջ է գրուել ու նոյն գաղափարն է արծարծում, բնականաբար՝ աւելի համեստ ծաւայով ու ոչ նոյն թափով: Երբ խօսք եղաւ Իսահակեանի մայրական ու բանահիւսական խորք ունեցող բանաստեղծութիւնների մասին, ես այսպիսի մի միտք առաջ քաշեցի, թէ քանի որ Իսահակեանն այնքան կապուած էր իր մօրը եւ ժողովրդական բանահիւսութեանը, միաժամանակ, երբ իր մօրից էլ լսել է ստեղծագործութեան մէջ այնքան զգալի տեղ բռնող ժողովրդական գրոյցները:

Կոստանեանը ժպտաց ու բացատրեց. «Ո՛հ, նրա մայրը շատ բարի ու ազնիւ կին էր, բայց լիպու չուներ, ասել-թօսելը, գրոյցներ պատմելը նրա դորձը չէր: Ընդհակառակն, իմ մայրն էր օժտուած ժողովրդական գրոյցներ պատմելու շնորհքով: Եւ Իսահակեանն էլ նրանի՛ց է լսել իր լուծները»: Այդ բացատրութիւնն ամուր մնաց իմ մտքում:

Ապա խօսեցինք իր Հայրական բնտանիքի մասին: Արդէն գիտէի, որ Ալեքսանդրապոլում է ծնուել ինքը: Այժմ՝ իմացածս աւելի ընդարձակուեց: Պարզուեց, որ Հայրը՝ Յովսէփ Կոստանեանը քահանայ է եղել: Ուսուցիչն ասաց, որ իրենց ընտանիքի մասին բաւական խօսում է Դազարոս Աղայեանի յուշերում: Եւ իսկապէս, Հետազայում այդ յուշերը կարդալիս նկատեցի, որ մեծ գովեստով է խօսում Կոստանեան ամբողջ ընտանիքի նուիրուած ու բարեխիղճ Հանրօգուտ գործունէութեան վերաբերեալ:

Իմացայ նաեւ, որ մեծանուն Հայազէտ Կարապետ Կոստանեանը իր աւագ եղբայրն է: Պատմեց, թէ 1920ին ինչպիսի՛ պայմաններում է սովամահ եղել եղբայրը

Մոսկուայում: Ինքս իմ մէջ յուզուեցի ու միամտօրէն հարցրի, թէ «արդեօք չէ՞ր կարող այնտեղից հեռանալ», կարծես թէ ուրիշ վայրերը ապահով դրախտներ էին: «Ո՛հ, ինչպէ՞ս դուրս գար: Պատերազմ էր, բոլոր ճանապարհները փակ», — եղաւ պատասխանը: Այդքանն իմացանք Կոստանեան ընտանիքի մասին:

Այնուհետեւ խօսակցութեան հիմնական նիւթը իր ստեղծագործութիւնն էր: Մենք չէինք կարող որեւէ միտք յայտնել, քանի որ փաստօրէն անծանօթ էինք այդ ստեղծագործութեանը: Ուստի՝ կողմնորոշում էինք իր պատմածներով ու բացատրութիւններով: Այդ գրականութիւնը առաւելապէս քնարական էր, այլեւայլ զրուհորումներով:

Այդ ընթացքում Կոստանեանը ներս գնաց ու մի փոքրիկ գրքոյկ ձեռքին դուրս եկաւ, օդի մէջ դա թնթեակի թափահարելով՝ բացականչեց. «Ես նաեւ այսպիսի բաներ եմ գրել»: Ու պատմեց, որ դա տպուել է 1905 թուի յեղափոխութեան ժամանակ: Գրքոյկը երեւի ունենար 50-60 էջ: Յատուկ կազմ չէր երեւում, կազմն էլ էր թղթից, մի քիչ զեղնած: Նոյնիսկ չեմ յիշում, թէ հեղինակի անուն եւ հրատարակութեան վայր ու թուական կա՞ր: Բայց յիշում եմ երկու բառից կազմը. ամբողջ գրքով, որոնցից մէկը «Ազատութիւն»ն էր: Ուրեմն՝ «Ազատութեան երգեր» կամ նման մի բան:

Կոստանեանը այստեղից-անտեղից կարդաց մի քանի Հատուածներ: Եւ թերթատման ժամանակ կարելի էր նկատել, որ տողերն աւելի երկար են, քառատողերը լեցուն ու հիւթալի, բովաղակութիւնը՝ մարտաշունչ օրերին համապատասխան:

Այդ կապակցութեամբ պատմեց, որ իր ազգականներից մի շարք երիտասարդներ յարել են բոլշևիկներին: Ու սկսեց անուններ տալ: Առաջին անունը «Սուրէն» էր, եւ միտքս դրանով էր զբաղուած, թէ դա ո՞ր Սուրէնն է, Հանդրադառնալով, որ անպայման Կոստանեան չպէ՛տք է լինէր: Այս վիճակում, միւս անունները հասան ականջիս, բայց ո՛չ գիտակցութեանս ու յիշողութեանս:

Իննաստեղծի ստեղծագործութեանը մօտաւորապէս ծանօթանալուց յետոյ,



Հարց տուինք, թէ արդեօք Հնարաւոր չէ՞, որ այդ ժառանգութիւնից որեւէ ժողովածու Հրատարակուի: Պատասխանեց, որ՝ «այո՛, այդ ժառանգութիւնը կ'ընէ: Աւագանք, որ ինքն ու գրականագէտ Սիմոն Յակոբեանը վաղեմի ծանօթներ են: (Յակոբեանը Նրեւանու մն էր): Արդ, նամակ է գրել նրան, հարցում անելով, թէ ինչ կարելի է անել նման մի ժողովածու կազմելու համար: Յակոբեանը պատասխանել է, որ այ՛ո, լաւ գաղափար է, ինքն անձամբ կը գրադուի դրանով, կը կազմի եւ նախարան կը գրի: Բայց դրանից առաջ նախընտրելի է, որ բանաստեղծն ինքը ներկայացնի ժողովածուի նախնական օրինակը:

Այդքանը պատճէկուց յետոյ, ուսուցիչը դարձեալ սենեակ մտաւ եւ ապա վերադարձաւ մի քանի գրքերով: Դրանք իր՝ 1916ին տպուած ու բաւական ստուար «Որոշումներ եւ վարածումներ» գրքի օրինակներն էին, որոնք նուիրեց մեզ, պատուիրելով, որ կարդանք եւ մեր ապագայութիւններն ու դիտողութիւններն իրեն յայտնենք, նշելով, թէ բանաստեղծութիւններից որո՞նք են, մեր կարծիքով, համապատասխանում մեր օրերի պահանջներին: Ուշադրութիւնս գրաւեց նրա մակագրելու եղանակը, որովհետեւ առաջին անգամն էր, որ մի Հեղինակ գիրք էր նուիրում ինձ, այն էլ՝ սեփական ձեռքով մակագրում: Նա իր ապագիք անունազգանունից յետոյ գիծ քաշեց ու աւելացրեց «ից»: Ապա՝ մի քանի բառեր ու թուական:

Մեր ուսուցիչը տարեց ու միայնակ մարդ էր: Ի միջի այլոց, Հարց եղաւ նաեւ, թէ ինչու է մենակ մնացել ու չի ամուսնացել: Փանի որ մեզ մօտ ամուսնութիւնը շատ անսովոր ու բացառիկ երեւոյթ էր: Կոստանեանը թեթեւակի յիշեց, որ ժամանակին ինքն էլ է սիրած աղջիկ ունեցել, որը, ցաւօք, վաղաժամ վախճանուել է: Դրանից յետոյ ինքը չկարողացաւ չիովին ուղիք գալ: Յետոյ էլ՝ պատերազմներ, յեղափոխութիւններ, խառը վիճակներ: Ուստի եւ՝ ինքը ժամանակ չունեցաւ մտածելու այդ ուղղութեամբ:

Եւ անմիջապէս աւելացրեց. «Բայց երբ նայում եմ շուրջս ու տեսնում ուրիշ-

ներին, արտասույտ շատ բան չի ծնում: Օրինակ, մեր Սարուխանեանը»: Այնուհետեւ պատմեց, որ նա էլ աղայ-գաւազներ ունի, ինքն իրեն շատ բանից գրկեց, բայց ինչ էլ կրթութիւն տուեց: Իսկ Հիմա նրանք իրենց հօրը չգիշէ, ոչ մի բանի տեղ չեն դնում: Դա, ի հարկէ, նորութիւն էր ինձ համար, նաեւ միւսներին:

Սարուխանեանը մեր ուսուցիչներից էր: «Դպրոցական առողջապահութիւն» առարկան էր դաստանդում: Առաջին անգամ դասարան ժողովով՝ նա ներկայացրեց իր առարկան ու անցաւ բուն նիւթին՝ «Սկսենք եղունջներէց»: Եւ այդ արտայայտութիւնը թեւաւոր խօսքի կէտ ձեռք բերեց: Ուսանողները զրոյցի ընթացքում, յարմար դատած ժամանակ, մէջ էին դնում՝ «սկսենք եղունջներէց»:

